

891.71.82

Z-79



Հ. Ա. Խ. Հ. ՀՈԽՍԺՈՂԿՈՄԱՑ

ՍՊՅԱԼԱԿՈՆ ԳՈԼՈՏԵՐՈՎՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ն Մ Ո Ւ Ճ Ն Ե Ր  
Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն  
Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

ԱՇԽԱՏԱՆՔԻ II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ VI ԽՄԲԻ,  
ԲԱՆՖԱԿՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Ո Զ Մ Ե Ց Յ Ե Ռ Ո Ր Ե Ն Ց

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929

891.71-82  
Q=79

Հ Ը - 7

7011

91-29

# ՆՄՈՒՇՆԵՐ

## ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ՊՐԱՎ գ.

ԿԵԶՄԵՑ ՅԵ. ԶԱՐԵՆՅ



ՊԵՏԱԿԱՆ ՀՀԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. — ՅԵՐԵՎԱՆ. 1929

ՄՈՐԿ ԿՈԼՈՍՈՎ

## ՏԱՄՆԵՐԵՔ ՏԵՐԵԿԱՆՆԵՐ

Պատմվածք

1.

Վայնկան տասներեք տարեկան է, ու տասներեք տարեկան լինելն զգացվում է նրա ամեն ինչից: Ինչպես տասներեք փոքրիկ դեղեր՝ թռչկոտում են նրա տասներեք տարիները, յերբ Վայնկան ուրախ է, և լուռ կծկվում են նրանք, յերբ նա տիսուր է լինում:

Ինքը Վայնկան ել է փոքրիկ, վտիտ—բուրդը թողած կատվի ձագի պես,—կարծես իր տասներեք տարիների զոհը լինի: Այդ նա չի բաժանմունքից-բաժանմունք անցնում, ծղրտում և ամեն մի հանգիպողի ձեռք սեղմում, յերբ իրենց գործարանից Մոսկվայի Խորհրդում կոմունիստ պատգամավոր է ընտրվում:

Այդ նրա տասներեք տարիներն են անում:

Իսկ ինքը Վայնկան հանգիստ է. հանգիստ, համեստ ու անվտան:

Յեվ յեթե պատահում է, վոր գործարանի գլխին կախվում է փակլելու փոթորիկը—Վայնկան իր վողջ ելությամբ զգում է, թե ինչպես են անհանգստանում իր տասներեք տարիները, և դրանից նրա վողորկ մանկական ճակատին գորշ ձորակներ են գոյանում, ու այսո միջանցքներում նրա կոկորդի բոժոքիկները չեն զնդզնդում: Լուռ ստվերի պես և թրեռում կապույտ յուղոտած վերնաշապիկ հագած տղան ու չգիտե՝ թե ուր չըփի:

Կառավարչի մոտ վախենում է զնալ Վայնկան, թեև գիտե, վոր նա կարմիր կառավարիչ է, բրենցից,—բանվոր և կոմունիստ:

Առանձնասենյակը մի տեսակ ճնշում է նրան իր տեսքով: Լըրջություն ու խստոթյուն են փչում նրանից ու թվում է, թե պատերը գալիս մոտենում են իրար և ուր վոր ե պիտի թափվեն փոքրիկ Վայնկայի գլխին ու ձխլեն նրան: Իսկ պատերին՝ «Կարճ խոսք», «Ժամանակը վոսկի յե» և ելի ուրիշ շատ լոզունգներ են փակցված: Ինքը ծեր կենինը, թանգաղին ու հարազատ Վլադիմիր Իլին ել է նրանց շարքում ու ժպտալով հարցնում է.



22188.59

— Վայնկա, ինչու յես յեկել: Այսպես-այնպէս լինես դու, մի խանգարի կառավարչին...

Ու միջանցքով գեղի բակ ե զնում Վայնկան, բակից արհեստանոց ե անցնում ու այնտեղից ել կողքի շենքը, վորի փոքրիկ դուն վրա մեծատառերով գրված են

ՈԿՅԵՄ ԲԶԻՋ

բառերը:

Վայնկան տասներեք տարեկան ե, իսկ կանոնադրությամբ տասնըշորս ե պահանջվում: Հենց այդպես ել գրված ե. միության անդամ կարող ե լինել ամեն մի անչափահաս բանվոր, սկսած տասնըշորս տարեկան հասակից:

Իսկ այժմ կարելի յե խորհրդակցական ձայնի իրավունքով ընդունել: Այս, ինչպես չի սիրում խորհրդակցական ձայն ունենալ—խիստ վիրավորական ե: Գրիշան, չե՞ վոր վճռական ձայն ունեցող անդամ ե, մինչդեռ միենուն դասարանում և միենուն արհեստանոցումն են... Ֆեղկան, Սենկան, Վասկան, Ստենկան, նույնպես և Վայնկա Լոլոզը—ինչով են լավ իրանից:

Վողջ դժբախտությունը տասներեքի մեջ ե:

Յեվ յերբ վոր պատահում ե ժողովում բանաձեռ հանում, և ձեռքերի անտառ ե բարձրանում գլուխների շիկահեր մամուռի վրա—ամբողջ սրտով ուզում ե, ուզում ե ձեռքը մյուսների պես բարձրացնի, բայց վախենում ե—նրան թվում ե, թե բոլորն ել իրեն են նախում և իսկուն պետք ե ասեն. «Վայնկա, մի մոռանա կանոնադրությունը»:

Յերեկոյան ընդարձակ ակումբում ժամանցի յե հավաքվում վողջ գործարանը: Մեծերն ընթերցարանում լրադրով են զբաղվում, յերիտասարդությունն ել՝ ով ինչով կամենա:

Առաջին հերթին աղջիկներն են դրադարան մտնում:

— Մի լավ վեպ տվեք:

— Սա ի՞նչ նորություն ե:

Լոռում են, Մանկալի յետեն են պահվում: Իսկ Մանկան հանդուզն ու նազկոտ ձախով ասում ե.

— Վեպ ենք ուզում, ելի՛, այնպես, վոր հետաքրքրական լինի ու մեջը սեր...

— Գժվել ես, ի՞նչ ե, գիտես, չե՞, վոր դրանք մեղ համար չեն, այ գիմնազիալի աշակերտուհիների համար:

— Բայց մենք ինչով ենք վատ գիմնազիալի աշակերտուհիներից:

— Դե, շուտով հեռացի՞ր:

Մանկան արագ ծլկվում ե դահլիճ, իսկ նրա յետեկից, պոչի պես, մասցածները:

Դահլիճում կիսամուլթ ե: Քարտերի, պլակատների և կոչերի շարքում աչքի յե ընկնում «Աշխատանքի որենքների ժողովածուն», խակ «Ժողովածու»-ի առաջ ջահելների մի խումբ Միտրիկի պատմությունն ե լսում: Միտրին՝ «Բյուրո»-ի առաջին անդամն ե: Միտրին աստծու մասին ե խոսում: Ու թվում ե, թե Միտրիկի գանգում գինամոյ յե գրված, ու դինամոյից բարակ անտեսանելի լարեր են անցնում գեպի իր շուրջը վիտացող տասնհինգ գլուխները: Ուղեղների մեխանիզմը պտույտ ե գալիս:

— Միտրի, հեղափոխության են վառ պատմություններից պատմի...

Գիշերը մութ, մգլած սենյակում քնած ե Վայնկան Միտրիկի հետ միասին միենուն մահճակալի վրա: Միտրին քաղցր ու խորը քնած ե, նրա տաք քթի ուսնգերը լայնանում ու նեղանում, գոլ շունչ են արձակում:

Յերկար նախում ե Վայնկան յեղբոր վճռական գեմքին, ագանությամբ նրա սրտի զարկերն ե վորսում, ծանր ողն ե շնչում և մեղմ ձախով ասում ե.

— Միտրի, այ Միտրի...

— Ի՞նչ ե:

— Յես են բջիջի...

— Հը, ի՞նչ ե. ելի՞ դպրոցը... վաղը, վաղը...

— Զե, զրա մասին չե, յես...

— Միենուն ե—վաղը. թող քնենք...

— Ինչու անպատճառ տասնչորսից:

— Ինչն ե տամնչորսից:

— Կանոնադրության մեջ...

— Ի՞նչ կանոնադրություն:

— Ռեկեմի...

— Ռեկեմի կանոնադրության մեջ այդ նրա համար ե գրված, վոր քեզ պես փիշուլները գեպի միություն չվագեն: Հասկացար:

— Հասկացար: Բայց, Միտրի...ինչով եմ յես վատ ուրիշներից:

— Միտրիկի ձախոր չար ե և դժգոհ:

— Զի կարելի... գիտես, վոր չի կարելի, լակոտ, ելի ուր ես քիթդ խոթում... Քոքել ե իր դուդուկն ու ել վոշինչ չի ուզում լսել... Քնիր, ասում եմ, ու զուր տեղն ականջներս մի տանի...

«Մւռւհ... անիծյալ»... ջղածգվում են Վայնկալի մտքերը, հանգուզն ու չար: Ծանրացել ե գլուխը և նույնիսկ կուրծքն ե ձնշում:

— Հավ, Միտրի, լավ: Դեռ ակտիվիստ ել եւ:

Ուշ գիշերով քամին եւ զունում զողջ շրջակալքովը մին, պարում եւ ասես մի մոլեգին կոմիտատական: Աստղերը զանազան ձեւվերով են թարթում—մեկը համաձայն եւ, մյուսը վոչ, ու ժողովը առավոտվա դեմ եւ վերջանում:

Յեվ յերբ այլև վոչ քամի կա ու վոչ աստղեր, և թանձը մշուշն եւ սքողում յերկնքի լսարանը—սև կաշե բաճկոն հազած Պետրոն ձգում եւ գործարանի բարակ ջիղը, ու զոռում եւ գործարանը իր գործարանային կոկորդովը մին.

— Ու... ու... ու... ու...

Կամացուկ վոտօի յե յենում տան մալրը: Մլուս սենյակից նրա դպրոցի և քաղցր հորանջի ձայնն եւ լսվում.

— Ո՞՛ֆ-՛ֆ-՛ֆ... Մեղա քեզ տեր:

Սպիտակ ստվերներ են սողում պատերով. լուսեղեն գոլորշիներով գեղի կարնիզներն են բարձրանում, Մարբսի միրուքի մեջ են խճճում: Փորձով գիտե վայնկան ու սպասում եւ, վոր ահա կը դարթնի հալրն ու կասի փափկությամբ «Կնիկ, ա կնիկ, հեշտայելը դնես», իսկ հետո, ավելի բարձր ձանով՝ «Ե՛, կոմսոմոլ, վեր կաց, տես, մերդ մեզ համար եւ չարչարվում»: Ու թվում եւ վայնկային, թե հայրիկը դիտմամբ եւ ձկոմսոմոլը բառն ասում... ԶԵ վոր լավ եւ իմանում, վոր վայնկան առմս չունի:

Առավոտյան դժում եւ հեշտայեռը, կարծես իին կարիչով յերկաթ են կտրում, առավոտյան լուսամուտների ապակիների վրա քրտինքն եւ մնացել անցած գիշերվա: Հայրիկն ու Միտրին թել են խմում և խոսում են կուսակցական աշխատանքի մասին: Մալրը ձեռքերին եւ հենել ծնուալ ու վայնկային եւ նայում: Մալրիկի աչքերը քաղցր են, փաղաքշող.

— Խմիր, խմիր, վանուշ, հացով խմիր, վորդիս: Բոլորովին լզարել ես դու ձեր եղ Ռիլեմ. ում...

Վայնկայի սրտում վիրավորանքը յեռացրած ջրի պես թշում է: Ախ... ինչ ատելի յե մալրիկն իր փաղաքշանքներով, իր հոգատարությամբ, ինչքան եւ ուզում վայնկան հոր ու յեղբոր խոսակցությանը մասնակցել:

2.

Ժամանակը, այդ ահաղին Լիվերսը\*, որերի անվերջ ժանյակն ենուսում: Սպիտակ ու կարմիր շերտերով ձգվում, համաշխարհային դլանակի վրա յե փաթաթվում ժանյակը:

\* Լիվերսը ժանյակների գործարանի գլխավոր մեքենան եւ:

Իսկ հազարավոր կենդանի մարդիկ կոճ-առ-կոճ կծկում են իրենց ուժերը, բարակ թելերի պես ձգվում, հյուսվում են կյանքի շարժվող ժանյակին: Ում թելը պրծավ-դուրս կզցեն մեքենայից: Նոր թարմ կոճեր, վարդագույն մետաքսե թելը վրաները—նում նյութերի բաժնում հերթի յեն սպասում:

Քաղզբագիտության ուսուցիչ Ֆլոդոր Իվանիչ ընկեր Ռոդինն ասում ե, վոր կյանքը դեպի կոմունիզմ ե գնում: Յեվ կյանքի լիվերսը բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչ կոմունիստներն են բանեցնում: Մեկ մեկու զոդված այդ մարդիկ ամուր, պողպատե սանրով միլիոնավոր թելեր են սանրում, ամենաբարդ նախշեր են տալիս նրանց:

Իսկ ամենագլխավոր ջուհակը Վաղիմիր Իլիչն ե...

Դժվարություն են քաշում յերբեմն կոճերը, գժվարություն ե քաշում պողպատե սանրը, գժվարություն են քաշում ոգնականները, բայց ամենից մեծ գժվարությունը՝ գլխավոր ջուհակն ե քաշում: Շարժվում են անիվերը, վրփուրի մեջ չփշվում են պտուտակները, համաշափի կերպով տրոփում են հաղորդիչները, շրջում են կաշվե ուղիները: Թելի փոշի յե բարձրանում, գեմքերին ու վերնաշապիկներին նստում, թունավորում ե ջուհակների մարմինները: Մեկ ել տեսար մի ինչ-վոր բան ճշկրտաց, պալթեց—ու կանգ առավ հսկայական մեքենան: Միան գլխավոր ջուհակն ե, վոր չի այլալվում և մեկ ել նրա ոգնականներն են անհողողողդ մնում:

Գիշերը սև մգլած սենյակում իր յեղբար Միտրիի հետ միկնույն անկողնում ե քնում վայնկան: Բնած ե վայնկան: Յերազումտեսնում ե, իբր թե լիվերսի բաժանմունքին հսկայական զորության մի շոգեկառք մոտեցավ: «Վունտ», մոնչաց, շարժվեց, գնաց, գնաց դեպի Մոսկվա գետը, գետն ել ամենակին գետ չի, այ ծով ե, սոցիալիստական հեղափոխության ծով: Շոգեկառքն, առանց մտածելու, ալիքների մեջն ե մասնում: Ալիքները բարձրանում, տանիքի վրայով մյուս կողմն են թափում, շոգեկառքի ներսն են վողողում: Հնոցի բոցը բորբոքվում ե, ծովի ազան լեզուներն ե ալրում, և թշում, թշում են ածուխի կտորները:

Իսկ հնոցպանը վայնկան ե:

Բշտիկներ են բարձրանում կաշու վրա, և ալիքները, սպիտակ բլրակների պես, վրա յեն տալիս, լիզում, պալթեցնում են այդ բշտիկները: «Ախ... ինչ լավ կլինի հեռանալ այս անիծյալ հնոցից, ալիքների գիրկը նետվել, զովացնել մարմինը»: Բայց մի ձայն կանչում ե վայնկային:

— ՀԵ, հոգնեցիր, ընկեր Նազարենկո (Վայնկալի ազգանունն ե):  
 Նայում ե և ինչ տեսնի. - Լենին ե:  
 Սրտում փրփուր ե բարձրանում. Դեեր են թռչկոտում փըր-  
 փուրում.  
 — ԶԵ, չեմ հոգնել, ընկեր Լենին:  
 — Իսկ ինչ ես կարծում, շոգեկառքը մինչև կոմունիզմ կհասցը-  
 նենք:  
 — Կհասցնենք, ընկեր Լենին:  
 — ԴԵՇ, յեթե այդպես ե, արագ շարժվիր, քիչ ե մնացել...  
 — Պատրաստ ե, ընկեր Լենին:  
 Բշտիկներով ե ծածկվել կաշին. սպիտակ բլրակների պես վրա  
 յն տալիս ալիքները, լիզում, պայթեցնում են բշտիկները:  
 Հանկարծ-կանգ ե առնում. շոգեկառքը... կղզի յե:  
 Կղզում ամառ ե: Արեի լույսն ե ծորում: Զեփյուռն ե շոյում:  
 Բողբոջների մեջ են տները: Տներից ինչ-վոր մարդիկ են դուրս  
 դալիս:  
 — Բարե՛ ձեզ, ընկեր Լենին, իսկ այս ձեր հետի տղան ով ե:  
 — Սա կոմիերիտական Նազարենկոն ե:  
 — ՎՇ, յես կոմիերիտական չեմ ընկեր Լենին—կանոնագրու-  
 թյան պահանջման մի տարով փոքր եմ:  
 — Ա՛, այդպես ե, հա  
 Յեվ հանկարծ հանում ե Լենինը մի բոլորովին նոր կոմիերի-  
 տական տոմս և Վայնկալին ե տալիս: Վայնկան այդ տոմսում  
 տեսնում ե իր ազգանունը, անունը... Այս...  
 — Վայնկա, այս Վայնկա:  
 — Ի՞նչ ե, ընկեր Լենին:  
 Տրորում ե քնաթաթախ աչքերը և Միտրին ե տեսնում:  
 — Ի՞նչ լեզավ տոմսը, տոմսն ուր ե:  
 — Ի՞նչ տոմս:  
 — Միութենական տոմսը:  
 — Ում:  
 — Իմ:  
 — Վարտեղից եր:  
 — Ըսկեր Լենինն եր տվել...  
 Յեվ հանկարծ հասկանում ե Վայնկան, վոր յերազում ե տեսել  
 Լենինին ու այնա վոշինչ չկա:  
 Դառնությամբ պատմում ե Միտրին:  
 Միտրին սրտաշարժվում ե:  
 — Տեսնում եմ, Վայնկա, վոր դու լավ կոմիերիտական ես լի-  
 նելու: Միտրին թե յես ել հիմա քո դրության մեջ եմ — դու կոմի-

րիտմիություն ես մտնելու, իսկ յես՝ կուսակցություն... Քեզ պես  
 յես ել եմ տանջվում, տարիքով պակաս ե, ասում են...

Մեղմ զողանչի պես արձագանքվեցին Վայնկալի սրտում յեղ-  
 բոր խոսքերը:

— Ճիշտ ե, ճիշտ, Միտրի, մեզ ուղիղ մեկական տարի յե  
 պակասում: Արի պայման կապենք — գալ տարի յերկուսս միասին  
 մասնենք:

— Համաձայն եմ:

Մինչև լուսաբաց տերեների պես շրջեցին նրանց լեզուները:  
 Նորից ե դժուռմ հեշտայեռը, կարծես կտրիչով յերկաթ են  
 կտրում նորից լուսամուտների ապակիները քրանած են: Հալրիկն  
 ու Միտրին լուսությամբ Վայնկալի յերազն են լսում:

— Ո՞ֆ-ո՞ֆ-ո՞ֆ... — մայրը յերեսն ե խաչակնքում: — Համա  
 յերազներ ես տեսնում, հա:

Յերկուղածությամբ Վայնկալի առաջ նորից հաց ե դնում:  
 Վայնկան բոլորովին չի տեսնում մորը, չի նկատում նորն ու  
 յեղբորը:

— Այ, այսպես, կանգնած եր նա և ասում եր. «Ի՞նչ ես կար-  
 ծում, ընկեր Նազարենկո, կոմունիզմին կհամենք, թե վոչ»:

«Կհամենք, ասում եմ, ընկեր Լենին»:

Յեվ-մի բան, վոր յերբեք չեր պատահել Վայնկալի կյան-  
 քում — զգաց Վայնկան, վոր յերկարեց հալրիկի ուժեղ ձեռքը, սկ  
 ցախակելի պես ծակծկող միրը մազերն իրար զիպան:

Յեվ նրա այրվող շրթունքները չըթ-չըթ համբուրեցին Վայն-  
 կալի փոքրիկ ճակատը:

3.

Մոխրագույն հալած ոետինի պես ուռչում են ամպերը յեր-  
 կնքի շուռ տված կաթուայում, շրջակալքի գորշ դաշտի վրա յեն  
 կախվում: Թվում ե, թե իսկուն պիտի պոկվեն, շրջալով թափ-  
 վեն ձյունի սառած շեղջի վրա:

Իսկ հետո ամառը կզա, վորպես մի ջահել ջուլհակ կին. գույն-  
 ըդույն շրջազգեստը հագին և խսիտով մանվածքը գրկին: Ծեր այ-  
 գին կըրդուտի ինչպես կարլ Մարքսը, գանգուրներն ու միրուքը  
 կոլորի... եքսկուրսիաների ծալը կրացվի: Յերիտասարդությունը  
 զեպի իր յենթաշենք ժողոմախորհը կերթա: Կհանգստանան կոշտա-  
 ցած ձեռքերը, ուղեղներում նստած հոգսերը կթեթհանան, տղա-  
 ները զնդակ, վեգ, պահմտոցիկ, փուտրոլ կվաղան... ու մեկ ել  
 տեսար աշուն ե, աշուն, — և ինքը — տամնչորս տարեկան:

Գործարանալին կոմիտեի պատշգամբում վողնու պես կուչ ե

յեկել Վայնկան: Վայնկայի սրտում—ինչ վոր թրթիռ կա, բայց թե ի՞նչ—հայտնի չե: Մարտի ոդը ցրտություն և փշում մամնին, իսկ մարմնի ներսում—տաք խոխոջուն ուրախություն կա:

Տասներեքն արգեն նախազգում են տասնչորսի գալուստը: Համա թե տոն ելինելու, հա: Վայնկան ու Միտրին կզնան հայրիկի մոտ ու կասեն՝ «Ծնորհավորիք ընկեր Ալեքսեյ, քեզ ել, վորդիներիդ ել»: Ճիշտ այդպես կասեն: Յեկ տանը յերեք տոմս կունհնան, վոչ, չորսը՝ Միտրին մինչև քսանյերեք տարեկան դառնալը դեռևս կոմիտական ե մնալու—միտժամանակ թե կուսակցական, թե կոմիտական:

Յեկ յեթե պատերազմ ծագի, Վայնկան կասի հորը, ինչպես մի ժամանակ Միտրին եր ասում, «Ընդհանուր ժողովի վորոշման համաձայն՝ գնում եմ պաշտպանելու հեղափոխությունը»:

Յեկ հայրիկը կասի. «Գնա»: Վորովհետև նա կուսակցության անդամ ե, վորովհետև նրա ձեռքերը կը ակի գույնի կոշտվածքներ

Յերեկի մայրն ե միան, վոր լաց կլինի ու անվերջ կը կնի. «Ախր դու դեռ բոլորովին փոքր ես» Յեկ այդ կվիրավորի Վայնկային:

Բայց չե, մայրն այդպիսի բան չի ասի, վորովհետև Վայնկան արգեն մեծացած և տասնչորսը լրացրած կլինի:

Քամին մեղմությամբ յերկը յերեսին մթնշաղի քողն եր փոռում, իսկ քողը չեր փռվում, խուսափում եր—մինչև վոր քամին կատաղեց:

Քամին կատաղեց ու մթշաղն իջակ, իսկ գործարանից բանվորներն ելին տուն դառնում, և քամին բանվորներին դեպի տուն եր քում:

Ցուրտ ոդում դեռևս շարունակում ելին մարտնչել յերկու յեղանակները. մեկը ծեծված, վշտալի, գետնաքարշ և հայցող, մյուսը՝ ծեծող, փոթորկու և ամեն խնդիրք ու հայց մերժող: Թվում եր, թե նրանք յերկում ել կանչում ելին—մեկը դեպի հետ, գեպի աշուն, մյուսը դեպի առաջ, դեպի գարուն:

Արհեստանոցից խառաս վոլովինը կամաց քալերով դեպի դարպաւ եր գնում: Վայնկային տեսնելով, աչքով արեց ու կանչեց:

— Վայն-կոնց...

Վայնկան ցատկելով դեպի խառասը գնաց, նրա ձեռքը բոնեց, փաղաքշեց:

— Հորեղբայր, մանում եմ...

Վոլովինի դեմքին խորամանկ ժպիտ խաղաց, սպիտակ ատամ-ները վոնց-վոր սաղափի շար:

— Շատ յերկար ե տեսում:

— Չե, հիմի Միտրիի հետ միասին...

— Ի՞նչպես Միտրիի հետ, յերբ վոր նա ակտիվ անդամ ե:

Չե, մենք պայմանավորվել ենք դալ տարվա համար, նաև կուսակցություն, յես՝ յերիտմիություն. ինձ ել, նրան ել մի-մի տարի յե պակասում:

— Անա թե ինչ. խոսք եք տվել իրար, հա:

— Այն. և նույնիսկ միենանույն որը. բայց գլխավորն այն ե, հորեղբայր Վոլովին, վոր հիմի ել ենքան վիրավորական չի-կնշանակի, մենակ յես չեմ եղակես...

— Այս դու կաթնակեր, միթե դրանովքո վիշտը թեթևանում ե: Շփոթվեց, կարմրատակեց Վայնկան, իսկ հետո՝

— Իհարկե, թեթևանում ե:

Կոշտ, մեծ մատները, տաք, տաքուկ մատները Վայնկայի ականջակոթերն են շփում, դեպի վիզն են անցնում, այտերն են կսմթում:

— Ե, Վայնկա... ինչն ե ձեզ դեպի կոմյերիտմիություն քաշում. միայն այն, վոր բոլորն են կոմյերիտական:

Վայնկայի մտքերը վոնց վոր բարակ ունդավուշ, իսկ ճակատին նույնիսկ հաղորդիչ ելեկտրալարերի պես են կուտակվում:

— Վո՞չ, հորեղբայր Վոլովին, դրանից չի, այս... գուցե չեմ իմանում, չեմ կարող ճշտությամբ ասել, բայց գլխավորն են ե, վոր ճառախոսն ասավ, թե կոմսոմոլը յերիտասարդության ուղեղն ե: Ուղում եմ, հորեղբայր Վոլովին, եդ ուղեղի մեջ լինել...

#### 4.

Կիրակի, յերկուշաբթի, յերեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և նորից կիրակի, նորից յերկուշաբթի-ձգվում, յերկարում ե որերի ժանյակը:

Ահա պտտվեցին—յեկան պայծառ խայտաբետ որերը: Կոմյերիտական ծննդի տոնն ե. կարնավալ կաղմած՝ դիմավորելու յելան: Վայնկան սատանի դիմակով՝ փոքրիկ, սկսուկ սատանի դիմակով, Ֆեղկան՝ սարկավագի, Միտկան՝ տերտերի, Միտրին՝ կախարդ կնոջ... ում ինչ դիմակ հասավ:

Ցատկուսում ելին վագստալով, զբնգուն ձախներ հանում, յերգում, պարում ելին:

Առավոտը ուայոն գնացին: Հանդիպեցին: Իրար խառնվեցին: Հեղեղի պես փողոցով, մալթով հոսեցին: Իսկ իրիկունը յերեկութ կար:

Անցան տոները, վրա հասավ կամպանիան: «Նավատորմի» կամպանիա յեր կոչվում: Յեկավ մի պորտֆելավոր ընկեր, ընդհանուր ժողովի կանչեց բջիջին, ընդհանուր ժողովի կանչեց բջիջը գործարանի յերիտասարդությանը: Ընկերը շեֆության մասին խոսեց: Հետո մի վոսկեատամ ծովացն յեկավ, նավատորմի դրության մասին խոսեց: Վորոշեցին ոգնություն ցուց տալ մարդով և փողով:

Մարդկային ոգնությունն են յեղավ, վոր Սենկային տվին: Զեռքերի վրա բարձրացրին Սենկային բջիջում, ձեռքերի վրա առան նրան ուայոնում, ձեռքերի վրա ճոճեցին կարմիր հրապարակում Յեկ դրանից հետո Սենկան հարբածի պես եր շրջում:

Աղջիկները մոտենում, անհանգստացնում ելին, նավաստիական շորերն ելին դիտում...

Նայում ելին նրան ծեր բանվորները, ասում ելին՝ «Միայն սրանը կարող են փրկել նավատորմը»:

Մի խոսքով, Սենկան հերոս եր դառել:

Սենկային մինչև կայարան ճանապարհեցին: Խրատեցին. ասին՝ «Մեզ ամոթով չթողնես»: Խոստացան նվերներ ուղարկել, խնդրեցին, վոր նամակ գրի: Հուզված եր Սենկան և ել առաջվա հպարտությունը չուներ: Խոստացավ բջիջի պատիվը չզցել:

Մնաս բարնվ, Մոոկվա, քո կոմսոմոլով,— գնում եմ նավաստի դառնամ իմ կամքով:

Յեկ յերբ ուրախության հարբածությունն անցավ, նորից սկըսեց մտածել վայնկան՝ շնուր ե գալու արդյոք եղ աշունը և իր առմսը:

Արհեստանոցի աչքի ընկնող տեղում ծեր Պետրոն կպցըել եր՝  
ԿԱՌԱՎԱՐՈՒԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վ. Ի. Լենինի առողջությունը նկատելի չափերով վատանալու պատճառով, այսորվանից սկսած նրա առողջության մասին բյուլետեն ե հրատարակվելու»:

Այդ աչքի ընկնող տեղի առաջ վաղ առավոտից սկսած մարդիկ են խոնվում: Կարդում ե լուռ հեռանում են: Կնճոստվում են ճակատները, կուչ են գալիս ուսերը, սառչում են աչքերը կոպերի տակ:

— Վատ ե վաղիմիր իլիչի առողջությունը...  
— Վատ ե...

Իսկ ՌԿՅԵՄ բջիջում կարդում ե քարտուղարը.

ՈԿԿ 25. ամյա հոբելյանի մասին:

Կոմիերիտամիության լավագույն նվերը կուսակցությանն այն կլինի, վոր նա իր բանվորական բջիջներից ընտրովի տղաներ մտցնի կուսակցության մեջ:

Մ. Կ. Քարտուղար:

Այդ որը գործարանում գործ անել չեր լինում: Բանվորուհիների ձեռքերում թելերը կտրատվում ելին և ժիր ձեռքերը չելին կարողանում հաղթել կվչուն պողպատե սարդերին\*): Զուլհակները նախշը ուղիղ չելին կարողանում տալ, մեքենաները կանգ ելին առնում և վարպետների սրատես փորձված աչքերը չելին կարողանում մեկ անգամից գտնել նրանց խանգարվելու պատճառը:

Արհեստանոցում, կոճակի բաժնում, գործարանի մյուս բաժնմունքներում նույնիսկ ծեր գարբինը, այդ բրդոտ, մազոտ մարդը, վոր յերբեք իր գործիքներից զատ ուրիշ վոչ վորի հետ չեր խոսում, նույնիսկ նա անմասն չմնաց: Դարբինը խանձեց իր միրուքը, վորից հետո ասավ վայնկային,

— Ե՞ն, բանս առաջ չի գնում:

Յեկ ապա, հոնքերը կիտելով և կրակի առաջը կտրելով՝ վրա բերեց:

— Լսիր, տղա. թեկ դու կոմցոմոլ ես և ամեն ինչից, ինչպես և աշխատանքից, գլուխդ վոչինչ չի մտնում, բայց ելի քեզնից եմ հարցնում, ենդուր վոր ամոթ ե, վոր ինձպես հալիվորը հասակավոր կոմունիստներից հարցնի: Զեմ սկրում յես դրանց - դրանք իսկական կոմունիստներ չեն, մենակ իրենց չերի համար են, իսկ տընտես մարդի աչք - չունեն...

Վարիտ Վայնկան քրտինքն ել եր ձեռքով սրբում, քիթն ել: Յերբ այդ լսեց՝ շակվեց ու ման տվեց աչքերը ծերուկի վրա:

— Յես, վարպետ, ուրախությամբ...

— Ուրախությամբ, յես առանց քեզ ել գիտեմ, վոր զրից անել կուգես, վորպեսզի չաշխատես - յես ձեր կաշին դաբախտնից եմ ճանաչում, շան տղերք... բայց դու, գիտես ինչ, զրուստ ասա...

Նրա ճախնը դողդողաց:

\* ) Սարդը մանող մեքենակի մի մասն ե:

— Դրստատ ե, վոր իլիչի առողջությունը... ը՛ը՛... վատ ե...  
 — Դրստատ ե, վարպետ...  
 Ծերը լուս յերկաթե կոճղին նստեց, յերեք անգամ խաչակըն-  
 քեց յերեսը և շշնջաց—«ՏԵՐԸ մի արասցե»...  
 Վայնկան անվատահությամբ նրան դառավ.  
 — Ի՞նչ ե, չլինի իլիչի կողմն ես, ծերուկ:  
 Ծերուկի շրթունքները չփշփացրին.  
 — Բա ել ում կողմը լինեմ:  
 Հըճվանքի ալիքը Վայնկայի ուղեղին զարկեց: Զնդուն ձայնով,  
 չարաճիորեն կանչեց.  
 — Բայց չե վոր կումունիստ ե նա...  
 Դարրինը վոտքի յելավ, ձգվեց իր աժդահա հասակովը մին.  
 — Վեր աշխատենք, լեզու քորելու ժամանակ չի:  
 Ու հազար, վոնց վոր շնչափողը հացի կտոր ընկած մարդը  
 կհազա: Յեկ յերբ վոր կրակը նորից եր բորբոքվել, վչում եր փուք-  
 ուը և թշում եր յերկաթը, դարբինը դանդաղ ու դժկամ, յերկա-  
 թի զնդոցին արձագանքելով, ասաց.  
 — Շատ ել թե նա կոմունիստ ե—ամեն տեսակի կոմու-  
 նիստ կա: Այ, թե վոր բոլորը նրա պես լինելին, ել ըսկի կոմու-  
 նիզմ ել պետք չեր, թե չե շատերը մենակ անունով են կոմունիստ:  
 Իսկ պուղմենտի բաժանմունքում և արհեստանոցում խումբ-  
 խումբ հավաքվում ու զրուցում եին: Ու վոչ վոք չեր խնդրում,  
 վոր ցրվեն: Յերիտասարդները նույնիսկ զնացին բակը: Մանկան  
 աչքերը գետին գցել, թրջված հավ եր դառել:  
 — Տղերք, քարտուղարը վորտեղ կլինի:  
 — Թաղակին կոմիտե յե գնացել:  
 — Իսկ Միտրին:  
 — Նույնպես:  
 Կծկեցին, կուչ յեկան, ու սրտերն ել իրենց պես: Մքուքնե-  
 րի պես գնում-գալիս ելին նախազգացումները:  
 Իսկ Վայնկան լուսամուտից ե նայում: Վայնկան յուրավիճների  
 մոտ ե ուզում գնալ: Սրտի զողով խորամանկության ե դիմում.  
 — Վարպետ, յես մի կլնիկի յետ կղամ: Ամեն ինչ կիմանամ ու  
 յետ կղամ:  
 — Վնաս չունի, գնա:  
 Զընդզընդաց, ցնցուղեց իր ձախը գործարանային դպրոցի  
 զանգակը: Դուրս թափվեցին սովորողները: Լոլող Պետկան առջելից  
 — Եդ ընչի յեք եղաներդ կախել, տղերք:

Մանկան չարացավ.  
 — Զգիտես միթե:  
 Լոլող Պետկան ճառախոսի տեսք ընդունեց:  
 — Գիտեմ, հետո ինչ: Հուսահատվելուց ինչ ոգուտ: Եստեղ  
 ոգնություն ե պետք, բժիշկներ են պետք, վորովհետեւ վոչ մի աստ-  
 ված մեզ չի խղճա: Իսկ բժիշկ առանց մեզ ել կկանչեն: Իսկ մեր  
 գործը, տղերք. ահա թե ինչ պետք ե լինի.—Եսոր բջիջում շրջա-  
 բերական ե ստացվել կուսակցության հոբելյանի մասին: Կուսակ-  
 ցությանը պետք ենավատորմին տված նվերից ավելի լավը տանք—  
 եդ կլինի մեր ոգնությունը իլլիչին: Վորովհետեւ կուսակցության  
 աշխատողները քիչ են—հալից ընկել ե իլլիչը:  
 Տղերքի սիրու միքիչ թեթևացավ: Կարծես թե լոլող Պետկան  
 յերկար փողի միջոցով փչեց նրանց սրտերին և մաքրեց սրտերն ու  
 բացեց, յետ տարավ սրտերի կուչ յեկած պատերը: Կալծկլտացին,  
 փթթեցին նրանց աչքերը բաց կոպերի տակից:  
 Վախիտ Վայնկան խոսեց.  
 — Տղերք, ում նվիրենք կուսակցությանը:  
 — Պարզ ե, վոր վոչ քեզ, վիշխոնկ:  
 Ո՞հ, ինչպես խոցվեց Վայնկայի սիրաը, ինչպես գլխին խփեց  
 արյունը, կոկորդը ցածաքեց, լեզուն դամաղին կպավ: Շփոթվեց ու  
 շշնջաց.  
 — Յես... յես, իհարկե, իմ մասին չելի խոսում:  
 — Իսկ թե քո մասին չեր, կոտրած գդալի պես մեջ մի ըն-  
 կնիր:  
 Պոչը քաշեց Վայնկան, հեռացավ: Շատ եր ուզում առաջ ու  
 առաջ մի լավ գմբուզ հասցնել Մանկայի զնչին և հետո բարձր ձայնով  
 սաել բոլորին. «Թե ուզում եք իմանալ, բոլորդ ել իմացած լինեք,  
 վոր Միտրին,—իսկ դուք անպատճառ Միտրիին եք ընտրելու,—վոր  
 Միտրին չի մտնի կուսակցություն, մինչև վոր ինձ ել յերիտմիու-  
 թյուն ընդունեք, վորովհետեւ ալզպես ենք մենք պայմանավորվել—  
 ինձ ել, նրան ել մի մի տարի յե պակասում»: Բայց չասավ—թող  
 Միտրին ինքն ասի ժողովում:  
 Իսկ Մանկան ծանրությամբ ասաց.  
 — Ճիշտ վոր՝ ում առաջարկենք:  
 Սենկան մտախոն վրա բերեց:  
 — Յես կարծում եմ, վոր դա բյուրոյի գործն ե. ում կառա-  
 ջարկեն, նրան ել կընտրենք, վորովհետեւ...  
 Լոլող Պետկան ընդհատեց:  
 — Վորովհետեւ—ապուշ ես... Յեթե ուզում ես՝ ահա՝ թե ինչ

կասեմ: Ել ինչ հորս ցավի կոմսոմոլն ես, վոր ամեն ինչ բյուրոն  
պետք ե վորոշի, իսկ դու մի գրոշի ինքնագործունեցություն ել  
չպետք ե ունենաս:

— Իսկ բյուրոն ընչի՞ համար ե, կարծում ես սուլհանդակի պեսմիայն, վոր մթնում են աչքերը, պտույտ ե գալիս գրուխը, — շուր-

վազվագելու համար ե ընտրված, ինչ ե:

Մանկան հաշտեցնող յեղանակով ասաց.

— Թողե՛ք, տղե՛ք, դատարկ տեղը վիճելը իհարկե, պետք ե  
քննել:

Բակից մի վարպետ եր անցնում, տեսավ ու կանչեց.

— Դե շուտ, ցրվեցեք, զրանով հետո կզբաղվեք...

Յեկ լերբ վոր ցրվում ելին, հրձվում եր վախկան, զգում եր  
մոտենում ե վաղուց ցանկալին, մնտ ե, մնտ ե: Վժնց ենախան-թյանը հանձնեցինք:

Մյուս առավոտ կոմիերիտականներն ակումբ ելին հավաքվել: Վորվել ելին միասին մտնել—մեկը՝ կուսակցություն, մյուսը՝ կոմ-  
իտական միասին ժամանակ կուսակցություն անդամ եր  
— կուսակցության, լենինի, կոմիերիտականների մասին խոսեց:  
Ասաց, վոր հիմա վաղինիր իլիշին ոգնականներ են պետք խիստ  
հոգնել ե ինքը: Իսկ ոգնականներին կոմիերիտմիությունն ե պատ-  
րաստում: Հիմի այդ ոգնականը տալու ժամանակն ե:

Ամեն ինչ հասկանալի, պարզ ե վախնկալի համար, Բայց յեթե  
հանկարծ Միտրին համաձայնվի, ինչ կասեն աղերը վախնկալին:  
Իրնչ կասի խառարը՝ Սնախիպիշը: Վո՛չ, այդպիսի բանչի կարողպաւ-  
տահել: Զե՞ վոր պայմանագորդի են: Համ ել քարտուղարը կասի,  
վոր չի կարելի—կանոնադրության պահանջած տարիքը չունի:

Նախագահը մի ժիրգլուս մարդ—մեկ անգամից յերկու զանդ  
եր հնչեցնում՝ մեկը պղնձե զանգը, մյուսն իր կոկորդինը՝ իր գործը  
լավ եր հասկանում:

— Ընկերնե՛ք, բջիջի բյուրոն Սերգեևա Աննալին ե առաջար-  
կում, վոր 19 տարեկան ե, և Նազարենկո Միտրին, վոր 17 տա-  
րեկան ե: Դրանց կարծեմ բոլորդ ել ճանաչում եք, իսկ իրենց հա-  
մաձայնությունը տվել են:

Ի պատասխան, ինչպես մեղվանոցի գվոց, լսվեց.

— Լավ ե... գիտենք... համաձայն ենք... հենց զրանց ելինք  
ուզում առաջ քաշել...

Նայում ե վախնկան յեղբոր կողմը, տեսնում ե—յեղբոր աչքերն  
անսովոր կրակով են վառվում:

Բայց ինչու չի առարկում քարտուղարը:

Քարտուղարը համաձայն ե:

— Ուրեմն ընդունված ե համարվում:

Ել չլսեց Վախնկան, թե ինչ խոսեցին գրանից հետո, զգաց  
վազվագելու համար ե ընտրված, ինչ ե: Տղաներ, սեղաններ, աթոռներ,— և տղաները, սեղաններն  
ու աթոռներն իրար են խառնվել:

Այս... ինչ պատահեց, չինք թե ուշաթափվեց Վախնկան:

— Իհարկե:

Զնդզնգացին, վժժացին խառն ձախներ, բարձր, զիլ ձախներ:

— Տեսնես ինչից եր:

— Յերեկի ուրախությունից, յեղբորը, Միտրին, կուսակցու-  
մոտենում ե վաղուց ցանկալին, մնտ ե, մնտ ե: Վժնց ենախան-թյանը հանձնեցինք:

— Զե՞ ուրախությունից չե. Գիտե՞ս ինչ, նրանք պայմանա-  
վարառուղարը, վոր միենուն ժամանակ կուսակցություն, մյուսը՝ կոմ-  
իտական միասին մտնել—մեկը՝ կուսակցություն: Սրտին դիպել ե տղալի.. վոր ինքը դուրսն ե  
մնում:

— Այ թե ինչ: Միթե նա դեռ կոմիերիտական չի:

— Հենց այդ ե, վոր չի: Նա տասներեքի մեջ ե և, վոր գըլ-  
խավորն ե, մեզ մոտ միայն դա յէ այդ տարիքին, թե չե պատկոմա-  
կան կազմակերպություն կսաեղծելինք...

Գիշերը տաք եր, կիսագարնանալին: Յերկնքի շուռ տված կաթ-  
ուայում կապույտ ներկի լուծվածքներ ելին ծփում: Որորվելով լո-  
զում ելին լուծվածքի մեջ կոճակների սպիտակ գլուխները, լուսատը-  
տիկներ հիշեցնող կոճակի գլուխները, վորոնք կոճակների բաժնում  
յեղածներին են նման:

Տնակների գարպասների առաջ յերիտասարդները հավաքվել  
ելին խաղ ու զրուցի:

Իսկ իրենց տանը, մահակալի վրա, Վախնկան եր պառկել փոք-  
րիկ աննկատելի գնդի պես: Կալծակների պես ելին փալատակում  
մտքերը: Հարցերի կապուտակ ծուխն եր բարձրանում: Յեկ վառ-  
վում եր ու այրվում մտքերի լուղը ուղեղի մեքենալի մեջ: «Այս  
ինչ ե... ինչ ե... իրավացի՞ յե, թե անիրավացի Միտրին»:

Գալարվում ելին, պոկվում իրարից մտքերի ոանդավուշները,  
նորից ելին փաթթվում իրար, կրակե ողակի մեջ ելին առնում  
Վախնկալի գլուխն ու մի հարց ելին դառնում:

«Վո՞րն ե ավելի կարեոր—Վախնկալի կոմիերիտմիություն ըն-  
դունվելը, թե Միտրին ու լենինին ոգնելը»:

5.

Մարտի լույս տասներկուսի գիշերը Մոսկվալի Խամովսկիկան  
թաղում, յերկրորդ համալսարանը ծաղկել եր: Մաղկել եր հին լսա-



բանը, վոնց վոր յեղբեանին ե ծաղկում: Յեկ դրանից յեղբեանու գուշնի յեն դառել զորաբանակի գլխաղվար ընկ. Անտոնովի աչքերը, և յեղբեանու յերանգ ե առել նրա ձայնը, վորովհետեւ նա կուսակցության հոբելյանի մասին եր խոսում:

Անտոնովից հետո Տրուբան խոսեց, հիշելով թագավորական կարգերի ժամանակվա իրենց գաղտնի գործունելությունը: Խոսեցին և հիշողություններ պատմեցին նաև ուրիշ ընկերներ: Նրանց ճառերը հեռավոր բանաերում թառամած հուշերի յեղբեանիներին ելին հարություն տալիս:

Յեկ լախածավալ դահլիճի բոլոր ծալրերից, զուխների վրայով, մազերի մամուռի վրայով ձգվում յերկարում ելին գրությունների ճերմակ ժապավենները:

Այդ գրություններով առաջարկում ելին փողջուններ ուղարկել էնինին, շուտափութ առողջացում ելին ցանկանում նրան և, լավ թե վատ, հարթ թե անհարթ գրված այդ թղթերից ձեռքերի կոշտվածքների, քրաինքի և չներկած հողի հոտ եր գալիս:

Յեկ յերբ ընտրված կոմյերիտականներին կուսակցությանն ելին հանձնում և հանձնվողներից ամեն մեկը, անզսպելի զգացմունքների հորդմունքը հազիվ զսպելով, ժողովականների շարքերի միջով գեպի առանձին դրված սեղանն եր գնում, ստանում եր թեկնածվական քարտը, Բուխարինի գրքույկը և հոբելյանական նշանը—ձեռքերի կատաղի ծափերից, կանչերի աղմուկից, կեցցենների դողանջից շնչահեղձ եր լինում դահլիճը և յերաժշտության ձախը թաղվում եր մանուկների ձախների ծովում:

Մըրկի պես գեպի վեր եր բարձրանում փոթորկալից հրձվանքը: Կատաղի գրոհով պատերին եր զարկվում: Յեկ լսարանում չկար վախնկա, ինչպես վոր չկալին նաև ուրիշ Վախնկաներ, Կոլաներ, Պետյաներ, Դունյաներ և Մանյաներ. մի բյուրաչքանի, բյուրագլուխ մասսա կար, մի ուրախությամբ եր տրոփում նրա կուրծքը; մի սեր եր բոցկլտում նրա սրտում, անձնիվիրության մի զգացմունք և զոհաբերության մի պատրաստակամություն կար նրա մեջ:

Յեկ յերբ վոր ամբիոնին Միտրին եր մոտենում, Վախնկան, քանի թոքերումն ուժ կար, կանչեց, կատաղի լարումից աչքերը փակելով:

— Միտրի, չամաչեցնես կոմյերիտմիությունը, իլլիչ ազնիվ ոգնականը յեղիր:

Յեկ չորս կողմից ամենքը գեպի Վախնկան դարձան, տեսան նրա անշուք արտաքինը՝ ուրախության հորձանքի մեջ լողալիս:

Իսկ Վախնկան դուրս քաշեց գրպանից ծոցատերը, մի թերթ

թուղթ պոկեց և սկսեց ձեռքի տենդագին, անհաստատ շարժումով ծուռ ու մուռ տողերով ինչ վոր բան գրել, հետո թուղթն իր հարմանուհուն տվեց և շշնջաց.

— Գրեցեք...

— Գրում եմ...

— Մեկ ե՛լ... շատ եմ խնդրում մեր փողջունը հայտնել .. պըռ-լետարիատի թանգագին առաջնորդ Վ. Ի. Լենինին:

Յեկ փոքրիկ մակույկի պես՝ հետ ընկած, մենակ մնացած գրությունը դեպի նախագահը լողաց. քիչ ել, ահա. ստացավ, բացեց, ժպտաց.

— Ընկերներ, Վաղեմիր իլլիչին փողջունը ուղարկելու մի առաջարկ ել ե ստացվել: Առարկող չկա:

Առարկող չկար:

— Ի՞նչ ժամանակաշրջան ե ընդգրկում այս պատմվածքը:

— Ի՞նչ շրջապատի ծնունդ ե Վայնկան:

— Ինչո՞վ են զբաղված նրա ծնողները:

— Ի՞նչ ե անում Վայնկան գործարանում:

— Ի՞նչպես են վերաբերվում Վայնկային տանը յել գործարանում:

— Ինչո՞վ ե Վայնկան հետաքրքրվում զլսավորապես՝ տա՞ն, թե գործարանի գործերով:

— Ի՞նչպես ե նա վերաբերվում գործարանի դեպքերին.—ըերեցեր որինակներ:

— Ինչպես ենա վերաբերվում դեպի գործարանի վարչությունը, բանվորները յեկ կոմյերիտականները.—ինչպես են վերաբերվում դրանք դեպի Վայնկան:

— Կապված ե արդյոք նա բանվորության, կոմկուսակցության յեկ կոմյերիտմիության հետ: Ինչի՞ց ե դա յերեվում:

— Բնորոշեցե՞ք հեղինակի վերաբերմունքը գեպի իր հերոսները:

— Տալի՞ս ե արդյոք այս պատմվածքը վորոշ պատկեր խորհրդային գործարանի ներքին կյանքի:—Փորձեցե՞ր տալ, հիմնվելով այս պատմվածքի վրա, խորհրդային գործարանի ներքին պատկերը:

տի փեշը վեր քաշած, վազվագում եր ամբարից ներքնատուն, այն-  
տեղից ել խանութ, և զնզգնգացնում բալանիները:

Ծերունին սիրում եր ընտանեկան կյանքը և նա աշխարհում  
ամեն բանից ավելի կապված եր իր ընտանիքի, առանձնապես խու-  
զարկու վոստիկան մեծ վորդու և հարսի հետ: Ակսինյան հազիվ եր  
պսակվել խուլի հետ, յերբ հայտնաբերեց անսովոր գործնականու-  
թյուն և արդեն գիտեր ուժ պետք ե ապառիկ տալ, ում չտալ,  
բանալիները պահում եր մոտ և նույնիսկ ամուսնուն չեր վստա-  
հում, խառնվում եր հաշիվներին, նայում եր ձիերի ատամներին,  
ինչպես գյուղացի տղամարդ, և միշտ ծիծաղում եր. և ինչ ել նա  
աներ, ասեր, ծերունին բարի ժպառում եր և մրմռում.

— Այ քեզ հարս... Այ սիրուն, խելոք...

Նա այրի յեր, բայց վորդու հարսանիքից մի տարի անց, չդի-  
մացագի ինքն ել պսակվեց: Ուկելեվուից յերեսուն վերստի վրա վար-  
վարա Նիկալայնա անունով արդեն հասակն առած, բայց գեղեցիկ,  
տեսքով մի աղջիկ ուզեցին նրա համար: Հազիվ եր նա վերի հար-  
կի մի սենյակում ընակվել յերբ ամեն ինչ տան մեջ պայծառացավ,  
կարծես բոլոր լուսամուտներին նոր ապակիներ գրեցին:

Ցիրուկինի տանը որերն անցնում ելին հոգսերի մեջ: Դեռ արել  
չձագած Ակսինյան արդեն լվացվում եր սրահում, ինքնայեռը խո-  
հանոցում յեռում եր և սուլում, ինչ վոր չար բան գուշակելով:  
Բացում ելին խանութը: Յերբ արդեն լուսանում եր, պատշգամբի  
մոտ կանգնում եր գրոգը և ծերունին ջանելի պես նստում եր նրա  
վրա մինչև ականջները քաշելով իր մեծ կարտուզը: Նրան տեսնողը  
շեր ասի, վոր նա արդեն 56 տարեկան ե: Ծերունուն ուղեկցում  
ելին կինն ու հարսը: Նրա հազին մաքուր սյուրառուկ եր, գրոգին  
լծում ելին սև ու մեծ վորցածին, վոր արժեր յերեք հարյուր ուուր-  
թի: Սցովիսի որերին ծերունին չեր սիրում, վոր գյուղացիները խըն-  
դիրքով ու զանգատով մոտենում ելին նրան: Նա առում եր նրանց  
և զզում և յերբ նկատում եր, վոր վորեւ գյուղացի սպասում ե  
զարպասի մոտ,— զայրացած գոռում եր.

— Ի՞նչ ես կանգնել եղանակ: Քաշվիր ես կողմ:

Կամ յեթե դա մուրացիկ եր լինում —

— Կստված տա, — կանչում եր:

Նա գործի համար եր զնում: Նրա կինը, մուգ հազնված, սև  
գոզնոցով, մաքրում եր սենյակները կամ ոզնում եր խոհանոցում:  
Ակսինյան առեսուր եր անում խանութում, բակում լսելի յեր, թե  
ինչպես ելին զնզում շշերը և դրամները, ինչպես եր նա ծիծաղում  
կամ գոռում, և ինչպես բարկանում ելին զնորդները, վորոնց նա  
նեղացնում եր, և միաժամանակ նկատելի յեր, վոր աշնուղ խանու-

## ՉՈՐԵԿԱՌԻՄ

1.

Ուկելեվու գյուղը գտնվում եր ձորակում, աճապես վոր խճուզուց  
և յերկաթուղարին կայարանից յերեսում ելին միայն զանդակատունն  
ու չթի գործարանների ծխնելուցիները: Գործարանները, — յերեքը  
չթի և մեկը կաշվի, — գտնվում ելին վոչ թե գյուղամիջում, այլ  
գյուղի ծալրին և քիչ հեռու: Փոքրիկ գործարաններ ելին դրանք և  
բոլորում աշխատում ելին մոտ չորս հարյուր բանվոր, վոչ ավել:  
Կաշեգործարանի պատճառով ջուրը հաճախ հոսում եր, ավելցուկը  
վարակում եր հանդը, գյուղացոյ տափարը տառապում եր սիրի-  
րական ախտից և հրամավեց գործարանը փակել: Նա համարվում  
եր փակված, բայց աշխատում եր գաղտնի, շրջանի պրիստավի և  
գավառական բժշկի գիտությամբ, վորոնց գործարանի տերը վճա-  
րում եր ամիսը տասական ոռւբլի: Ամբողջ գյուղում կային միայն  
յերկու կարգին, քարե, յերկաթով ծածկված տներ. մեկում գտնը-  
վում եր գավառակացին վարչությունը, մլուսում, յերկհարկանի տա-  
նը, հենց յեկեղեցու դեմ ապրում եր քաղքենի գրիգորի: Պետրով  
Ցիրուկինը:

Գրիգորին մի նպարեղենի կրպակ եր պահում, բայց դա միայն  
տեսքի համար եր, մինչդեռ խսկալես զբաղվում եր ողու, տափարի,  
կաշվի, հացահատիկի, խողերի առեսուր և ուրիշ ինչով ասես. նա  
կարելու անտառ եր գնում, շահով փող եր տալիս, և ընդհանրապես

նա յերկու վորդի ուներ: Մեծը՝ Անիսիմը ծառայում եր պո-  
լիցիայում, խուզարկու բաժնում և տանը քիչ եր լինում: Փոքրը՝  
Ստեփանը առեսուրի ճանապարհն եր բռնել և ոգնում եր հորը, բայց  
նրանից խսկական ոգնություն չելին սպասում, քանի վոր նա խու-  
ր և առողջություն՝ թուլ: Նրա կինը, Ակսինյան, գեղեցիկ եր և  
կայելչակազմ: Տոն որերին շլապով և հովանոցով եր ման զալիս:  
Նա կանուխ եր վեր կենում, ուշ պառկում և ամբողջ որը շրջազգես-

թում արդեն ողու գաղանի առևտուր և կատարվում: Խուլը նույնպես նստում եր խանութում, կամ առանց գլխարկի ձեռքերը զըրպանը դրած, գնում եր փողոցով ու մատցրիվ նայում եր մեկ խըրճիթներին, մեկ վերև, յերկնքին: Որը վեց անգամ տանը թեյ ելին խմում, չորս անգամ սեղան ելին նստում հացի: Իսկ յերեկոներին հաշվում ելին շահը և գրում, հետո խոր քնում:

2.

Մեծ վորդին՝ Անիսիմը շատ քիչ եր տուն գալիս և այն ել մեծ տոներին, բայց դրա փոխարեն համագյուղացիների միջոցով նվերներ և նամակներ եր ուղարկում, վոր գրած ելին լինում ոտար մարդու գեղեցիկ ձեռագրով, միշտ լավ թղթի վրա, ինչպես խընդրագիր:

Նամակները բարձրաձայն ելին ընթերցում, միքանի անգամ ծերունին զգացվելով, հուզմունքից կարմրելով, ասում եր.

— Ե՞ն, չուզեց տանն ապրել, ուսմունքի յետեից ընկավ: Ե՞ն, ի՞նչ կա վոր. թող եղան լինի: Ամեն մարդ ել մի գործ ունի...

Մի անգամ բարեկենդանից առաջ ձյունախառն անձրև յեկավ: Ծերունին և Վարգարան մոտեցան լուսամուտին, վոր նայեն. և ի՞նչ—Անիսիմը սահնակով գալիս եր կայարանից: Նրան ամենին չելին սպասում: Նա սենյակը մտավ անհանգիստ և ինչ-վոր բանից հուզված և հետո ամրող ժամանակ այդպես ել մնաց. իրեն շատ ինքնավտահ եր պահում: Նա չեր շտապում մեկնել և այնպես եր թվում, թե նրան վտարել ելին ծառայությունից: Վարգարան ուրախ եր նրա վերադին: Նա նայում եր նրա վրա, մի տեսակ խորամանկ հոգոց եր հանում և որորում եր, գլուխը.

— Ախը ես վժնց կլինի, քեզ մատաղ,—ասում եր նա, — ախը մեր տղի քսանութ տարին, լրացավ, իսկ նա դեռ աղաք ման և գալիս, վժնց կլինի ախը:

Յեվ վորոշեցին Անիսիմին պսակել:

Հենց բաղաքի մոտ գտնվում եր Տորդոյեվո գյուղը: Նրա մի կեսը վերջերս միացել եր քաղաքին, մյուսը՝ մնում եր, վորպես գյուղի: Առաջին մասում, իր տնակի մեջ, ապրում եր մի ալրի կին. նա մի քույր ուներ, վորը որավարձ աշխատանքի յեր զնում և այդ քույրը լիպա անունով մի աղջիկ ուներ, վորը նույնպես որավարձով եր ապրում: Տորդոյեվոյում արդեն խոսում ելին Լիպայի գեղեցկության մասին, միայն թե բոլորն ել տարակուսում ելին նրա սոսկալի աղքատությունից: Վարգարան հարսնախոսներից իմացավ Լիպայի մասին և զնաց Տորդոյեվո:

Հետո մորաքրոջ տանը հարսնատես սարքեցին, ինչպես վորպետք եր՝ ուտելիքով և գինով: Լիպան նոր, վարդագույն զգեստով եր, վոր կարել եր հենց այդ որվա համար, իսկ կարմիր ժապավենը բոցի նման վառվում եր նրա մազերի վրա: Նանիհար եր, թուլլ, գունատ, նուրբը կազմվածքով, բնքուշ գծերով և ազատ ողում աշխատելուց՝ թխացած: Թաղծալի, յերկոտ ժպիտը նրա յերեսից չեր անցնում, իսկ աչքերը դեռ մանկական ելին և նայում ելին դուռը ավագատ ու հետաքրքիր:

— Բաժինք չկա, մենք ել աչք չունենք բաժինքի, — ասում եր ծերունին մորաքրոջը: — Մեր տղի, Ստեփանի համար ել աղքատ ընտանիքից աղջիկ առա, իսկ հիմա գոհ ենք, — թե տանը, թե գործի մեջ վոսկի յե:

Լիպան կանգնած եր դուան մոտ և կարծես թե ուզում եր ասել, — «Ի՞նչ վոր ուզում եք արեք, յես ձեզ հավատում եմ», իսկ նրա մալուր, որավարձով աշխատող Պրասկովյան խոհանոցումն եր և յերկու չոտությունից պահպել եր, թուլացել: Մի ժամանակ, յերբ դեռ յերիտասարդ եր, մի վաճառական, վորի մոտ նա հատակ եր լվանում, վոար գետնին խփելով բարկացել եր նրա վրա. նա սաստիկ վախեցել, թալկացել եր և ամբողջ կյանքում նրա սրառում յերկուղը մնաց: Իսկ յերկուղից միշտ դողում ելին նրա ձեռքերը, վոաները, դողում ելին այտերը:

Հարսնատեսից հետո նշանակեցին հարսնանիքը: Հետո իրենց առանը Անիսիմը միշտ քայլում եր սենյակներով և սուլում, կտմ թե, հանկարծ ինչ-վոր բան հիշելով, մտածում եր և նայում հատակին, կարծես հայացքով ուզում եր թափանցել յերկրի խորքը: Նա վոչ գոհ եր, վոր պսակվում եր, վոչ ել ցանկություն ուներ հարսնատեսներու: Միայն սուլում եր: Յեվ պարզ եր, վոր նա պսակվում ե, վորովհետեւ այդպես են ուզում հայրն ու խորթ մայրը, ալդպես ե գլուղի աղաթը՝ վորդին պսակվում ե, վոր տանը ոգնող ձեռք լինի:

3.

Շիկալովո գյուղում ապրում ելին յերկու դերձակ քույրեր: Նրանց պատվիրեցին հարսի համար նոր շորեր կարելու. գալիս ելին, շափում, հարմարեցնում և ժամերով նստում, թեյ խմում: Յերբ նրանք վերջացրին իրենց աշխատանքը, Ցիրուկինը վհչ թե դրամ վճարեց, ալ իր խանութից ապրանք, և նրանք հեռացան տխուր, ձեռքում բոնած ճարպամոմ և պահածո ձուկ: Գյուղից դուրս գալով, նրանք նստեցին թմրի վրա և սկսեցին լալ:

Հարսանիքից յերեք որ առաջ յեկավ Անխսիմը վոտից գլուխ նոր հաղած։ Ամենայն վեհությամբ աստծուն աղոթելուց հետո, նա բարեկ հոր։

Հարսանիքի որը մոտեցավ։ Զով, բայց պարզ և ուրախ ապրիլյան որ եր։ Արդեն վաղ առավոտվանից զանգակները զբնգացնելով յեռաձի և յերկածի կառքերով գալիս ելին հյուրերը։ Կաչաղակներն աղմկում ելին ծառերի վրա, ճյուղից՝ ճյուղ վոստոստում... Իսկ ծտերը ճկճկում ելին, ասես նրանք ել ուրախ ելին, վոր Յիբուկինների մոտ հարսանիք ե։

Ժամը յերեքին ժողովուրդը խոնվեց։ Նորից լսվեց զանգակների ձախը, — բերում ելին հարսին։ Յեկեղեցին լի յեր, ջահերը վառվում ելին, յերգիչները, ինչպես ցանկանում եր ծերունի Յիբուկինը, նոտաներով ելին յերգում։ Լուսերի վայն ու վառ զգեստները կուրացնում ելին լիպարին։ Նրան թվում եր, վոր յերգիչներն իրենց բարձր ձախներով, մուրճերի նման խփում են իր գլխին, կոշիկները հուալ ելին տալիս վոտքը, նա այնպիսի հայացք ուներ, վոր կարծես հենց քիչ առաջ և ուշաթափ յեղել, նայում և շուրջը և վոչինչ չի հասկանում։ Անխսիմը՝ սկ սերթուկով, փողկատի փոխարեն կարմիր ժապավենաթելով, մտածում եր, Կայիկով մի կետի, և յերբ յերգիչները բարձրացնում ելին ձախը, նա շտապ խաչակնքում եր։

Յեկեղեցուց վերագարձան։ բոլորը սեղան նստեցին։ Հյուրերն իրար հետ բարձրածախն խոսում ելին։ Յերգիչները յերգում ելին, յերաժշտությունը նվագում եր, ստացվում եր սարսափելի, վայրի հնչյունների մի խառնուրդ, վորից գլուխ եր պտտվում։

Այստեղ ելին հոգևորականությունը, գործարանի ծառայողներն իրենց կանանց հետ, ուրիշ զյուղերի առևտրականներ և պանդոկատերեր։

Լիպան քարացած նստել եր, նույն այն արտահայտությամբ, ինչ վոր յեկեղեցում եր։ Անխսիմը, այն պահից, ինչ ծանոթացել եր նրա հետ, չեր խոսել, այնպես վոր չգիտեր, թե ինչ ձախն ուներ նա։ Այժմ ել կողքին նստած նա լուռ եր և խմում եր անգլիական ողի։ Քիչ հետո հարբեց, լեզուն բացվեց և դարձավ մորաքբոջը։

— Յես մի ընկեր ունեմ, ազգանունը Սամորողով, վարպետ մարդ ե։ Պատվավոր քաղաքացի յե և գիտե զրուցել։ Բայց յես, մորաքնոյր, նրան հինգ մատիս պես գիտեմ և նա այդ զգում ե։ Թուզ տվեք ձեզ հետ խմել Սամորողովի կենացը, մորաքնոյր։

Յերեկոյան պարեր յեղան և նվազ։

Այս բոլորն ուշ վերջացավ, գիշերվա ժամը յերկուսին։ Անխսիմն որորվելով շըջում եր, հրաժեշտ տալիս նվագողներին և ամեն մի յերդչի և յերաժշտի նվիրում նոր հիսուն կողեկանոց։ Ծերունին եր,

առանց որորվելու, այլ մի վոտքի քայլելով, ճանապարհ եր քցում հյուրերին և ասում ամեն մեկին։

— Հարսանիքը յերկու հաղար նստեց։

4.

Անցավ հինգ որ։ Անխսիմը պատրաստ եր մեկնելու։ Նա վերև բարձրացավ, Վարվարայի մոտ, վորպեսզի հրաժեշտ տա։ Նրա մոտ վառվում ելին բոլոր կանթեղները, բուրում եր խունկը, իսկ ինքը նստած լուսամուտի առաջ, կարմիր թելից գուլպա յեր գործում։

— Քիչ ապրեցիր մեզ հետ, — ասաց նա, — յերկի տխրեցի՞ր։ Ո՞խո՞խո՞խ... Մենք լավ ենք ապրում, ամեն բան մեզ մոտ շատ ե, քո հարսանիքն ել լավ սարքեցինք։ Ավերն ասում ե՝ յերկու հազար նստեց։ Մի խոսքով, ապրում ենք ինչպես վաճառական, միայն թե, այ, տխուր և մեզ մոտ։ Մեկ ել՝ ժողովրդին շատ ենք նեղացնում։ Զի յենք առնում, թե ուրիշ բան, աշխատող ենք վարձում՝ բոլորի մեջ ել խաբերայություն ե։

— Դեհ, մայրիկ, մնաս բարնվ։ Մնացեք վողջ և առողջ, վատ չհիշեք։

Անխսիմը կուցավ Վարվարային գլուխ տվեց։

— Շնորհակալ ենք քեզանից, — ասաց նա, — մեր ընտանիքը բեզանից շատ ոգուտ ունի։

Զգացված՝ Անխսիմը դուրս յելավ, բայց նորից դարձավ ու ասաց։

— Ինձ Սամորողովը մի գործի մեջ խառնեց։ Կամ հարուստ կլինեմ, կամ կկորչեմ։ Յեթե մի բան պատահի, գուք են ժամանակ ծնողիս միխթարեցեք, մայրիկ։

Պատշգամբի տակ արգեն կանգնել եր սայակին լծած բարձր, կուշտ կերած սպիտակ ձին։

Ծերունի Յիբուկինը վաղեց, ջահելի պես նստեց և սանձերը ձեռքն առավ։

Անխսիմը համբուրվեց Վարվարայի, Ակսինյայի և յեղբոր հետ։ Պատշգամբին կանգնել եր նաև լիպան, կանգնել եր անշարժ և նայում եր մի կողմ, կարծես թե գուրս եր յեկել վոչ թե ճանապարհ զցելու, այլ այնպես, հայտնի չե ինչու համար։ Անխսիմը մոտեցավ նրան և թեթե, հազիվ-հազ շրթունքները դիպցը նրա ալաերին։

— Մնաս բարով, — ասաց նա։

Յեւ նա, առանց նայելու նրա վրա, ապրինակ ժպտաց, յերեսը դողդողաց, և ամենքն ել, առանց պատճառի, սկսեցին խղճալ նրան։

Կայարանում մոտեցան բուֆետին և մի-մի գավաթ գինի խմե-

տին: Ծերունին ձեռքը տարավ գրպանը քսակին, վորպեսզի վճարի:  
— Յես եմ հյուրասիրում, — ասաց Անիսիմը:

Ծերունին խանդաղատանքով ծեծեց նրա ուսը և աչքով արավ բուֆես պահողին, — այս, ինչ տղա ունեմ:

— Անիսիմ, գու թե մնայիր տանը, գործին մոտիկ, — ասաց նա, — քեզ գին չեր լինի: Յես քեզ, վորդի, վոախց-գլուխ վոսկով կպատելի...

— Վոչ մի կերպ չի լինի, հայրիկ:

Յերբ ծերունին կայարանից վերադարձավ տուն, առաջին ըոպելին նա շճանաչեց իր կրտսեր հարսին: Հենց վոր ամուսինը բակից դուրս յեկավ, կիպան փոխվեց, հանկարծ ուրախացավ, Բորիկ, հին, մաշված շրջազգեստով, թերը քշտած մինչև ուսերը, նա լվանում եր սանդուղքը և յերգում նուրբ, արծաթ ձայնով, իսկ յերբ դուրս բերեց լվացքաջրով մեծ տաշտը և նայեց արեին իր մանկական ժպիտով, այն ժամանակ նա յել կարծես արտուախ յեր նման:

Ծերունի մշակը, վոր անցնում եր պատշգամբի մոտով, գլուխը որորեց և ասաց.

— Համա թե հարսներ ունես հա, Գրիգորի Պետրով, աստված քեզ չի խնայել, — կնիկ չեն — վոսկի յեն:

## 5.

...Ու մեկ ել տեղեկություն հասավ, վոր Անիսիմին կեղծ դրամներ կտրելու համար բանտն են նստեցրել: Ամիսներ անցան, անցավ կես տարուց ավելի, բոլորեց յերկար ձմեռը, զարունը յեկավ, և այն, վոր Անիսիմը նստած ե բանտում, սովորական դարձավ թե տանը, թե զյուղում: Յեվ յերբ գիշերը մեկն ու մեկն անցնում եր տան կամ խանութի մոտով, նա հիշում եր, վոր Անիսիմը նստած ե բանտում, յերբ խփում ելին զանգերը, այն ժամանակ ել, անհայտ ե թե ինչու, հիշում ելին, վոր նա նստած ե բանտում և սպասում ե դատի:

Թվում եր, թե բակում ստվեր ե փովել: Տունը մթնել եր, կտուրը ժանգուել, և ինքը ծերունի Ցիրուկինն ել կարծես թե մթնել եր: Նա արգեն վաղուց չեր խուզում մազերն ու միրուքը: Նստում եր սալլակն առանց վոստյունի, և ել մուրացիկներին չեր առում «աստված տա»: Նրա ուժերը նվազում ելին, և այդ յերեւում եր ամեն բանից: Մարդիկ քիչ ելին վախենում նրանից, ուրիշնիկը խանութում արձանագրություն կազմեց, թեպետ առաջվա նման ստացավ այն, ինչ պետքն եր: Յերեք անգամ ել քաղաք կանչեցին, վորպեսզի գինու գաղտնի վաճառքի համար դատեն, և գործը միշտ

հետաձգվեց, վկաների չներկայանալու պատճառով, իսկ ծերունին տանջվում եր:

Նա հաճախ գնում եր վորդու մոտ, մեկի հետ պայման կապում, մլուսին խնդրադիր ներկայացնում, մի յեկեղեցու խաչվառ նվիրաբերում: Անիսիմի նստած բանտի վերակացվին նա արծաթե բաժակակալ մատուցեց, յերկար գդալներով:

— Մի ճար անելու յել հնար չկա, — ասում եր Վարվարան, — ոխ-ոխ-ոխ... Խնդրելիր պարոններից մեկին, մի բան գրելին գլխավոր պետին... Գոնե մինչեւ դատը բաց թողնելին: Ի՞նչ են տղին տանջում:

Նա յել եր վշտացած, բայց լցվում եր, սպիտակում, առաջվանման իր սենյակում կանթեղներ եր վառում և հետեւում, վոր տանն ամեն բան մաքուր լինի, հյուրերին հյուրասիրում եր մուրաբայով և խնձորի պաստեղով: Խուլը և Ակսինյան խանութում առևտուր ելին անում: Նոր գործ ելին հնարել, աղլուսի գործարան ելին քրեհել և Ակսինյան գրեթե ամեն որ սալլակով գնում եր այնտեղ: Նա գործն ինքն եր կառավարում և ծանոթներին հանդիպելիս վիզը ձգում եր և միամիտ ժպտում: Իսկ կիպան խաղում եր իր յերեխացի հետ: Դա մի փոքրիկ մանկիկ եր, լղար և խղճալի, և զարմանալի յեր, վոր նա ճշում եր, նայում, զարմանալի յեր, վոր նրան մարդ ելին համարել և նույնիսկ Նիկիֆոր կոչել: Նա պառկում եր որորոցում, իսկ կիպան մի քիչ հեռանում եր, դռան մոտից նրան գլուխ տալով ասում:

— Բարե ձեզ, Նիկիֆոր Անիսիմիչ:

Յեվ շտապով վազում եր նրա մոտ ու համբուրում եր: Ապա հեռանում եր, նորից գլուխ տալիս և կրկնում.

— Բարե ձեզ, Նիկիֆոր Անիսիմիչ:

Վերջապես դատը նշանակեցին: Ծերունին հինգ որով հեռացավ անից: Լուրեր ելին տարածվում, վոր զյուղացիներից շատերին են կանչելու, վորպես վկաների:

Դատը տեղի ունեցավ հինգշաբթի որը: Կիրակին ել անցավ, սակայն ծերունին դեռ չեր վերադարձել. չկար և վոչ մի տեղեկություն: Յերեքշաբթի, իրիկնամուտին, Վարվարան նստել եր բաց լուսամուտի առաջ և սպասում եր: Հարևան սենյակում կիպան խաղում եր յերեխացի հետ: Նա թոցնում եր նրան ձեռքերի վրա և հիացմունքով ասում եր.

— Դու կմեծանաս, կլինես մեծ, մեծ գեղացի կլինես, մենք միասին որավարձի կզնանք... Որավարձի կզնանք:

— Դե-ե, — նեղանում եր Վարվարան, — Եղ ի՞նչ որավարձ ե: Նա վաճառական ե լինելու:

Լիպան մեղմ յերգում եր, բայց քիչ հետո մոռանում եր և նորից՝

— կմեծանաս, մեծ, մեծ մարդ կղառնաս, միասին որավարձի կզնանք:

— Դե-է. չի կարելու...

Լիպան, Նիկիֆորին գրկած, մոտեցավ դռանը և հարցրեց.

— Մայրիկ, ինչից ե, վոր յես նրան այդքան սիրում եմ: Ինչից ե, վոր յես նրան այդքան խղճում եմ, — շարունակուց նա հուզված ձայնով: Իսկ աչքերն արցունքից փայլում ելին: — Ո՞վ ե նա: Փետուրի նման թեթև, անուշիկ, բայց սիրում եմ նրան, սիրում եմ ինչպես իսկական մարդու: Այ, նա վոչինչ չի անում, չի խոսում, բայց յես հասկանում եմ ամեն բան, ինչ վոր ասում ե իր աչիկներով:

Վարվարան լուռ եր: Լովեց կայարանին մոտեցող իրիկնալին գնացքի ազմուկը: Նա արդեն ել չեր լուռմ և չեր հասկանում, թե ի՞նչ ե ասում լիպան, չեր հիշում, թե ինչպես ե անցնում ժամանակը, այլ վողջ մարմնով դողում եր, և այդ վոչ թե յերկուղից, այլ սաստիկ հետաքրքրութիւնից: Նա տեսավ, թե ինչպես արագ զորվեց սալակը, վորը լի յեր գեղացիներով: Այդ կայարանից վերադառդ վկաներն ելին: Յերբ սալակն անցավ խանութի մոտով, նրանից դուրս թռավ ծերունի մշակը և բակը մտավ: Լոելի յեր, թե ինչպես բակում նրա հետ բարեկցին և հարցրին ինչ-վոր բանի մասին...

— Իրավունքների և գույքի զրկում, — ասաց նա բարձր, — և Սիրի, զեց տարվա տաժանակիր աշխատանքի...

Խանութի յետի մուտքից դուրս լելավ Ակսինյան: Նա հենց նոր նավթ եր տալիս և մի ձեռքում շիշն եր բոնել, մյուսում ձագարը. բերանումն ել արծաթե զբաներ կալին:

— Իսկ հայրիկն ուր ե, — հարցրեց նա թլվատ:

— Կայարանումն ե, — պատասխանեց մշակը: — Յերբ, ասում ե, պիստ կմթնի, են վախտը կդամ:

Յեզ յերբ բակում հայտնի դարձավ, վոր Անխիմը դատապարտված ե տաժանակիր աշխատանքի, խոհանոցում խոհարարունին հանկարծ սկսեց ձայնը բարձրացնել, ինչպես հանգուցյալի վրա, մտածելով, վոր քաղաքավարութիւնն այդ ե պահանջում:

— Մեզ ում հոգսին թողիր, Անխիմ Գրիգորիչ, իմ անուշո...  
Շներն ել սկսեցին հաջել: Վարվարան մոտեցավ լուսամուտին և վշտից հուզված, ամբողջ ուժով բարձր կանչեց խոհարարունուն.

— Հե-րիք ե, Ստեպանիդա, հե-րիք ե: Քրիստոսի սիրուն, մի տանջի...

Մոռացան սամովարը դնել, ել վոչ մի բանի մասին չելին մտածում: Միայն Լիպան վոչ մի կերպ չեր կարողանում հասկանալ, թե ի՞նչ ե պատահել, և շարունակում եր յերեխային գրկած ման ածել:

Յերբ կայարանից ծերունին յեկավ, ել նրան վոչնչի մասին չհարցրին: Նա բարեեց, հետո լուռ անցավ բոլոր սենյակներով. շնթեց:

— Ճար ու դարման անող չկար... — սկսեց Վարվարան, յերբ վոր նրանք առանձին մնացին: — յես ասում եի, վոր պարոններին խնդրենք, չմեցիր են ժամանակ: Կամ ինձիրք...

— Բնկա դես-դեն, — ասաց ծերունին և թափ տվեց ձեռքով: — Հենց վոր Անխիմին դատապարտեցին, յես զնացի են պարոնի մոտ. վորը պաշտպանում եր նրան: Ասում ե, — «Ել հիմա վոչինչ չի կարելի անել, ուշ ե»: Բայց յերբ դուրս ելի գալիս դատարանից, մի փաստաբանի հետ պայմանավորվեցի, կանխավճար տվի... Մի շաբաթ ել կապասեմ, հետո ներից կդնամ: Ի՞նչ վոր ասոված տա:

Ծերունին նորից անցավ բոլոր սենյակներով և յերբ դարձավ Վարվարակի մոտ, ասաց.

— Կասես յես առողջ չեմ: Գլխումս են... պղտոր ե. մտքերս շփոթվում են:

Նա վակեց դուռը, վոր Լիպան շլի և մեղմ շարունակեց.

— Փողերիս գործը լավ չի: Հիշում ես, Անխիմը հարսանիքից առաջ ինձ նոր մանեթանոցներ և հիսուն կոպեկանոցներ տվեց: Մի կապոց այն ժամանակ յես պահեցի, և իմս ել խառնեցի նրանց հետ... ճիշտ ինչպես այն ժամանակ, յերբ վողորմած հոգի հորեղբարը վողջ եր... վոր գնում եր Մուկվա, Ղրիմ ապրանքի: Նրա կինը, հենց վոր մարդն ապրանքի յեր գնում, ուրիշների հետ եր ման գալիս: Վեց յերեխա ունելին: Հորեղբարը հենց վոր խմում եր, սկսում եր ծիծաղել: «Վոչ մի կերպ, — ասում եր — յես չեմ կարողանում ջոկել, թե վորոնք են ինոնքս և վորոնք ուրիշներ»: Այդպիս ել հիմա յես, չեմ կարողանում վորոշել, վորոնք են իմ փողերից իսկականը և վորն ե կեղծ: Կարծես բոլորն ել կեղծ են:

— Եհ, ի սեր ասածո՞:

— Կայարանում բան եմ գնում տալիս եմ յերեք ուռբլի, աշքիս կեղծ են յերեւում... Մարսափում եմ... Հը, կասես մի քիչ տկար եմ...

— Ի՞նչ ասեմ... Ամեն բան ասոծու ձեռքն ե, — ասաց Վարվարան և որորեց զլուխը: — Պետք ե այդ մասին մտածել, Պետրովիչ... բարի ժամանակ չի: Մի բան չպատահի: Դու ջանել մարդ չես: Կմեռնես և անս, վոր առանց քեզ քո թոռնիկին չնեղացնեն: Ո՞չ, վախենում եմ, վոր նրանք նեղացնեն Նիկիֆորին, վախենում

Եմ: Հորն ենակես հաշվիր, վոր ել չկա, մայրը ջահել ե, խելքը տեղը չի... Գոնե գրեցիր յերեխի վրա Բուտյոկինի հողը, Պետրովիչ, ճիշտ վոր... Մտածիր, — շարունակում եր համոզել Վարվարան, — յերեխան լավ ե, ափսոս ե: Այ, հենց վաղն ևեթ գնա և թուղթը դրիր:

— Իսկ յես մոռացել ելի թոռնիկիս... — ասաց Յիբուկինը. հարկավոր եր նրան ել տեսնել. Ուրեմն դու ասում ես վոչինչ հը: Ե՞ն, ի՞նչ կա մեր ձեռքում... թող մեծանա Տա աստված:

Նա բաց արավ դուռը և մատով կանչեց Լիպալին: Հարսը յերեխային գրկած, մոտեցավ:

— Դու, Լիպինկա, թե բանի պետք կունենաս, հարցրու, — ասաց նա, — և ինչ վոր ուզում ես՝ կեր, մենք չենք ափսոս... միայն թե առողջ լինես... Թոռնիկիս ել լավ նալի: Վորդի չկա՝ թոռնիկս ել ե թող մնա...

Արցունքները նրա այտերի վրալից հոսեցին. Նա հեծկլտաց և հեռացավ: Քիչ հետո նա պառկեց քնելու, և խոր քնեց, յոթն անքուն գիշերներից հետո:

## 6.

Ծերունին կարճ ժամանակով մեկնեց քաղաք: Մեկը պատմեց Ակսինյանին, վոր նա գնացել ե նոտարի մոտ, վորպեսզի կտակը դրի, և վոր Բուտյոկինը, հենց այն հողը, ուր նա աղյուս եր այրում, նա կտակելու յե թոռնիկին՝ Նիկիֆորին: Այդ մասին Ակսինյալին հայտնեցին առավոտան, յերբ ծերունին և Վարվարան նստել են պատշգամբի մոտ, վողորենու տակ և թեյ ելին խմում: Նա փակեց փողոցից և բակից խանութի դուռը, հավաքեց բոլոր իր ունեցած բանալիները և շղրտեց ծերունու վոտների մոտ:

— Ել չեմ աշխատելու յես ձեզ համար, — կոռաց նա բարձր և հանկարծ հեկեկաց: — Ուրեմն, յես ձեզ վոչ թե հարս եմ, այլ բանվոր: Վողջ ժողովուրդը ծիծաղում ե. «Նայիր, — ասում են, — Յիբուկիններն ինչ բանվոր են գտել իրենց»: Յես ձեզ մոտ վարձու չեմ յեկել: Յես աղքատ չեմ, յես հալը ու մալը ունեմ:

Նա առանց սրբելու արցունքը, ծերունու վրա ուզեց իր լրցված աչքերը, վորոնք չար ելին և կատաղությունից վկել ելին. նրա դեմքն ու վիզը կարմիր ելին և լարված: Նա ճշում եր ամբողջ ուժով:

— Ել չեմ ուզում, — շարունակեց նա, — տանջվեցի: Յեթե աշխատանք ե, խանութում ամեն որ նստել ե, գիշերներն արադի յետեց վազել ե, — դա իմ ե, իսկ թե վոր հող նվիրել ե, — եղ ար-

դեն սիբիրականի կնկանն ե իր սատանի հետ: Նա այստեղ տանտիկին ե, աղա յե, իսկ յես նրա աղախինն եմ: Բոլորը տվեք նրան: Յես զնում եմ տուն: Ձեզ համար ուրիշ հիմարի գտեք:

Ծերունին իր կանքում վոչ մի անգամ չեր հայնոյել և չեր պատժել յերեխաներին ու նրա մտքովն ել չեր անցել, վոր ընտանիքից մեկն ու մեկը կարող են իրեն կոպիտ խոսքեր ասել, կամ իրեն չհարգել: Յեկ այժմ շատ վախեցավ, վազեց տուն և ծածկը պահարանի յետեւ: Իսկ Վարվարան այնքան շտապեց, վոր նույնիսկ չկարողացավ տեղից բարձրանալ և միայն թափահարում եր ձեռները, կարծես պաշտպանվելով մեղուներից:

— Սա ի՞նչ բան ե, ձեզ մատաղ, — վնթինթում եր սարսափած, — ի՞նչ ե նա եղած ճշում: Ո՞խ-ոխ-ոխ, գոնե քիչ կամաց... Ո՞յ, մի քիչ կամաց...

— Բուտյոկինը տվին աքսորյալուհուն, — շարունակում եր ճշալ Ակսինյան, — դէհ, հիմի տվեք ամեն բան նրան: Ձեզնից ինձ վոչինչ պետք չի... Գետինը մտնեք դուք: Բոլորդ ել այստեղ մի խումք եք: Հերիք ե, հիմա յես գլխի ընկա: Ազագակներ, կողոպտեցիք գնացող-յեկողին, կողոպտեցիք մեծ ու փոքրին: Իսկ ով եր առանց պատենտի արադ ծախում. հապա զալը փողերը: Իրենց մնդուկները զալը փողերով լցրին, և յես ել ավելորդ դարձա:

Լայն բացված դարպասի մոտ ամբոխը հավաքվել եր և նայում եր բակին:

— Թող ժողովուրդը նալի, — գոռում եր Ակսինյան: — Յես ձեզ պիտի խալտառակեմ: Եյ, Սաեփան, — կանչեց նա խուլին, — ես բոպելիս գնանք տուն: Իմ հոր, իմ մոր մոտ գնանք: Աքսորվածների հետ յես չեմ ուզում ապրել: Հավաքիր:

Բակում կապված պարաներին սպիտակեղեն եր կախված: Նա պոկեց իր դեռ թաց շրջագգեստները, շորերը և շպրտեց խուլի կողմը. հետո մոլեգնած նա վազեց բակի լայնքով, լվացքի շարանի մոտով, պոկեց բոլորը, և ինչ վոր իրենը չեր՝ քցեց գետին և սկսեց կոխկըտել:

— Ո՞յ, ձեզ մատաղ, — տնքում եր Վարվարան. — եղ ի՞նչ ե նա անում: Տվեք նրան Բուտյոկինը, տվեք նրան, իսկ յերկնալին Քրիստոսի:

— Եյ, կնի-ի-կ, — ասում ելին դարպասի մոտ, — այ, քեզ կնիկ... Ակսինյան վազեց խոհանոցը, վորտեղ ալդ ժամանակ լվացք կար: Լվացքը միայն լիպան եր անում, վորովհետեւ խոհարարուհին զնացել եր գետը սպիտակեղենը ցայելու: Ոջախի մոտ տաշտից և կաթսալից շոգի յեր բարձրանում և խոհանոցի ողը խեղդուկ եր և աղոտ: Հատակին դեռ մի կուտ չլվացված սպիտակեղեն կար և նրա

մոտի նստարանին, կարմիր վոտիկները ցցած, պառկած եր Նիկի-  
ֆորը: Հենց այս պահին, յերբ Ակսինյան ներս մտավ, Լիպան կուլ-  
տից դուրս քաշեց նրա վերնաշապիկը, դրեց տաշտում և արդեն  
ձեռքը պարզել եր մեծ ջրամանին, փորը դրված եր սեղանին...

— Տուր եստեղ,—գոռաց Ակսինյան, ատելությամբ նայելով  
նրան և դուրս քաշելով տաշտից իր վերնաշապիկը, —քո գործը չե-  
իմ սպիտակեղենին կպչելու: Դու աքսորյալուհի յես և պիտի իմա-  
նաս քո տեղն ու չափը:

Լիպան յերկուղով նայեց նրան, նա վոչինչ չեր հասկանում,  
բայց հանկարծ նա տեսավ այս հայացքը, փոր Ակսինյան զցեց յե-  
րեխայի կողմը, հասկացավ ու թուլացավ:

— Վերցրիր իմ հողը, դե առ քեզ:

Ակսինյան խից ջրամանը և յեռացրած ջուրը շրփացրեց Նի-  
կիֆորի վրա:

Դրանից հետո լսվեց մի ճիչ, փորի նմանը դեռ Ուկիէվոյում  
չեր լսված և հավատալ ել չեր լինի, փոր անպիսի մի փոքրիկ թուլ  
արարած, ինչպիսին Լիպան եր, կարող ե այդպես ճչալ: Բակումն  
ել հանկարծ լուսթյուն տիրեց: Ակսինյան լուռ մտավ տուն, իր  
նախկին միամիտ ժպտով... Խուլը դեռ ման եր գալիս բակով սպի-  
տակեղենը խտած, հետո սկսեց նորից կախել լուռ և առանց շտա-  
պելու: Յեվ մինչև խոհարարուհին գետից տուն գար, վոչ-փոք չհա-  
մարձակից խոհանոցը մտնել և նայել, թե ի՞նչ կա արտեղ:

7.

Նիկիֆորին փոխադրեցին շրջանային հիվանդանոցը և նա յե-  
րեկոյան ախտեղ ել մեռավ: Լիպան, չսպասելով, փոքրիկի դիակը  
փաթթաթեց վերմակի մեջ և ուղնորդվեց տուն: Յերբ նա տուն հա-  
սավ, դեռ տավարը չելին քշել: Ամենքը քնել ելին: Նա նստեց պա-  
տշգամբում և սպասեց: Առաջինը ծերունին եր, փոր դուրս յեկավ:  
Նա իսկույն, մի հայացքով հասկացավ, թե ի՞նչ ե յեղել, և մի պահ  
վոչ մի խոսք չկարողացավ սկսել. չպաշտում եր շրթունքները:

— Ե՞ն, Լիպան, —մրմնջաց նա, —թոռնիկին չպահպանեցիր...

Վարդարալին արթնացրին: Նա ձեռներն իրար խփեց ու հեկե-  
կաց և իսկույն սկսեց լվալ յերեխային:

— Ի՞նչ ել լավս եր... —մրմնջում եր նա: — Ո՞խ-ո՞խ-ո՞խ... Մի  
յերեխա յեր, են ել չպահպանեց անխելքը...

Առավոտը և յերեկոյան հոգեհանգիստ կատարեցին, մյուս որը  
թաղման որն եր, և թաղումից հետո հյուրերն ու հոգեորականու-  
թյունն ախպիսի մի ազահությամբ սկսեցին ուտել, փոր կարծես

վաղուց չելին կերել: Լիպան սպասավորում եր սեղանի մոտ. Նրան  
ասում ելին.

— Դարդ մի անի նորածնի համար: Յերկնային արքայությու-  
նը դրանց համար եւ:

Յեվ յերբ հյուրերը ցրվեցին, Լիպան նոր, ինչպես հարկն ե,  
հասկացավ, փոր Նիկիֆորն այսու չկա, հասկացավ և հեծկտաց: Յեվ  
նա չգիտեր, թե վոր սենյակը գնա հեկեկալու համար, փոր այս տա-  
նը, յերեխայի մահից հետո, ել իրեն տեղ չկա, փոր նա ել այստեղ  
բանի պետք չի, ավելորդ ե. ուրիշներն ել ելին զգում այդ:

— Հը, ի՞նչ ես ձենդ քցել, —գոռաց հանկարծ Ակսինյան, յե-  
րեալով դռներում. թաղման առթիվ նա նոր շորեր եր հագել և յե-  
րեսին պատղի յեր քսել: — Զենդ կտրիր:

Լիպան ուզեց լացը կարել, բայց չկարողացավ և ավելի բարձր  
հեկեկաց:

— Լսում ես, —գոռաց Ակսինյան և բուռն զալրութով վոտքը  
խփեց գետին: — Ո՞ւմն եմ ասում: Թուրս կորիր տանից և ել վոտքդ  
այստեղ չկոխես, աքսորյալուհի, դուրս:

— Դե, դե, —շփոթվեց ծերունին, — Ակսյուտա, խղճա, աղջիկս...  
Լաց ե լինում — հասկանալի բան ե... յերեխան մեռավ...

— Հասկանալի բան ե, —տնազ եր անում Ակսինյան, — թող ես  
գիշերն եստեղ անցկացնի, իսկ վաղը նրա վոտքը պիտի կտրվի ես-  
տեղից: Հասկանալի բան ե... — նորից տնազ արեց նա, ծիծաղեց և  
ուղղվեց դեպի խանութը:

Յեվ մյուս որը, վաղ առավոտյան, Լիպան գնաց Տուրգուեվո,  
իր մոր մոտ:

8.

Ներկայումս խանութի տանիքն ու դռները ներկված են և փայ-  
լում են, ասես թե նոր լինեն. լուսամուտներում առաջվա պես ծաղ-  
կում են սիրուն ծաղիկներ և այն, ինչ կատարվեց յերեք տարի  
առաջ Յիբուկինների տանն ու բակում, գրեթե բոլորովին մոռաց-  
ված ե:

Տանտերը, ինչպես և այն ժամանակ, համարվում եր ծերունի  
Գրիգորիս Պետրովիչը, բայց իսկապես ամեն բան անցել եր Ակսին-  
յայի ձեռքը: Նա և վաճառում ե, և գնում, ու առանց նրա համա-  
ձանության վոչինչ չի կարելի անել: Աղյուսի գործարանը լավ ե  
աշխատում: Վորովինետև յերկաթուղին աղյուս եր պահանջում, նրա  
գինը բարձրացավ, հասավ հազար քսանչորս ոռւբլու: Կա-  
նայք և աղջկերքն աղյուս են կրում և բեռնում են վագոնները, և  
դրա համար նրանք ստանում են որեկան քսանինդ կոպեկ:

Ակսինյան միացավ Խրիմինի գործին և նրանց գործարանը հիմա  
նմուշներ ունեն գրակալ, 3

կոչվում ե «Կրտսեր Խրիմիններ և Բնկ.»։ Կայարանի մոտ բաց արին մի պանդոկ։ Խուլ Ստեփանին կրտսեր Խրիմինները ժամացուց նվիրեցին և նա շարուրակ գրպանից հանում ե ժամացուցը և դնում ականջին։

Գյուղում ասում եին, վոր Ակսինյան մեծ ուժի տեր ե գարձել, և, ճիշտ վոր, յերբ նա առավոտյան մեկնում ե գործարան, միամիտ ժպիտով, գեղեցիկ և յերջանիկ, կամ յերբ հետո սկսում ե կարգադրություններ անել, նրա մեջ զգացվում ե ուժ։ Նրանից բոլորը, թե տանը թե գյուղում և թե գործարանում, վախենում են։ Յերբ նա փոստն ե մտնում, փոստի պետը վեր ե թռչում և ասում նրան։

— Խոնարհաբար խնդրում եմ նստել, կսենյա Արքամովսա։

Ծերունի Յիբուկինը ել չի խառնվում գործերին։ Նա իր մոտ ել փող չի պահում, վորովհետև վոչ մի կերպ չի կարողանում զանազանել խսկականը կեղծից, բայց լոռում ե և վոչ վոքի չի ասում իր այդ թուլության մասին։ Նա մոռացկոտ ե գարձել և յեթե նրան ուտելու բան չտան՝ ինքը չի ուզում։ Արդեն սովորել են առանց նրան ճաշել և վարգարան հաճախ ասում ե։

— Իսկ մեր մարդը յերեկ ելի առանց ուտելու պառկեց։

Յեվ նա այդ ասում ե անտարբեր, վորովհետև սովորել ե։ Անհայտ ե, թե ինչո՞ւ նա ամառ ձմեռ նույն քուրքն է հագնում, և միայն թունդ շոգ որերին դուրս չի յելնում, տանն ե նստում։ Սովորաբար, քուրքի ոձիքը վեր հանելով և իրար վրա գրասելով, Յիբուկինը ման ե գալիս գյուղում, ճանապարհին, կամ կայարանում, նըստում ե առավոտից-յերեկո յեկեղեցու գարպասի մոտի կրպակում։ Նստում ե և շարժվում։ Անցորդները գլուխ են տալիս նրան, բայց նա չի պատասխանում, վորովհետև առաջվա պես գյուղացիներին չի սիրում։ Յերբ նրան վորեն բանի մասին հարցնում են, նա պատասխանում ե միանգաման խելացի, քաղաքավարի, բայց կարճ։

Գյուղում զրուցներ են պատվում, վոր իբր հարսը դուրս ե արել նրան իր սեփական տնից և ուտելու վոչինչ չի տալիս և վոր նա իբր թե կերակրում ե վողորմությամբ։ Շատերն ուրախանում են, ուրիշներն ել՝ խղճում։

— Վո՞ր ժամանակաշրջանի գյուղն ե նկարագրված այս պատմվածքում։

— Ո՞վ եր Յիբուկինը, ինչո՞վ եր նա զբաղված գյուղում։

— Բնորոշեցեր Յիբուկինի վերաբերմունքը դեպի տանեցիները յեվ չքափոր գյուղացիները։ Ինչի՞ց եր բղխում այդ վերաբերմունքը։

— Ինչպիսի՞ բարբեր եին տիրում նրա ընտանիքում։— Բնորոշեցեր

նրա ընտանիքի անդամներին՝ խուլին, Ակսինյային, Անիսիմին յեվ սրանց վոխինարաբերությունները։

— Ի՞նչն եր այս փոխինարաբերությունների աղբյուրը։

— Տարբերվո՞ւմ եր արդյոք իիպան իր բնավորությամբ Ակսինյայից։ Ի՞նչով եր պայմանավորված այդ տարբերությունը։

— Ինչո՞ւ յեր տիրապետող դեր խաղում Ակսինյան Յիբուկինի ընտանիքում։

— Բնակա՞ն ե արդյոք այս պատմվածքի վերջը։— Ինչո՞ւ։

— Ինչի՞ց ե յերեվում, վոր այս պատմվածքում նկարագրված ե նաև խանեղափոխական գյուղը։

— Ի՞նչ վերաբերմունք ունի հեղինակը դեպի իր հերոսները։

— Ուղղակի՞ յե արտահայտվում այդ վերաբերմունքը, թե՝ անուղղակի կերպով։

## ՄԱՆԿԱԿԹՅՈՒՆ

(Համար «Մանկությունից»)

— Մենք հարուստ կամ ազնվական չենք, վոր ուսում տվունենանք, —խրատում եր պապս: —Ամեն բան մենք ինքներս պիտի սովորենք, հասկանանք: Ուրիշների համար հրեն գրքեր կան դրված, դպրոցներ կան շինված, իսկ մեզ համար վոչ մի բան: Ամեն ինչ ինքներս պիտի ձեռք բերենք...

Ու մտքի յետեից ընկած՝ լոռում եր անշարժ:

Պապս ժլատ մարդ եր:

Աշնանը նա տունը ծախեց, իսկ նախ քան ծախելը, հանկարծ մի որ, առավոտյան թելի ժամանակ մոալլ ու վճռական հայտարարեց տատիս.

— Եհ, պառավ, հերիք ե ինչքան կերակրեցի քեզ: Գնա ինք քու հայը վաստակի:

Տատս այդ խոսքերին վերաբերվեց շատ հանգիստ, կարծես վաղուց սպասում եր դրանց: Առանց շտապելու քթախոտի տուփը հանեց, քաշեց և ասաց.

— Ե, ինչ կա վոր: Թող եղակես ըլի:

Ու շուտով պապս սկսեց տան կահ-կարասիներն ու իրերը ծախել հնավաճառ-թաթարներին. նա կատաղի կերպով սակարկում եր հայուսում, իսկ տատս լուսամուտից նայելով՝ մերթ լալիս եր, մերթ ծիծաղում և ասում:

— Դուրս քաշի: Զարդի...

Պապիս բաժանվելուց հետո շուտով մայրս յեկավ խորթ հոր հետ: Մայրս գունատ եր, նիհարած:

Նրանք ինձ ու տատիս իրենց հետ տարան Սորմովո գյուղը:

Մայրս ու խորթ հայրս ապրում ելին յերկու սենյակում, վրոնց լուսամուտները նախում ելին փողոց, իսկ յես ու տատս—իս հանոցում, վորի միակ լուսամուտը վերեից, կտուրից եր բացված

Գյուղի տանիքներից բարձր դեպի յերկինք ելին ցցվել գործարանի ծխնելուցները, վորոնց թանձր ծուխը ձմրան քամին տարածում եր գյուղովը մեկ: Վաղ առավոտյան շշակն ոռնում եր գալիք պես.

— Ունենու, ունենու...

Յերբ կանգնում ելին նստալանի վրա, լուսամուտի վերին ապակիներից յերեսում եր գործարանի՝ լապտերներով լուսավորված մուտքի դուռը՝ բացված, ինչպես ծեր մուրացկանի անատամ սկ բերան. — Նրա մեջ խիտ շարքերով փոքրիկ մարդկանց բազմություն եր մտնում: Կեսորին շշակը նորից ոռնում եր, մուտքի դռան սկ շրթները յետ ելին գնում, բացվում եր մի խոր փոս, և գործարանը սիրաը թափում եր կարծես—գուրս եր տալիս կերած-մարսած մարդկանց, վոր սկ հոսանքով դուրս ելին գալիս փողոց, ու քամին փողոցի յերկարությամբ թռչելով՝ ցըռում եր նրանց իրենց տները: Յերկինքը շատ քիչ եր յերեսում, գյուղի վերել միշտ ծուխ եր լինում կանգնած:

Յերեկոները գործարանի գլխին որորվում եր մի պղտոր-կարմիր ցոլք, վոր լուսավորում եր ծխնելուցների ծալքերը, և թվում եր, վոր ծխնելուցները վոչ թե գետնից են դեպի յերկինք բարձրացել, այլ այդ ծխամած ամպից իջնում են դեպի գետին, իջնում են, կարմիր շնչում և ոռնում, ճշում:

Այս բոլորին նայելն անտանելի յեր ինձ համար. ձանձրութը կոծում եր սիրտս:

— Ինչու համար ենք այստեղ ապրում, —հարցրի մի անգամ մորս:

Նա պատասխանեց.

— Ա՛խ, լոիր...

Մայրս շատ քիչ եր խոսում ինձ հետ. բոլոր ժամանակ միայն կարգադրում եր.

— Տար, տներ, բեր...

Ինձ քիչ ելին թողնում փողոց, վորովհետեւ ամեն անգամ վերադառնում ելի տղաների հետ կոված, ծեծված: Կոփման իմ ամենասիրած և միակ հաճուլքն եր, և յես կրքոտ անձնատուր ելի լինում այդ բանին: Մայրս կաշվե գոտիով ծեծում եր ինձ, բայց պատիժն ավելի եր ջղայնացնում, և հետեւալ անգամ յես տղաների հետ կովում ելի ավելի կատաղությամբ, ու մայրս ավելի խիստ եր պատժում ինձ: Խորթ հայրս շատ խիստ եր ինձ հետ, մորս հետ ել քիչ եր խոսում, բայց շարունակ շվշացնում եր, հազում, իսկ ձաշից հետո կանգնում եր հայելու առաջ և խնամքով, յերկար ժամանակ փայտի կտորով քչփորում եր անկարգ-անկանոն ատամները:

Շաբաթ որերը նրա մոտ տասնյակներով բանվորներ ելին գալիս՝ ծախելու իրենց տոմսերը, վորոնցով պետք ե մթերք վերցնելին գործարանի խանութից։ Այդ տոմսերը նրանց տալիս ելին փողի տեղ, իսկ խորթ հայրս կես գնով առնում ել դրանք։ Նա բանվորներին ընդունում եր խոհանոցում, սեղանի մոտ նստած, ծանր ու մեծ, հոնքերը կիտած, տոմսը ձեռն եր առնում և ասում։

— Մանեթ ու կես կտամ։

— Յեղենի վասիկ, աստված ունեցիր...

— Մանեթ ու կես։

Շուտով, սակայն, նրան հեռացրին գործարանից, և մենք նորից յեկանք քաղաք։

Մի քանի ժամանակ անց՝ մայրս ինձ դպրոց տվեց։

Յես դպրոց գնացի մորս կոշիկներով, տատիս հին շորից կարած վերարկուով, դեղին վերնաշապիկով և փողկերը թողած վարտիկով. զպրոցականներն այդ բոլորն իսկույն ծաղրեցին. դեղին վերնաշապիկս համար ել անունս դրին «դեղին թոչուն»։ Տղաների հետ, ցին ինձ։

Ուսուցիչը դեղնադեմ, ճաղատ մարդ եր. քթից շարունակ արյուն եր գնում, և նա դասարան եր գալիս քթածակերը միշտ բամբակ դրած. նստում եր սեղանի մոտ և քթի մեջ խոսելով՝ հարցնում եր դասերը և, հանկարծ, խոսքի կեսը բերանում, լուսմ եր, բամբակը հանում քթածակերից ու նայում, գլուխն որորելով։

Միքանի որ յես նստեցի առաջին բաժանմունքում, հենց առա-

— այդ բանն ինձ համար անտանելի յեր, կարծես բացի ինձանից նա վոչփոքի չեր տեսնում, և բոլոր ժամանակ խոսում եր քթի մեջ։

— Պեսկնիկ, վերնաշապիկդ փոխի: Պեսկնիկ, վոտներդ քեզքաշի։

Դրա փոխարեն յես նրան պատասխանում ելի վայրենի գժու-

թյուններով. մի անգամ մի տեղից ճարեցի սառած ձմերուկի կես մեջը դուրս տվի և թելով կապեցի կիսամութ հաշտի դռան շեմափայտին։ Յերբ դուռը բացվեց՝ ձմերուկը բարձրացավ վեր, իսկ յերբ ուսուցիչը դուռը վրա դրեց, ձմերուկը փափախի պես նստեց նրա ճաղատին։ Դպրոցի ծառան ուսուցչի տված թղթի հետ ինձ տուն տարավ, և այդ չարության համար ինձ մի լավ ծեծեցին։

Մի ուրիշ անգամ յես ուսուցչի սեղանի գզրոցը քթախոտ լցրի. ուսուցիչն այնքան փոշտաց, վոր սախալված հեռացավ դասարանից, իր տեղն ուղարկելով փեսալին՝ մի սպալի, վոր ամբողջ դասարանին ստիպեց յերգել «Տեր կեցո զթագավորս» և «Ո՞հ, ազատություն

իմ, ազատություն»։ Ով ճիշտ չեր յերգում՝ քանոնով խփում եր նրա գլխին, մի տեսակ շխկոցով ու ծիծաղելի ձեռվ, բայց ցավ չեր պատճառում։

Կրոնուսուցը, գեղեցիկ և ջահել, սիրուն մազերով տերտերն ինձ չմիրեց նրա համար, վորովհետև յես «հին ու նոր ուխտի կրոնի դասագիրք» չունեի, և նրա համար, վոր յես նրա խոսելու տնազն անում ելի։

Դասարան մտնելով՝ տերտերի առաջին գործն եր լինում հարցնել ինձ։

— Պեշկով, կրոնի դասագիրք բերի՞ր, թե չե։ Այս։ Դասագիրք։ Յես պատասխանում ելի։

— Վոչ, Զեմ բերել։ Այս։

— Ի՞նչ—«այս»։

— Վոչ։

— Ի՞ն վոր այդպես ե—գնա տուն։ Այս։ Տուն։ Վորովհետև յես մտագիր չե՞մ քեզ սովորեցնել։ Այս։ Մտադիր չեմ։

Վերջիվերջո ստիպված յեղա «կրոնի դասագիրք» գնել։ Տուն դալով և մորս տանը չգտնելով՝ յես մի ոռւբլի գողացա և, շուկա գնալով, մտածեցի, վոր մի ոռւբլով կարելի ե գնել վոչ միայն «կրոնի դասագիրք», այն Ռոբինզոնի գիրքը։ Այդ գրքի գոյության մասին յես լսել ելի քիչ առաջ զպրոցում, մի ցուրտ որ, դասամիջոցին, յես տղաներին մի հեքիաթ պատմեցի, նրանցից մեկը հանկարծ նկատեց արհամարհանքով։

— Հեքիաթ—դասարկ բան ե, ալ—Ռոբինզոնն իսկական պատճություն ե։

Գրնվեցին Ռոբինզոնը կարդացած միքանի տղա յել, վոր շատ գովեցին այդ գիրքը, յես վշտացա, վոր տատիս հեքիաթը դուր չեկավ, և հենց այդ ժամանակ ել վորոշեցի Ռոբինզոնը կարդալ, վորպեսզի յես ել նրա մասին ասեմ—դասարկ բան ե։

Մյուս որը յես դպրոց բերի «կրոնի դասագիրք» և Անգերսենի հեքիաթների յերկու քրքրված հատորները, յերեք ֆունտ սպիտակ հաց և մի ֆունտ յերշիկ։ Մի մութ, փոքրիկ խանութում տեսա և Ռոբինզոնի գիրքը՝ գեղին շապկով. առաջին թերթի վրա նկարված եր մորուքավոր մի մարդ՝ մորթե փափախը գլխին, գազանի մորթին ուսերին լցած. զա ինձ դուր չեկավ. իսկ Անգերսենի հեքիաթները՝ արտաքուստ ել դուրեկան ելին, չնայած վոր քրքրված ելին։

Մեծ դասամիջոցին յես հացն ու յերշիկը բաժանեցի տղաներին, և սկսեցինք կարդալ «Մոխակը», այդ զարմանալի հեքիաթը։

Դա իսկույն ևեթ բոլորին գրավեց։

«Զինաստանում բոլոր բնակիչները չինացի յեն և թագավորն ինքն ել չինացի յե»:

Հիշում եմ, թե վորքան դուր յեկավ այս նախաղասությունն իր պարզ, ուրախ ու ժպտուն յերաժշտառթյամբ և ելի մի ինչ-վոր զարմանալի լավ կողմով:

Յես չկարողացա «Սոխակը» մինչև վերջը դպրոցում կարդալ — ժամանակ չկար, իսկ յերբ տուն յեկա, մայրս, վոր թափան ձեռին ձգածեղ եր անում, հարցրեց տարորինակ ու հանդած ձայնով.

— Մանեթը զու յես վերցրել:

— Վերցրել եմ, այս գրքեր եմ տոել:

Նա հենց ձեռի թափով ել ձեծեց ինձ, իսկ Անդերսենի գրքերը ձեռիցս առավ ու ինչ-վոր տեղ ընդմիշտ թագցրեց, վոր ծեծից ավելի դառն եր ինձ համար:

Միքանի որ դպրոց չգնացի, իսկ այդ ժամանակի ընթացքում խորթ հայրս իմ քաջագործության մասին պատմել եր, յերկի, իր պաշտոնակիցներին, նրանք ել իրենց յերեխաներին. դրանցից մեկն այս պատմությունը տարել եր դպրոց, և յերբ նորից յեկա սովորելու, ինձ դիմավորեցին նոր անունով «զորյ»: Կարճ եր ու պարզ, բայց — ճիշտ չեր: ԶԵ վոր յես չեի ծածկել, վոր մանեթն ինքս եմ վերցրել: Փորձեցի բացատրել — ինձ չհավատացին. այդ ժամանակ յես գնացի տուն և մորս ասի, վոր ել դպրոց չեմ գնալու:

Մայրս լաց յեղավ.

— Տեր աստված, տեր աստված...

Հետո ինձ գրկելով ասաց.

— Մենք աղքատ ենք ախր. ամեն մի կոպեկը...

Ու խոսքը չվերջացնելով՝ տաք ձեռով սեղմեց ինձ կրծքին:

Հետո խոստացավ տանել ինձ դպրոց:

Ու տարավ:

Յես նորից սկսեցի սովորել:

## ՃԱՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԵջ

(Հատված)

Յես իրեկ «աշկերտ» ծառայում եմ կոշկեղենի խանութում, վորը գտնվում ե քաղաքի գլխավոր փողոցի վրա:

Իմ տերը փոքրիկ, կլորիկ մարդ ե, դարչնագույն-տրորված դեմքով. ատամները կանաչ են, աչքերը ջրագույն ու կարծես կողտոտ: Նա ինձ թվում ե կույր, և, ցանկանալով դրանում համոզվել, ծամածություններ եմ անում:

— Ուեխտ մի ծոփ, — կամաց, բայց խստությամբ ասում ե նա: Տհաճություն եմ զգում, վոր այդ պղտոր աչքերն ինձ տեսնում են, և չեմ հավատում, վոր տեսնում են. — գուցե տերս միայն գըլի յե ընկնում, վոր յես ծամածություն եմ անում:

— Ասում եմ՝ ուեխտ մի ծոփ, — սաստում ե նա ավելի կամաց, հաստ շրմները գրեթե չշարժելով:

— Զեսներդ մի քորի, — չոր ձայնով շնչում ե նա: — Դու ծառալում ես գլխավոր փողոցի առաջնակարգ խանութում, ես պետք ե իմանաս: Աշկերար պետք ե դռան մոտ կանգնի արձանի պես...

Յես չգիտեմ ինչ բան ե արձանը, և չեմ կարող ձեռներս չըռըել. դրանք յերկուսն ել մինչև արմունկներս ծածկված են կարմիր բծերով ու խոցերով. անտանելի քուը ձեռներս ուտում ե:

— Զեր տանն ինչով ես զբաղվել, — հարցնում ե տերս, ձեռներիս նայելով:

Յես պատմում եմ. նա՝ մոխրագույն մազերով ծածկված կլորիկ գլուխն որորում ե և ասում վիրավորական ձեռվ:

— Փալաս-փուլուս հավաքելը — մուրացկանությունից ավելի վատ ե. գողությունից ավելի վատ ե:

— Յես գողություն ել եմ արել, — ասում եմ վոչ առանց հպարտության:

Այդ ժամանակ նա ձեռները, ինչպես կատուն իր թաթերը, զնում ե հաշվեսեղանի վրա և վախեցած, անկենդան աչքերը հառում ե վրաս ու ֆշացնում:

— Ի՞նչ: Ինչպես թե գողություն ես արել:

Բացատրում եմ — ինչպես և ինչ:

— Ե՛, եղ դատարկ բան կարող ենք համարել: Իսկ յեթե այս տեղից կոշիկներ գողանաս կամ փող, յես քեզ բանտը դնել կտամ մինչև խելքդ գլուխդ գա...

Այս խոսքերը նա ասաց հանգիստ, յես վախեցա և ավելի ևս չսիրեցի նրան:

Տիրոջից բացի, խանութում առուտուր եր անում քեռուս տղա Սաշան և ավագ գործակատարը, վոր ճարպիկ, կպչուն ու կարմրերես մարդ եր: Սաշան սյուրբուկ եր հագնում, փողկերը թողած շալվար և կուրծքը ծալ-ծալ շապիկ. փողկապ եր կրում. հպարտ եր և չեր ուզում ինձ նկատել:

Յերբ պապս ինձ այստեղ բերեց և Սաշային խնդրեց՝ ողնել, սովորեցնել ինձ, — Սաշան ծանր ու մեծ հոնքերը կիտեց ու նախազգուշացրեց:

— Դրա համար նա պետք ե ինձ լսի:

Զեռը գլխիս դնելով՝ պապս վիզս ծռեց:  
— Նրան լսիր, նա քեզանից մեծ և թէ տարիքով, թէ պաշտոնով:

Իսկ Սաշան աչքերը գուրս զցեց և հասկացրեց.

— Հիշիր, ինչ պապն ասաց:

Յեկ առաջին իսկ որից սկսեց յեռանդուն կերպով ոգտվել իր ավագությունից:

— Կաշիրին, աչքերդ մի չոի, — խորհուրդ եր տալիս տերս Սաշին:

— Յես — վոշինչ, — պատասխանում եր Սաշան, գլուխը կուցնելով, բայց տերս չեր դադարում.

— Մի փքփի. մուշտարիները կկարծեն եծ ես...

Գործակատարը հարգալիր ծիծաղում եր, տերս այլանդակ կերպով ձգում եր շրթները, Սաշան, կարմրատակած յերեսով, թագնվում եր վաճառասեղանի յետեւ.

Այդ զրուցներն ինձ դուր չելին դալիս. շատ խոսքեր չելի հասկանում. յերբեմն թվում եր, թէ այդ մարդիկ ոտար յեզգով են խոսում:

Յերբ մի գնորդ կին եր ներս մտնում, տերս ձեռը հանում եր գրպանից, բեղերին դիպցնում և դեմքին քաղցր ժպիտ տալիս. այդ ժպիտը նրա այտերը ծածկում ելին կնճիռներով, բայց կույր աչքերի տեսքը չելին փոխում: Գործակատարը ձգվում-կանդնում եր արձունկները կողքերին դեմ տված, իսկ ձեռները հարգանքով կախում եր ողում Սաշան յերկյուղով թարթում եր չուած աչքերը, աշխատելով թագցնել նրանց, յես կանգնում ելի դռան մոտ, աննկատելի քորում ելի ձեռներս և հետեւում առետրի արարողության:

Գնորդ կնոջ առաջին չոքած՝ գործակատարը, մատները զարմանալի կերպով չուած, փորձում ե կոշիկը. Նրա ձեռները դողում են. նա այնպիսի զգուշությամբ ե ձեռ տալիս կնոջ վոտներին, վոր կարծես վախենում ե վոտը կոտրի, իսկ կնոջ վոտը դինու շնի պես հաստ ե:

Առավոտներն աղախինը, վոր մի հիվանդոտ ու բարկացկոտ կին եր, ինձ զարթեցնում եր Սաշաից մի ժամ առաջ. յես մաքրում ելի տերերիս, գործակատարի, Սաշալի կոշիկներն ու շորերը, ինքնայեռ ելի զցում, փախտ ելի կրում բոլոր վառարանների համար, սրբում-լվանում ելի ամանները. Խանութը գալով՝ սրբում ելի հատակը, մաքրում ելի փոշին, թել ելի պատրաստում, գնորդների գնած ապրանքները տանում ելի նրանց տները, գնում ելի տնից ճաշ բերում. այդ ժամանակ դռան մոտ իմ պաշտօնը կատարում եր

Սաշան և, գտնելով, վոր դա զցում ե իր արժանապատվությունը, ինձ հայնոյում եր:

— Թամբակ: Քու տեղը յես պիտի աշխատեմ...

Յես ծանր ելի զգում ինձ և ձանձրանում ելի. յես սովորել ելի անկախ ապրել. առավոտից մինչև իրիկուն ժամանակս անց ելի կացնում կունավինի ավազու փողոցներում, պղտոր նկալի ափին, դաշտում, անտառում: Վոչ տառս եր մոտս, վոչ ընկերներս. մեկը չկար հետը խոսելի, իսկ այս կյանքը ջղացնացնում եր ինձ:

Պատահում եր հաճախ, վոր գնորդ կինը խանութից հեռանում եր վոչինչ չառած. — այդ ժամանակ նրանք, յերեքն ել, իրենց վերաբորփած ելին զգում: Տիրոջս դեմքի քաղցը ժպիտը չքանում եր և նա կարգադրում եր.

— Կաշիրին, ապրանքը հավաքի:

Յեկ հայնոյում եր.

— Ի՞ն, խոզ. յեկավ քանդեց, տակն ու վրա արավ: Տանը ձանձրանում ե հիմարը, գուրս և յեկել խանութներում թրե գալու: Իսկ կնիկը լինելիր — յես քեզ ցուց կտայի...

Նրա կինը չոր, սև աչքերով, մեծ քթով արարած եր. վոտները թափ եր տալիս մարդու վրա և բղավում, ինչպես ծառալի վրա:

Մի որ ճաշից հետո տերս գնաց խանութի յետեկ սենյակում քնելու, իսկ յես նրա վոսկե ժամացուցը բանալով, մեջը քացախ լցրի: Մեծ հաճույք եր ինձ համար տեսնել, թէ ինչպես նա, զարթնելով, ժամացուցը ձեռքին դուրս յեկավ խանութ և շփոթված վնթինթաց:

— Թոնէ. սա ինչ բան ե: Ժամացուցը հանկարծ քրտնել ե: Եսպես բան յերեք չի պատահել. Քրտնել... Արդիոք վատ բանի նշան չի սա:

Չնայած խանութը շատ զնացող-յեկող ուներ և տանն ել շատ աշխատանք կար, բայց յես կարծես նիրհում ելի ճնշող ձանձրությոց, ու հաճախ մտածում ելի — ինչ մի այնպիս բան անեմ, վոր ինձ խանութից հեռացնեն:

Խանութի առջեկոց անցնում են ձկունաթաթախ մարդիկ, թվում ե՝ նրանք թաղում են ինչ-վոր մեկին, ուղեկցում են գերեզմանատուն, բայց հուղարկավորությանն ուշացել են և շապում են հաւանել գաղաղին, Զիերը սնգսնգում են, դժվարությամբ անցնելով կիտակած ձբուների վրացից, Խանութի յետեւ գտնվող յեկեցսւ զանգերն ամեն որ քաշում են տիրուր — Մեծ պասն ե: Զանգի հարվածները բարձի պես դիպչում են մարդու գլխի. ցավ չես զգում, բայց շրմում ու խլանում ես:

Մի անգամ, յերբ դռանը, խանութի դռների մոտ, ջոկում ելի նոր արկղով ստացված ապրանքը, մոտեցավ ինձ յեկեղեցու սպասավորը, ծուռը կողքով մի ծերունի՝ պատառուուն շորերով, վոր կարծես շներն ելին ծվատել:

— Տղա ջան, ինչ կնի մի ջուխտ կալոշ գողանաս ինձ տաս, — առաջարկեց նա:

Յես բան չխոսեցի: Նստելով դպտարկ արկղի վրա, նա հորան- դեց, բերանը խաչակնքեց —ու նորից.

— Գողացի ելի, հը:

— Գողանալ չի կարելի, — ասի յես:

— Բայց և այսպես ուրիշները գողանում են: Ծեր մարդ եմ, արի, խնդիրքս կատարի:

Նա հաճելիորեն նման չեր մյուս մարդկանց, վորոնց շրջանում ապրում ելի. յես զգացի, վոր նա լիովին հավատացած ե, թե յես գողանալու պատրաստակամություն ունիմ, և համաձայնեցի լու- սամուտի ողանցքով մի զուգ կրկնակոշիկ տալ նրան:

— Այլավ ե, — առանց ուրախանալու, հանգիստ ասաց նա: — Չխարեն: Լավ, լավ, տեսնում եմ, վոր չես խարի...

Մի ըսպե անխոս նստեց թաց, կեղտոտ ձյունը կոշիկով խառ- նելով, հետո կավե ծխամործը ծխեց և հանկարծ վախեցրեց ինձ.

— Իսկ յեթե յես խարեմ քեզ: Վերցնեմ քո տված կալոշները, տանեմ խաղենիդ մոտ և ասեմ, վոր հիսուն կոպեկով ծախել ես ինձ վրա: Հը: Նրանց զինը յերկու մանեթից ավել ե, իսկ դու ծա- խել ես հիսուն կոպեկով: Վոր կանֆետ-մանֆետ առնես, հա:

Յես անխոս նայեցի նրան, կարծես արել եր, ինչ ասում եր, իսկ նա շարունակում եր խնթինթացնելով խոսել, կոշիկներին նայելով ու կապուտ ծուխ թողնելով:

— Յեթե պարզվի, որինակի համար, վոր դա խաղելինդ ե խրատել ինձ, թե զնա մեր տղին փորձի՝ տեսնենք ինչքան զող ե: Ի՞նչ կանես են ժամանակ:

— Յես քեզ կալոշ չեմ տա, — ասի բարկացած:

— Հիմի ել չես կարող չտալ, քանի վոր խոստացել ես:

Նա ձեռս բռնեց, գեպ իրեն քաշեց ինձ և, սառը մատով ճա- կատիս տալով, շարունակեց ծուլորեն:

— Եղ ինչպես դու առանց զես ու դեսի համաձայնեցիր — առ, վերցրու:

— Դու ինքդ խնդրեցիր:

— Յես շատ բան կարող եմ խնդրել: Յեթե քեզ խնդրեմ՝ յե- կեղեցին թալանել, ինչ, կանես — կթալանես: Միթե կարելի յե մար- դու հավատալ: Սարսաղ...

Յեվ ինձ հրելով, վեր կացավ:

— Ինձ գողացած կալոշներ հարկավոր չեն, յես աղա մարդ չեմ, կալոշ չեմ հագնում: Յես հանաք արի միայն... իսկ քեզ, վոր եղանա- պարզ տղա յես, զատիկը գա, զանգակատուն կթողնեմ, վոր զան- գերը քաշես, քաղաքին նայես...

— Յես քաղաքը տեսել եմ:

— Զանգակատնից ավելի սիրուն ե...

Կոշկի քթերը ձյունի մեջ կոխելով, նա դանդաղ անցավ յեկե- ղեցու այն կողմը, իսկ յես նրա յետեկից նայելով, տխուր, վախեցած մտածեցի — իսկապէս հանաք արավ ծերունին, թե տերս ուղար- կել ե ինձ փորձելու: Ու վախենում ելի խանութ մտնել:

Սաշան դուրս յեկալ ու բղավեց:

— Ի՞նչ ես քաշ գալիս:

Հանկարծ բռնկվելով՝ յես աքցանը վրա բերի նրան:

Յես գիտելի, վոր նա ու գործակատարը խանութից գողություն են անում. մի զուգ կոշիկ կամ կանացի կիսակոշիկներ պահում ելին վառարանի խողովակի մեջ, հետո, խանութից տուն գնալիս, թագ- ցնում ելին իրենց գերարկուների թեքերի մեջ: Այդ ինձ դուր չեր դալիս և վախեցնում եր — հիշում ելի տիրոջս սպանալիքը:

— Դու գողություն ես անում, — հարցը ի Սաշալին:

— Վոչ թե յես, այլ ավագ գործակատարը, բացատրեց նա խստությամբ, — յես ողնում եմ միայն: Նա ասում ե — մի ծառայու- թյուն արա ինձ: Յես ել պետք ե լսեմ, թե չե վատ բան կանի: Խագելինը: Նա ինքը յերեկվա գործակատարն ե, ամեն ինչ հասկա- նում ե: Իսկ դու ձենդ կտրիր:

Խոսելով՝ նա նայում եր հայելուն և փողկապն ուղղում նույն անբնական չուծ մատների շարժումներով, ինչպես անում եր գոր- ծակատարը: Նա անգաղար զգացնել եր տալիս ինձ իր ավագու- թյունն ու իշխանությունը. թավ ձախով բղավում եր վրաս, իսկ հրամայելիս, ձեռը մեկնում եր առաջ՝ վանող շարժումով: Յես նրա- նից բարձր ելի և ուժեղ, բայց վոսկրոտ ու կոպիտ, իսկ նա լի- քը-լիքն եր, փափլիկ ու դյուրաշարժ, ինչպես յուղած: Սյուրթու- կով և փողկերը թողած շալվարով նա ինձ թվում եր կարգին, լուրջ մարդ, բայց նրա մեջ մի ինչ-վոր անհաճո ու ծիծաղելի բան կար: Նա ատում եր աղախնին, վոր մի տարորինակ կին եր, — դժվար եր հասկանալ բարի յե, թե չար:

— Աշխարհում ամեն բանից ավելի կոիվ եմ սիրում, — ասում եր նա, լայն բանալով իր սկ, կրակոտ աչքերը: — Ինձ համար միե- նույն ե, ինչ կոիվ ուղում ե լինի. աքլորներն են կովում, շները, թե գեղացիք — մեկ ե ինձ համար:

Յեկ յեթե բակում աքլորները կամ աղավսիները կռվում ելին,  
նա, ձեռի գործը թողնելով, լուսամուտից կռվին հետեւմ եր մինչև  
վերջը, խուլ ու համր կարած:

Յերեկոները նա ինձ ու Սաշային ասում եր.

— Ի՞նչ եք, տղերք, պարապ նստել, ավելի լավ կլնի կռվեք:  
Սաշան բարկանում եր.

— Յես քեզ համար տղա չեմ, հիմար, այլ յերկրորդ գործա-  
կատար:

— Ե՛, յես եղ բանը չեմ տեսնում հլա: Ինձ համար, ով դեռ  
պսակված չփ—յերեխա յե:

— Հիմար, հիմարի գլուխ...

— Սատանան խելոք ե, բայց աստված նրան չի սիրում:  
Նրա առածները մանավանդ գրգռում ելին Սաշային: Նա ծաղ-  
րում եր նրան, իսկ աղախինը, աչքը նրա վրա ծռելով, ասում եր.  
— Ի՛, բգեզ...

Միքանի անգամ Սաշան ինձ խրատեց աղախինի յերեսը, քնած  
ժամանակ, կոշկի ներկ կամ մուր քսել, նրա բարձի մեջը քորոցներ  
խրել կամ մի վորեւ ուրիշ տեսակի «հանաք» անել, բայց յես աղախ-  
նից վախենում ելի. բացի զրանից նա խորը չեր քնում և հաճախ  
զարթնում եր. լամպը վառում և մահճակալի վրա  
նստած՝ նայում եր դեպի անկյունը: Յերբեմն նա գալիս եր ինձ  
մոտ՝ փեշի յետեւ և, ինձ զարթնում ելով, խողում եր խռպոտ ձայնով:  
— Քունս չի տանում, Լեքսել. վախում եմ ինչ-վոր բանից.  
Խոսիր ինձ հետ:

Կես քուն, կես արթուն ես ինչ-վոր բան ելի պատմում նրան,  
իսկ նա անխոս նստում եր ու որորվում...

Մի որ Սաշան ինձ ասաց.

— Կուզես նայենք իմ սնդուկը:

Վաղուց ելի ուզում իմանալ, թե ինչ ե պահում նա իր սնդու-  
կում: Նա զրա վրա կողպեք եր կախում, իսկ բաց եր անում ա-  
ռանձին զգուշափորությամբ և, յեթե փորձում ելի նայել սնդուկը,  
հարցնում եր կոպիտ.

— Ի՞նչ ես ուզում: Հ՞ո:

Յերբ յես համաձայնություն տվի, նա նստեց անկողնու վրա,  
առանց վոտները կախելու, և արդեն հրամայական յեղանակով կար-  
գադրեց, զոր սնդուկը դնեմ անկողնու վրա, իրա վոտների մոտ:  
Բանալին խաչի հետ միասին կախված եր վզի դայրանից: Խոհա-  
նոցի մութ անկյուններին նայելով, նա լուրջ կերպով հոնքերը վրա  
տվեց, կողպեքը բաց արագ, փշեց սնդուկի կափարիչին, կարծես

տար լիներ, և, վերջապես, բարձրացնելով այս, միքանի ձեռք սպի-  
տակեղեն համեց:

Մնդուկը կիսով չափ լիքն եր գեղի տուփերով, թելի բազմա-  
գույն թղթերով, կոշկի ներկի և ձկան թիթեղե տուփերով:

— Սա ի՞նչ է:

— Հիմի կտեսնես...

Նա սնդուկը գրկեց վոտներով ու կռացավ նրա վրա, կամա-  
ցուկ յերգելով:

Յես սպասում ելի, վոր խաղալիքներ կտեսնեմ. յերբեք խաղա-  
լիք չելի ունեցել և նրանց վերաբերվում ելի արտաքուստ արհա-  
մարհանքով, բայց առանց նախանձելու նրանց տիրոջը, ինձ շատ  
դուր յեկավ, վոր Սաշան, ալզպես մի լուրջ տղա, խաղալիքներ ունի.  
թեև նա թագցնում ե ամաչկոտությամբ, բայց այդ ամոթը հասկա-  
նում ելի:

Առաջին տուփը բանալով, նա հանեց ակնոցի մի շրջանակ, դրեց  
քթին և, խստությամբ ինձ նայելով, ասաց.

— Սա վոչինչ վոր ապակիներ չունի. ես ել եսպես ակնոց ե:

— Տուր նայեմ:

— Սա քու աչքերին չի գալ: Սա թուխ աչքերի համար ե, իսկ  
քու աչքերը մի տեսակ բաց գույն ունեն,— բացատրեց նա և վա-  
խեցած աչք ածեց ամբողջ խոհանոցը:

Կոշկի ներկի տուփի մեջ բազմատեսակ կոճակներ կային:

Նա հպարտորեն բացատրեց.

— Ես բոլորը փողոցից եմ հավաքել: Յերեսունյոթ հատ ե  
արգեն...

Յերբորդ տուփի մեջ մեծ պղնձե քորոցներ ելին, նույնպես  
փողոցից հավաքած, հետո կոշիկի կրունկներին խփելու պայտեր՝  
մաշված, կոտրտված կամ ամբողջ, կոշիկի և կիսակոշիկի կոճակներ,  
դռան պղնձե կոթ, աղջկա գլխի սանր, «Յերազահան» և ելի այ-  
պես, նույն արժեքի, շատ բաներ:

Փալասներ և վոսկորներ հավաքելիս յես հեշտությամբ կարող  
ելի մի ամսվա մեջ տասն անգամ ավելի այդ տեսակ մանր-մունք  
բաներ հավաքե: Սաշայի իրերը հիասթափեցրին ինձ և միաժամա-  
նակ խղճահարություն զարթեցրին դեպի նա: Իսկ ինքը Սաշան  
ամեն բան դիտում եր ուշադիր, սիրով մատները բոում եր նրանց.  
գուրս ընկած աչքերը նայում ելին խանդաղատանքով ու հոգածու-  
թյամբ, բայց ակնոցը նրա մանկական դեմքը գարձնում եր ծիծաղելի:

— Սա ինչի՞դ ե պետք:

Նա արագ նայեց ինձ ակնոցի շրջանակի միջից և հարցրեց.

— Ուզում ես, մի բան սվիրեմ քեզ:

— ԶԵ, հարկավոր չի ..

Նա, ըստ յերեսլին, իմ մերժումից և դեպի իր հարստությունը ցուց տված անուշագրությունից վիրավորված՝ մի ըովելուեց, ապա կամացուկ առաջարկեց.

— Սըբիչը վերցրու, մի սրանք սրբենք, թէ չե շատ են փոշուել...

Յերբ իրերը սրբվեցին ու դասավորվեցին, Սաշան շուշալվեց վերակի տակ, յերեար դեպի պատն անելով: Անձրկ եր դալիս, կտուրը կաթում եր, քամին ծեծում եր լուսամուտները:

Առանց յերեսը շըջելու, Սաշան ասաց.

— Սպասիր, մի պարտեզը չորանա, յես քեզ մի ենպես բան ցուց տամ վոր—խելքիդ ծերը կնա:

Ու միքանի որ անց, յերբ մի տոն որ մինչև ճաշ առուտուր արինք, տանը ճաշեցինք և յերբ տանտերերը ճաշից հետո պառկեցին քնելու, Սաշան խորհրդավոր ասաց ինձ.

— Գնանք:

Դուրս յեկանք պարտեզ: Հողի մի նեղ շերտի վրա, յերկու տան արանքում, մոտ տասը-տամնընդինդ պառավ լորիներ կալին, վորոնց չոր մերկ ճղները կախվել ելին անկենդան: Յեվ դրանց արանքում վոչ մի ագռավի բուն: Այդ լորիներից բացի պարտեզում եւ վոչինչ չկար - վոչ թուփ, վոչ կանաչ:

Սաշան անցավ—զնաց պարտեզի անկյունը, կանդնեց լորենու տակ և աչքերը չոած նայեց հարկան տան պղտոր լուսամուտներին: Հետո պղզեց և ձեռներով յետ տվեց տերեների կույտը, — յերեաց ծառի հաստ արմատը և նրա մոտ յերկու աղյուս՝ խորը՝ հողի մեջ դրված: Սաշան վերցրեց դրանք. նրանց տակ յերեաց տանիքի թիթեղի մի կտոր, թիթեղի տակ քառակուսի մի աախտակ և, վերջապես, բացվեց մի փոս, վոր գնում եր դեպի արմատի տակը:

Սաշան լուցկի վառեց. հետո մեղրամոմի կտորը վառելով, կունեց այդ փոսն ու ասաց ինձ.

— Տես: Միայն թէ չվախենաս...

Ինքն, ըստ յերեսլին, վախենում եր. մոմը նրա ձեռին գոթացան և ազատ ձեռը կամացուկ դեպի մեջքը տարավ: Նրա վախն անցավ ինձ. յես մեծ գղուշությամբ նայեցի արմատի տակի խորությունը—արմատն անձավի համար կամարի տեղ եր ծառայում. — խորքում Սաշան յերեք կտոր մոմ վառեց, վորոնք անձավը լցրին կապույտ լույսով: Դա բավական ընդարձակ եր, խորությունը կին մի դուլի չափ, բայց ավելի լայն եր. նրա պատերն ամբողջութիւն զարդարված ելին գունավոր ապակիների կտորներով և թելի

ամանների փշրանքներով: Մեջտեղը բարձրության վրա, վոր ծածկված եր կարմիր կտորով, դրված եր մի փոքրիկ դագաղ՝ արձակ թղթով պատած կիսով չափ եւ լնչ վոր կտորով ծածկած վորի տակից դուրս ելին ցցվել թռչնի վուներ և ծափ սրակտաց զլուխ: Դագաղի այն կողմը դրված եր մի գրակալ, վրան՝ պղնձե խաչ, իսկ գրակալի շուրջը վառվում ելին ւերեք մեղրամոմի մնացորդը՝ մոմագրակալ շուրջը վառվում ելին ւերեք մեղրամոմի մուտքը: Կանաչը կամանք կամակալ շուրջը վառվում ելին ւերեք մեղրամոմի մուտքը:

Կրակի լեզվակները թեքվում ելին դեպի անձավի մուտքը. Նրա ներսը գունատ պսպղում ելին բազմագույն կայծեր ու բծեր: Մոմի, փթության ու հողի հոտը փշեց յերեսիս: Յեվ այդ բոլորն իմ մեջ առաջ բերեց զարմանք և վանեց իմ վախը:

— Լավ ե, — հարցրեց Սաշան:

— Սա ինչու համար ե:

— Մատուռ ե. — բացատրեց նա: — Նման ե:

— Զիբտեմ:

— Իսկ ծիտը—մեռած ե: Նրա վոսկորները գուցե մասունք դառնան, վորովիեակ անմեղ նահատակ ե...

— Դու նրան սատկած ես գտե՞լ:

— Զե, նա ինքը թռավ յեկավ մեր սարայը, յես գլխարկով ծածկեցի նրան ու խեղեցի:

— Ինչու:

— Ենպես:

Նա նայեց աչքերիս և նորից հարցրեց.

— Լավ ե:

— Զե:

Այդ ժամանակ Սաշան կուցավ անձավի վրա, արագորեն ծածկեց այն տախտակով, թիթեղով. աղյուսները կոխեց հողի մեջ, վուկեց այն տախտակով, թիթեղով. աղյուսները կոխեց հողի մեջ, վուկեց. տի կանգնեց և, ծնկների ցեխը մաքրելով, խստությամբ հարցրեց. ինչու չի դուր գոլիս վոր:

— Խզում եմ ծափն:

Նա կուրի պես անշարժ աչքերով նայեց ինձ և, կուրծքս հրեւով, գոչեց.

Հիմար: Գու եղ նախանձից ես ասում, թէ դուր չի գալիս: Զինի դու ավելի լավ ելիր պահում քու թռչուններին:

Յես հիշեցի իմ թռչուններին և վատահ պատասխանեցի.

— Իհարկե, ավելի լավ:

Սաշան պինջակն ուսերից զցեց զւանին և, թեքերը քշուելով, թքեց ափերի մեջ ու առաջարկեց:

— Դե վոր եղակես ե, առի կովենք:

Յես կովել չելի ուզում. ճնշված ելի թուլացնող ձանձրութից և անհարմար ելի զգում նայիլ քեռուս տղի կատաղած դեմքին:

Սակայն Սաշան վրա պրծավ, զլխով խփեց կծքիս, վալր զցեց, ձի արավ նստեց վրաս ու գոչեց.

— Աղը՞լ ես ուզում, թե մեռնել:

Յես նրանից ուժեղ ելի և շատ բարկացա. մի բոպե անց նա լերեսն ի վայր գետնին պառկած, զլուխը ձեռներով բոնած՝ խոխուցնում եր. Վախենալով, յես սկսեցի բարձրացնել նրան, բայց նա ձեռներն ու վոտները թափահարում եր, դրանով ավելի ևս ինձ վախեցնելով, թե չլինի մի բան պատահեց:

Յես մի կողմ քաշվեցի, չիմանալով ինչ անել, բայց նա, գլուխը բարձրացնելով, ասաց.

— Ի՞նչ տարար: Եսպես պիտի պառկեմ-մնամ, մինչև խաղելինն ու կնիկը գան տեսնեն, իսկ են ժամանակ կդանդատվեմ քեզնից, և քեզ դուրս կանեն:

Նա հայնոյում, սպառնում եր. նրա խոսքերն ինձ բարկացըն. յես նետվեցի դեպի անձավը, բարերը հանեցի, դադաղը ծտի հետ միասին պատի վրայով նստեցի փողոց, անձավի ներսը բոլորովին քանդեցի ու վոտներով տրորեցի:

— Առ քեզ. տեսա՞ր:

Սաշան իմ գժութանը վերաբերվեց տարորինակ կերպով. գետնին նստած, բերանը փոքր ինչ բաց արած՝ հետեւում եր ինձ, առանց բան ասելու, իսկ յերբ վերջացը, նա, առանց շտապելու, վեր կացավ, թափ տվեց իրեն և, պատրիարքին ուսերին զցելով, հանգիստ ու չարագուշակ ասաց.

— Հիմի կտեսնես գլուխդ ինչ կզա, սպասի մի քիչ: Եղ բոլորը յես դիտմամբ արի քեզ համար. եղ-կախարդանք եւ. Տեսար...

Յես այդ խոսքերից հանկարծակի յելած՝ նստեցի. սիրտս սառավ կարծես:

Իսկ Սաշան դնաց, առանց յետ նայելու, եր հանգստությամբ ինձ ավելի ճնշելով:

Յես վճռեցի մյուս որն ևեթ փախչել հեռանալ քաղաքից, տիրովիցս, Սաշալից ու նրա կախարդանքից, և այդ ամբողջ անախորժ, հիմար կլանքից:

Մյուս որն աղախինը, ինձ զարթեցնելիս, ճշաց.

— Տեր աստված: Ես ի՞նչ ե քու յերեսի հալը...

«Կախարդանքն սկսվեց», մտածեցի յես ճնշված սրտով:

Բայց աղախինն այնպես կչկշաց, վոր յես ել ժպտացի ակամա և նայեցի նրա հայելուն. յերեսս ամբողջ մուր եր քսված:

— Ես Սաշան ե արել:

— Բա լես, — ծիծաղեց աղախինը:

Յես սկսեցի վոտնամանները մաքրել, ձեռս կոխեցի կոշիկի մեջ՝ մատս քորոց մտավ

— Ա՛յ քեզ կախարդանք:

Բոլոր կոշիկների մեջ ել քորոցներ ու ասեղներ կային. այն-

պես վարպետորեն դրված, վոր բոլորն ել խրվում ելին ձեռիս ափը:

Այդ ժամանակ յես մի աման սառը ջուր վերցրի և մեծ բավա-

կանությամբ լցրի դեռ ևս քնած կամ քնած ձեացող կախարդի գլխին:

Բայց և այնպես ևս ինձ վատ ելի զգում. բոլոր ժամանակ աշ-

քը առաջն եր դագաղը՝ ծտի մարմնով, նրա մոխրագույն կուչ յե-

րիս առաջն եր դագաղը և խղճալիորեն վեր ցցված կտուցը, իսկ դագաղի

կած վոտները և խղճալիորեն վեր ցցված կայծեր են վառվում, կարծես ծիա-

շուրջն անդադար բազմագույն կայծեր են վառվում. Դագաղը լայնանում ծան և ուզում բռնկել, բայց չի կարողանում. Դագաղը լայնանում եր, թունի ճանկերը մեծանում ելին, ցցվում դեպի վեր ու դողում կենդանացւած:

Յես վորոշեցի այդ որը յերեկոյան փախչել, բայց ճաշից առաջ, նավթավառի վրա շորվա տաքացնելիս, յես, մտքիս յետեկց ընկած, համարյա յեփեցի այն, իսկ յերբ սկսեցի նավթավառը հանգնել,

համարյա յեփեցի ամար սկսերիս վրա, և ինձ ուղարկեցին հիվան-

դանոց:

Պապս, տատս և բոլոր մարդիկ միշտ ասում ելին, վոր հիվան-

դանոցում մարդկանց սովածան են անում, ուստի յես իմ կյանքը

վերջացած ելի համարում: Մոտեցավ ինձ սպիտակ հագած, ակ-

նոցով մի կին, իմ գլխավերել դրված սև տախտակի վրա գրեց

ինչ վոր բան:

— Ասունդ ի՞նչ ե, — հարցրեց նա:

— Վոչինչ:

— Բա դու անուն չունես:

— Զե:

— Դե հիմարություն մի անի, թե չե կծեծեն: Յես, առանց

նրա ասելու յել, հավատած ելի, վոր կծեծեն, այդ պատճառով ել չպատասխանեցի:

Ես կատվի պես փնչացը և կատվի պես ել անձան հեռա-

ցավ-գնաց:

Գիշերը յեկավ, բոլոր մարդիկ պառկեցին մահճականերին,

թագնվեցին մոխրագույն վերմակների տակ, և շուրջն հետեւ

լուսություն տիրեց:

Մոտածեցի՝ լավ կլինի տատիս նամակ գրեմ, վոր գա ինձ հի-

վանդանոցից գողանաւանի, քանի կենդանի յեմ. բայց գըել չեմ  
կարող. վոչ ձեռներս կարող են բան անել, վոչ ել թուղթ ու զրիչ  
կա: Փորձեմ, չի աջողվի արդյոք դուրս ծլկվել այստեղից:

Գիշերը հետզհետե խաղաղվեց: Կամացուկ վուներս իջեցրէ  
հատակին, մոտեցա դռանը. նրա մի փեղկը բաց եր - միջանցքում,  
լամպի առաջ, փայտե թիկնաթոռի վրա յերևաց մի ալեխառն գլուխ,  
վոր աչքերի մութ խոռոչներով նախում եր ինձ: Յես չկարողացա  
թագնվեմ:

— Ո՞վ ե եղտեղ ման գալիս: Մի դեսն արի:

Զայնը սարսափելի չեր. հանդիսաւ եր: Յես մոտեցա, նայեցի  
նրա կոլոր դեմքին, վոր ծածկված եր շատ կարճ մազերով, — գլխի  
մազերն ավելի յերկար ելին, իսկ գոտկից կախված եր մի փունչ  
բանալի: Յեթե նա միրուք ունենար և ավելի յերկար մազեր, կնմա-  
ներ Պետրոս առաքյալին:

— Դու վառված ձեռներով տղան ես: Ի՞նչու յես գիշերը թրե  
գալիս: Վո՞ր որենքով:

Նա պապիրոսի ծուխը փչեց կրծքիս ու դեմքիս, տաք ձեռով  
վիզ գրկեց և դեպի իրեն քաշեց:

— Վախում ես:

— Վախում եմ:

— Եստեղ մտնելիս բոլորն ել վախում են: Բայց վախենալու  
բան չկա... Ծխել ուզում ես: Լավ, մի ծխի: Դեռ վաղ ե, մի յերկու  
տարի սպասի... իսկ հերդ ու մերդ հւր են: Հերն ու մեր չունեսա-  
ւեն, հարկավոր ել չեն. առանց նրանց ել կապրես, միայն թե մի  
վախի: Հասկացար:

Յես վաղուց արդեն այդպես պարզ բարեկամաբար, հասկա-  
նալի խոսքերով զրուցող մարդ չելի տեսել, ուստի անսանելի հաճելի-  
չել նրան:

Յերբ նա ինձ իմ մահակալի մոտ տարավ, յես խնդրեցի.

— Նստի ինձ մոտ:

— Կարելի յե, — համաձայնեց նա:

— Դու հի:

— Յես: Զինվոր եմ, ամենախսկական զինվոր, կովկասյան զին-  
վոր: Պատերազմում ել եմ յեղել, ինչպես չե: Զինվորը կովի համար  
ե ապրում: Յես հունգարացիների հետ ել եմ կովել, չերքեցների  
հետ ել, լեհերի ել — ինչքան ասես: Պատերազմը, ախպեր ջան, մէքծ  
լրբություն ե:

Յես աչքս կպցրի, իսկ յերբ բաց արի — զինվորի տեղը նստած  
եր տատու՝ սև շորերը հագին:

Նա կուացավ դեպի ինձ ու հարցրեց:

— Ի՞նչ ե, բայիկս: Վասել են քեզ...

Յես դեռ մտածում ելի, թե յերազ եմ տեսնում, ու լուսում ելի:  
Բժիշկը յեկավ, վառված ձեռներս կապեց, և ահա յես տատիս  
հետ կառքով գնում եմ քաղաքի փողոցներով:

Արել փայլում ե պայծառ, ամպերն սպիտակ թուշունների նման  
լողում են յերկնքով:

Պատահեց լայնաբերան մի կին՝ զրկին ուռենու ատլասե ձներ,—  
գարունը գալիս ե, շուտով զատիկ կլինի:

Սիրտս ճխաց արտուտի պես:

— Յես քեզ, տատի ջան, շատ եմ սիրում:

Դա նրան չզարմացրեց. հանդարտ ձանով ասաց.

— Հարազատ եմ — դրա համար. ինձ, առանց պարծենալու  
կասեմ, ոտարներն ել են սիրում...

Յես նորից յեկա մեր տուն:

— «Մանկությունը» յեկ «Ծառայության մեջ» հատվածների հիման  
վրա փորձեցիք բնորոշել այն միջավայրը, վորի մեջ ապրել ե հեղինակը  
մանկության յեկ պատանեկության ընթացքում:

— Փորձեցիք բնորոշել նկարազրված մարդկանց առանձին-առանձին:

— Բնորոշեցիք հեղինակի վերաբերմունքը դեպի իր շրջապատն ու

մարդիկ:

— Շրջապատի վերաբերմունքը դեպի հեղինակը:

— Բնավորության վորպիսի՝ զծեր ելին զարգանում հեղինակի մեջ  
շնորհիվ այդ միջավայրի յեկ մարդկանց հետ ունեցած այդպիսի փոխհա-  
րաբերության:

— Ո՞վ ե պատմում այս հատվածներում՝ հեղինակը, թե մի ուրիշը:

— Կարելի՝ յե այս հատվածները համարել ինքնակենսազրական:

— Փորձեցիք վերհիշել ու զրել ծեր մանկությունը. ովքե՞ր ելին ձեզ  
շրջապատում, վո՞ր գեպքերն են ծեր վրա թողել ուժեղ տպավորություն,

ի՞նչպես եր այժմ զնահատում այդ դեպքերը:

— Համեմատեցիք ծեր ապրած մանկությունը, ծեր շրջապատն ու  
մարդկանց այստեղ նկարազրվածի հետ: Վո՞րն ե հիմնական նմանությունը  
կամ տարրերությունը:

## Ա. ՍԵՐԱՅԻՄՈՎԻՉ

### ՀԱՆՔԱՀՈՐՈՒԹ

— Դե, գնա, լավ, գնա, — ասում եր կեղտոտ, մաղերը խոիվ, ածուխի փոշով ծածկված հանքափորն իր տասներկու տարեկան տղին, վոր արագ քայլերով գնում եր նրա առջեից:

Տղան ել հոր պես սև եր, պատուիված շորերով և նույնպես բորիկ վոտներին ծակ կոշիկներ հագած:

— Զեմ ուզում, հալրիկ, չեմ աշխատի... ես ինչ բան ե, բորի համար տոն ե, հենց մենակ յես... — կրկնում եր նա արտասվող ձայնով:

— Ե, հիմար, հիմար ես...

Յեվ յերկում ել շարունակում ելին արագ քայլերով գնալ սեղին տվող ճանապարհով: Նրանց առջե յերեաց մի մոալ աղյուսե շենք: Դոնից հանքափորներ ելին դուրս գալիս:

Տղան առաջինն ինքը աստիճաններով վազեց վեր ու մտավ ներս: Հանքափորը հետեւց նրան և մոտեցավ գործափարին.

— Իվան իվանիչ, իմ տղին գրի ջրհանի վրա աշխատելու:

Լայն պինջակ հագած մարդն ինչ-վոր գրեց: Տղան մեջքը նրան արած՝ լուսամուտից նայում եր դուրս: Ծննդյան տոների յերեք որը նա պիտի անդներ հանքահորում: Վիշտն ու հուսահատությունը ճնշում ելին նրա սիրալ: Շրթները դողում ելին: Աչքերը կկոցում եր, հոնքերը կիտում, աշխատելով զապել իրեն և արցունքները կուլ տալ: Հալրը նույնպես կանգնել եր, սպասելով, թե յերբ գործափարը ճանապարհ կդնի իրենց:

— Ի՞նչ ես յերեխին նեղում, — խոսեց սև, մոալ գեմքով մի հանքափոր, վոր սպասում եր վող ստանալու:

— Յես չեմ նեղում, կարիքն ե նեղում. միշտ ես չկա, են չկա:

— Համար 12 փոքրիկ ջրհանի վրա ովք ե գրված, — ասաց գործափարը, ձայնը բարձրացնելով: — Հը, ովք ե: Այստեղ Ֆինովե-

— Եստեղ եմ, — ասաց մի խոպոտ ձայն և պատառում շորերով մեկը, վորին զիշերով հանդիպելը սարսափ կազդեր, յերեաց իջնող մթնաշաղի կիսախավարում: Նրա ուսած, քնկոտ, բարկացած դեմքը և խոպոտ ձայնը վկայում ելին, վոր նա մոլի հարբեցող ե:

— Տղին առ և իջիր, սպասում են հերթափոխության:

Պատառում շորերով մարդը ծուռը-ծուռը նայեց տղափին:

— Սա ինչ ե, վոր տալիս եք ինձ: Յես սրա հետ ի՞նչ անեմ:

— Դէ, դէ, գնա, շատ մի խոսի:

— Գնա... ինքող գնա, յեթե ուզում ես: Զերն են ե ամեն ինչ եժան նստի... — և կոպիտ հայոյանք տալով, գնաց գեպի բացվածքը, վորը հատակի միջով իջնում եր յերկրի խորքը:

Տղան անխոս հետեւց նրան: Նրանք մոտեցան քառանկյունի բացվածքին և մտան այստեղ շղթաներով կախված վանդակի մեջ: Բացվածքը թողեց մեքենան, և վանդակը ծածկվեց խամբենավարը բաց թողեց մեքենան, և վատարի բառանկյունի բացվածքը:

Վանդակը ցնցվեց ու կանգ առավ: Բանվորն ու փոքրիկ տըղան գուրս յեկան նրա միջից:

— Դե արի ելի, ինչ ես բերանդ բաց արել, — չորս թիամբ ձայն տվեց Ֆինովենովը տղափին:

Յեվ նրանք գնացին՝ լուսամուտից ու խավարի միջով, կռացած, գուրս գնացնեն հանքի վերին շերտերը պապուխներն իջեցրած, վոր չգիպցինեն հանքի վերին և խավարի միջից հող գերաններին: Նրանց վուները սահում ելին և խավարի միջից դուրս ցցված քարերը քիչ եր մում նրանց յերեսին դիպչելին:

Բանվորի յետեկից գնացող Սենկան մի յերկու անգամ գլուխը գուրս անդամ կամարից կախված քարերին, և ավելի հացավացրեց, դիպցինելով կամարից կախված քարերին, մասը շնչելով, բոնում սառը և խոնավ ճախ եր սահում-ընկնում և, ծանը շնչելով, բոնում սառը և խոնավ պատերը:

«Գոնե շուտ տեղ հասնելինք»: Յեվ նա լարված ականջ եր դընում, թե չի լսվում արդիոք իրենց սպասող բանվորների ձայնը: Նում, թե չի լսվում արդիոք իրենց սպասող բանվորների ձայնը:

— Կարծես ջուր են քաշում, հը, — հանկարծ խոսեց Ֆինովենովը:

Յերկուսն ել կանգ առան և ականջ գրին: Խավարի միջից լըս-

վերկուսն ել կանգ առան և ականջ գրին: Ճարինակ միորինակ ու տխուր

վում ելին մարդկային ինչ-վոր տարօրինակ, միորինակ ու տխուր

Թե Սենկան, թե Յեղորը փոքը ինչ թեթևացած շունչ քաշեցին,  
զգալով մարդկանց ներկայությունը և այն, վոր վերջապես տեղ  
հասան, և այս հարկ չի լինի կոանալու և խավարի մեջ վայր  
ընկնելու:

Հանքափորները լուռ, առանց մի խոսք ասելու, հավաքվեցին  
ու գնացին: Նրանց քաղերի ձայնը լոեց, Յեղորն ու Սենկան նորից  
մնացին միասին և լերկումն ել կրկին մենակություն, ցուրտ ու  
ձանձրութեացին:

— Յեղորն շտապ պապիրոս ծխեց, միքանի անդամ, իրար լետեկից,  
ներս ծծելով:

— Այ, ինչ եմ ասում, Սենկա, — ասաց նա պապիրոսի մնա-  
ցորդը ջուրը գցելով, — կանգնիր մեքենալի մոտ ու պտտիր, հետն  
ել հաշվիր, թե քանի անդամ ես պտտում. լեր հարյուրին հասնես՝  
ձեռ տուր ինձ. իսկ յես ուղում եմ մի քիչ քնեմ:

— Ա՛յ քեռի, շատ չընես, թե չե հալից կընկնեմ, — ասաց Սեն-  
կան, վոր վախենում եր մենակ մնալուց:

— Լավ, քիչ կընեմ. հոգնել եմ: Հետո յես կպտտեմ, դու  
կհանգստանաս:

Յեկ Յեղորը լամպը հանգցրեց: Լույսը բանվորների հաշվին եր,  
և այդ պատճառով աշխատում ելին մութի մեջ, վոր մոմր տնտե-  
տեղ մոտիկ թափված մանր ածուխի կուտը և շարժվեց այնտեղ:

— Ասենք, ինձ չկարթեցնես, յես շատ քիչ պիտի քնեմ. քու  
փայլ վերջացնես թե չե, յես կզարթնեմ: Տես, ջրհանը չթողնես,  
մեն ինչ լոեց:

Սենկան կոացավ, ձեռները դես ու դեն տարավ, գտավ ջրհա-  
սահեց խողովակով, հեծկլտաց կարծես և, ջուրը ծծելով, քաշեց  
վեր, իսկ մի վայրկան հետո լսվեց, թե ինչպես ջրի մի բարակ շերտ  
ընդհատումներով վազեց խողովակով:

— Մեկ, — ասաց Սենկան, զգալով, թե ինչպես կոշիկների ծա-  
կից սառը ջուր և մտնում վասների տակ, և նրա ձայնը միասիսակ

Յեկ Սենկան սկսեց մեքենան պտտել, առջեր վոչինչ չջոկելով:  
Ջրհանի գլանածե ծալըն իրար լետեկից սկսեց բարձր ու ցածր ա-  
նել ջրհանի կոթի հետ միասին և, հեծկլտալով, ջուր հավաքել:

Նա մոռացել եր այն բոլորը, ինչ հուզում եր նրան այսոր և  
ինչ մնացել եր այսուեղ՝ տանը՝ իր լետե, ու համաշափորեն պըտը-  
տում եր ու բարձր ձախով համրում, կարծես այդ հաշվի մեջ եր  
գտնվում ամեն բան, և իրա այստեղ՝ այս խոնավ, ցուրտ, անթա-  
փանցելի խավարի մեջ լինելը կարծես հենց այդ հաշվի համար եր:  
Ասենք, դա անում եր և նրա համար, վոր լոեցնի մենակության և  
հետզհետե աճող անորոշ վախի զգացումը: Նա լերեեմն հաշվիը  
կորցնում եր և, գլխի ընկնելով, արագ, առանց լերկար մտածելու  
կանգ եր առնում մի փորեկ թվի վրա և կրկին սկսում միակերպ  
ձախով հաշվել, և կրկին շրջապատում ելին նրան լոռությունն ու  
խավարը: Նա շարունակում եր պտտել, զգում եր, վոր տեղը նեղա-  
նում եր, չնչելը դժվարանում, և քրտինքը կաթիներով թափվում  
էր ճակատից: Զեռներն ու վոտները թուլացել ելին և կարծես կո-  
տրվում ելին, — նա վաղուց հարյուրն անցել եր:

Զուրը հետզհետե ավելանում եր: Ջրհանն անսովոր դժվարու-  
թյամբ, հեծկլտալով, լարումից ցնցվելով, քաշում եր հեղուկ արձը-  
ճի պես ծանր ջուրը:

Սենկան աչքերը փակեց և սկսեց փակ աչքերով աշխատել,  
բայց դա ավելի սարսափելի լեր: «Ո՞, տեր աստված... Հիսուս ու  
բայց դա ավելի սարսափելի լեր: Կամարների Քրիստոս...», լսվեց նրա հառաջանքը ցած կախված կամարների  
տակ:

Ժամանակն անցնում եր, կոշիկներն արդեն ջրի մեջ ելին, և  
ջրհանը դանդաղ ու դժվար, կարծես վերջին շունչը փչելով, բարձ-  
րացնում ու իջեցնում եր իր գլանածե ծալըրը:

«Հեղեղելու լե...»: Նա վերջին հուսահատական ճիգն արավ և  
ուժ տվեց ջրհանի կոթին: Ջրհանի գլանածե ծալըրը գնաց մինչե-  
ցած, չպաղացրեց, ջուրը ծծեց, ցնցվեց ու կանգ առավ: Սենկան ել  
շկարողացրավ պտտել:

Սենկան պազել եր ջրի մեջ և լալիս եր: Նա վախենում եր  
գնալ Յեղորին վնասուելու, նա գուցե և բոլորովին չկար:

— Քեռի Յեկնր...

Սենկան մենակ եր ու անողնական: Զուրը հետզհետե բարձ-

րանում եր. թաց վալրտիկը կպել եր մարմնին:

— Հը, ինչ ես գոռում, լակոտ: Տես ինչքան ջուր և թափ-

վել:

Յեկ Սենկալի ականջակոթին իջնող հարվածը ցրեց նրա շուր-  
ջը տիրող սարսափը: Մեկը նրա կողքին թքեց ձեռի ափերին, և

Ջրհանն սկսեց բանել շուտ-շուտ և թափով, ճիշտ ե, ելի հեծկուա-  
լով, բայց այնպես չե, ինչպես Սենկալի ձեռին:

- ինչ ես կանգնել: Գնա:
- կուցկի տուր:
- ԶԵ մի. լուցկին տամ փչացնես:
- Մութն ե ախր:
- Ճամպէն կդժնես:

Սենկան մթան միջով գնաց գեպի անցքը: Նա հասավ ածուխը մը-  
շակելու տեղը, ուր կարելի էր շարժվել պղղած միայն կամ չոքե-  
չոք, և խարխափելով ձեռներն սկսեց մանածել ջրի և կղչուն ած-  
խացխի մեջ, մինչև վոր գտավ մանր ածուխի կուտը:

Սենկան բարձրացավ և քնեց նրա վրա: Ածուխը միքիչ դես ու  
դեն գնաց և փոս ընկավ նրա մարմնի չափով: Սենկան ծոցից հա-  
նեց խոնավությունից կաղղած ու հացը և սկսեց ուտել: Աղի և ած-  
խափոշու կտորները ճոճուում ելին ատամների տակ, և կաղղած հա-  
ցը ծամփում եր խորի պես: Զեռները, վոտներն ու մեջքը ցավում  
ելին բութ ու համառ կերպով:

Սենկան հացը կերավ-վերջացրեց ու յերեսը խաչակնքեց:  
«Բաղնիսում լինելի», — մտածեց նա, կուչ յեկավ, ձեռները դրեց  
ծնկների արանքը, ծնկները մոտեցրեց կղակին, ուսերը շարժեց,  
վոր ավելի խոր տեղավորվի ածուխի մեջ, ու սպասեց, վոր քունը

— —

Քունը տարավ, և նա սկսեց յերազում տեսնել այն բոլորը,  
ինչ այնպես ցանկանում եր: Նա տեսնում եր, վոր ինքն իբր թե  
վերև՝ հողի յերեսին ե: Շուրջը տոնական ուրախություն ու աղ-  
մուկ ե: Նա գնում է փողոցով: Կողքից, մեկը մխուսի յետեկից, բո-  
ժոժները զնդզնացնելով, անցնում են կառքով զբունողները: Հետո  
նա իրեն տեսավ բաղնիսում. վոչ մի կերպ չեր կարողանում կոշիկ-  
ները հանել. նրանք սառել-կպել ելին վոտներին: Մինչ նա զբաղ-  
ված եր զրանցով, պարզվեց, վոր այդ վոչ թե բաղնիս ե, այ-  
ճաշարան: Նրան բոնեցին և զոռով սկսեցին կոխել այն խողովակը,  
վորտեղից ջրհանով ջուր եր թափվում, Նա սարսափով տեսավ այդ  
ու բացվածքը, ընդդիմացավ և վոչինչ չկարողացավ անել: Շուրջն  
աղմկում ու հայնոյում ելին. նա իր զիխավերէ ձայներ եր լսում,  
զգում եր ինչպես իրեն հրում են և ցնցում: Ուզում եր բղավել,  
վոր իրեն չծեծեն, բայց կրծքից վոչ մի ձայն չեր յելնում: Այդ  
ժամանակ մեկը կատաղած վազեց գեպի նա, կոացավ և քացով  
խփեց փորին: Ցավից շունչը կտրեց, նա հեծեծաց ու... արթնացավ:

Մթան մեջ Յեգորը հայնոյում եր և ածուխի կտորով հրում նրան:  
— Մի խփի, քեռի ջան, վեր եմ կենում, — ասաց Սենկան,

դժվարությամբ բարձրանալով:

Տենդը ցնցում եր նրան, ատամները դարկվում ելին իրար,  
թաց վոտները փետացել ելին:

— Տես հա, ծուզ անպիտանին. իս քու տեղն աշխատեմ, իսկ  
դու քնես: Ուեխդ կջարդեմ..., — աղմկում եր Յեգորը:

Սենկան միքանի քայլ արավ և հանկարծ կանգնեց, սառը, խո-

նավ պատին հենվելով:

— Քեռի ջան, հալ չունեմ:

Յեգորը խավարի միջից հայնոյանքների կարկուտ թափեց: Սեն-  
կան, ճիգ անելով և արտասուքները կուլ տալով, խարխափելով հա-  
կան, կոթ ջրհանին, կոացավ, կոթը բռնեց և սկսեց պտտել: Շուրջը նո-  
սավ ջրհանին, կոացավ, կոթը բռնեց և սկսեց պտտել: Աղի և անշարժ եր,  
րից լոռություն տիրեց, և առաջվա պես ամեն ինչ ելի անշարժ եր,  
մոռայլ ու հուսահատեցնող:

— —

— Ինչո՞ւ յեր հայրն ստիպում Սենկային աշխատելու. ի՞նչն եր դրա  
պատճառը:

— Ինչպիսի պայմաններում ելին աշխատում բանվորները հանքա-  
հորում:

— Բնորոշեցեք Յեգորին, վորպես բանվորի:

— Ինչո՞ւ յե նա այնքան անգութ վերաբերվում դեպի Սենկան. ի՞նչն  
եր այդ վերաբերմունքի պատճառը:

— Այս պատմվածքի հիման վրա փորձեցեք զրել շարադրություն  
«Յերեխանների աշխատանքը» նախահեղափոխական հանքերում» թեմայով:

«Յերեխանների աշխատանքը» նախահեղափոխական հանքերում» թեմայով:

## ԱՌԱՋԻՆ ՈՐԸ ԳՈՐծԱՐԱՆՈՒՄ

(Հասկած վեպից)

Հայն ընդարձակ բակը լիքն եր իրար վրա թափված դազգահների ու մերենաների մասերով, սալլակներով, անիմլերով, ջրհաններով և ամբողջ վագոններով։ Իգնատն անցնելով այս բոլորի մոտով՝ դռան կոթը բռնեց և վոտը դրեց գործարանի շեմքը, և նույն վալրկյանին նրան խլացրեց վորոտի և վալրի վոռնոցի միալիք։

— Հրե նա, հրե նա, նորաշենցի իզնատը հրե հա, — պտտվում,  
զարկվում, և խելագարի պես քրքջում ելին փոկերն առաստաղի  
տակին:

— Անւըրը..., — վոլոսում ու մոնչում եր ինչ վոր մի հրեշտացող ու ցածրացող ձանով,

— Տըռախ-տախ-տախ... Տըռախ-տախ-տախ...

— Կը զզ, — ողը ծակում եր մի սուր ծախ։  
Ինչապէ մի ոռակ եաճ։

Նրա հայրը՝ Մաքսիմ Պատուհանյակը, վոր բավական առաջ երգնացել, չետ չեկավ և նրա թեր քաշեց:

Հը, ի՞նչ ես բերանդ բաց արել, մատելու Յետկիոս առի:

Իգնատը հնազանդ գնաց հոր լեռկից։ Կամաց-կամաց վախն անցավ, փոխվելով զարմանքի։ Նա զարմանում եր արհեստանոցի ուժի և շարժման վրա։ Թվում եր, թե արհեստանոցը վոգեորված է։ Սկսեց նկատել, վոր այդ ամբողջ աղմկող հսկան ունի առանձին մասեր։ Այստեղ սրում ելին յերկաթե յերկար գլանակ և յերկաթի տաշեղները կտրիչի բերանից կեռ ու մեռ իջնում ելին ցած, կարծես ջղաձգվող ոճ լիներ։ Մի ուրիշ տեղ խառատը, աչքերը կուշ ածած, պղինձ եր կտրում և նրա տաշեղները դես ու դեն ելին թռչում ճռճռացող, փայլատակող շատրվանի նման։ Շտապով, անհանգիստ յետ ու առաջ եր անում ունդող դազգահի ունդիչը...

— Դե, հիմի զգուշ կաց, — նախաղգուշացը եց Մաքսիմը վորդուն, ընդարձակ ու մեծ անցքից ծռվելով ու դադայաների արանքը մտնելով: Մատդ վոչ մի տեղ չկոխես:

Իգնատին աշխատում եր զգուշ լինել: Բայց պատճեռում եր այս-  
պես, յերբ նա խույս եր տալիս մի փոկավոր անիվից կամ ատամ-  
նավոր անիվից, մյուս կողմից արդեն նրան սպասում եր մի ինչ-  
փոք դուրս ընկած լծակ կամ դուրս պրծած փոկ:

Քիչ մնաց վերնաշապիկն ատամնավոր անփփի բերասս լսվուր  
Նա վախենում եր մենակ մնալուց և աշխատում եր հորից յետ  
չմնալ: Հասնելով մի յերկար, ահագին դազգիահի, վոր դրված եր  
պատի յերկարությամբ, լուսամուտի տակ, շրջապատված յերկաթե  
վանդակով, Մաքսիմը կանգ առավ, արկղը բացեց և ուտելիքի պա-  
շարի կապոցն այնտեղ դնելով, հանեց կարիչներ, բանալիներ ու  
այլ դործիքներ: Դազգիահը լուղեց, նալեց, փորձեց առանձին մասերն  
ու բանի գցեց:

Այստեղից յերկում եր սկ, չուզունե սլուսարի խորդ չ է։  
Վարոնց վերջը ծածկվում եր կապտավուն ծխով։ Սլուներն իրենց  
պորոնց վերջը ծածկվում եր համարյա հարյուր սաժեն յերկա-  
պինդ ուսերի վրա պահում ելին համարյա հարյուր սաժեն յերկա-  
րություն ունեցող յերկաթե մի կլոր ձող, վորի վրա խիտ առ խիտ  
շարված ելին փոկավոր անիմսեր։ Թվում եր, թե այդ չուզունե,  
սառը փայլատակող անիմսերը պատրաստվում են մի տեղ թոչելու,  
իսկ ներքեսում գազգյահներն ելին, վոր հեռվում միաձուլվում ելին  
մի չուզունե զանգվածի մեջ, վոր շարժում ե իր մանրիկ անդամ-  
ները միայն։ Բանվորների այս ու այն կողմ ցրված սկ կերպա-  
ները միայն։ Բանվորների այս ու այն կողմ ցրված սկ կերպա-

— Եստեղ կանգնիր,—հրամայեց Սաքումն Իգուալու, և Երեւ  
Տառեռակ ընկերների մի խմբի:

Սուրկովը, վոր լայն գեմքով մի փոքրիկ և չափազանց շարժուն մարդ եր, յեռանդով պատճում եր կնոջ հետ ունեցած յերեկով վեճի մասին և այն մասին, թե ինչպես ինքը, վերջիվերջո «խրատել ե» նրան:

— Սուտ ես ասում, — նկատեց Ժուրբան. — յես լսել եմ, վոր կինդ ե քեզ ծեծում:

Սուրկովը տաքացավ:

Այդ ժամանակ Մաքսիմն, ընկերներին մոտենալով, բարեեց նրանց:

— Բերբը, — հարցրեց Ժուրբան:

— Ինչ արած, պետք ե իրա կերած հացն աշխատի, հե-հե.

— Ինչպես յերեսում ե, ես հացը քեզ դուր ե գալիս, հա:

Մաքսիմը փոքր ինչ շփոթվեց:

— Ինչով ե վատ: Հո գողանովի չի. մերն ե:

— Մենակ ե՞դ...

— Բայց միթե նա տասնհինդ տարեկան կա, — հարցրեց Սուրկովը:

Յեվ ճիշտ վոր, իգնատը փոքր եր, բայց Մաքսիմը խնդրեց իր քափոր գրագրին մի տարի ավելացնել. այնուամենախիվ նա խայթեց ընկերոջը.

— Դու եդ տարիքում միթե նրանից խոշոր ես յեղել:

— Այ քեզ բան, — ասաց Կոստիչել: — Նա նոր ծերության որեւին ե սկսել դեպի ներքև յերկարել:

Ծիծաղեցին:

— Հը, չտվի՞ր ուսումը շարունակի, — կրկին հարցրեց Ժուրբան:

— Ինչ ուսում, — նոթերը կիտեց Մաքսիմը: — Գրել կարդալ գիտի — հերիք ե: Դու հրեդ վոչ մի բան ել չգիտես, ինչ կա վոր:

Լսվեց մի յերկար ու դանդաղ սուլոց:

Բանվորները վեր կացան ու գնացին իրենց տեղերը:

Պազգյանների արանքով, բարեկոններին հաղիվ հազ գլխով անելով, յեկավ տուժուրկա հագած, բելգիական գլխարկ դրած վարպետի ողնական Զոլոտկոն, վոր ամիսներ առաջ դազգահի վրա աշխատում եր, վորպես խառատ:

Նրա մոտենալու ժամանակ Ժուրբան կռացավ դազգահի վրա յ ցույց տվեց, թե բոլորովին տարված ե իր աշխատանքով:

Զոլոտկոն մի բոպե կանդ առավ, կարծես սպասում եր մի բանի, ապա ուսը թափ տվեց ու գնաց առաջ:

Մաքսիմը գլխարկը վերցրեց ու խորը գլուխ տվեց:

— Հըես վորդուս բերել եմ, նիկոլայ Իվանովիչ:

— Բնը... լավ, թող գնա գրասենյակ:

Մաքսիմը քծնանքով ժպտաց:

— Յես, նիկոլայ Իվանովիչ, ուզում եմ... եստեղ մի ազատ դազգահի կա...

— Լավ, լավ. . յես կնայեմ:

Գրասենյակում իգնատը համար ստացավ և կես ժամ հետո արդեն կանգնած եր դազգահի մոտ: Նա հետաքրքրությամբ ու զարմանքով նայում եր մեքենավ արագ աշխատանքին, թե ինչը ինչպես ե գնում: Այդ հետաքրքրության շնորհիվ նա ձեռի գործիքը թողեց ու նայեց, և հանկարծ փոկը դուրս պըճնելով վայր ընկավ անիվից, կտրիչը տրաքեց: Իգնատը գլուխը կորցրած վազեց դեպի հայրը:

— Հալիկ, — քաշեց նա հոր վերնաշապիկը; — դազգահը կոտրեց...

Մաքսիմը նետվեց դեպի դազգահը:

— Թոհւ... հիմար Յես ել կածեցի ինչ ե պատահել: Բերանդ բաց մի անի՝ կանգնի, այ թե ինչ:

Ու ապտակեց նրան: Հետո փոկը տեղը գցեց ու դազգահը նորից բան գցելով, կրկին ապտակեց:

Իգնատի կողքին աշխատող աղերքը դազգարեցին ծիծաղելուց:

Իգնատի կողքին աշխատող աղերքը դազգարեցին ծիծաղելուց:

— Յեթե մի բան պատահի, ինձ ասա: Ի՞ն, սատանա... ես-

տեղ, ախտեր ջան, եղանակ իրավունք չկա, վոր ծեծեն:

Իգնատը կռացավ դազգահի վրա և կամաց պատասխանեց:

— Վոչինչ:

— Ինչ ես անում. մի կռանա, մազերդ մեքենավ բերանը

կընկնի:

Իգնատը ցնցվեց և գլուխը բարձրացրեց, — աչքերուն արցունք ներ կային: Շըթները դողում ելին:

— Վոչինչ...

Իգնատը դազգահը կանգնեցրել և յերկար նրա առաջ պազած:

յերեսը թազցնում եր ոտար աչքերից:

Իգնատը չնկատեց, թե ինչպես հայրը մոտեցավ:

— Եդ ինչ ե, քեզ պետք ե խնդրենք: Գնա տաք ջուր բեր:

Նախաճաշ ենք անելու:

Առանց հոր յերեսին նայելու, իգնատը թեյամանն առավ նրա ձեռից և գնաց դեպի տաք ջրի կաթսան, ուր բանվորները խմբվել ելին արդեն:

Զանգը տվին: Մեքենան կանգ առափ, և արհեստանոցի դպրուցը լոեց: Տարողինակ եր այդ լոռությունը, և մարդկանց ձախերը լովում ելին շատ բարձր: Ինչ-վոր մեկը մուրճ խփեց.

— Դե, դե, թարկը տուր, — լովեցին դժգոհ ձախեր:

Մուրճի հարվածները լոեցին:

Մաքսիմի դազգյանի ազատ մասի վրա դրված ելին թելամանը և ուտելիքները:

Մի կողմը նստել ելին կոստիչեն ու Մաքսիմը, մլուս կողմը Սուրկովը ու Ժուրբան: Իգնատը տեղավորվեց մի փայտի կտորի վրա:

Լուռ նախաճաշում ելին:

Հանկարծ դուռը ճռուաց և արհեստանոց մտավ պահակը, նրա յետեից մի ցեղական շուն, ապա և ինքը դիրեկտորը:

— Ըստ..., անցավ արհեստանոցով:

Կոստիչեն արագ վեր կացավ և խոնարհ գլուխ տվեց: Սուրկովը ու Մաքսիմը նույն արին: Ժուրբան ուզեց վեր կենալ, բայց իսկույն ել նստեց ու կուցավ, դազգյանի յետև թագնվելով

— Թող կորչի, — ասաց նա: — Վար սատանեն բերեց: Զի թող-

նում հանգիստ հաց ուտենք: Նստիր, տղաս:

Իգնատը տատանվում եր: Հորը նաէելով՝ նա ինքն ել ուզում եր գլխարկը վերցնել ու գլուխ տա: Բայց չեր կարողանում հասկանալ, թե ինչու համար: Միթե դիրեկտորն ազգական ե կամ ծանթ: Նրա սրտում դեռ յերկուդ չկար: Յեկ մինչ նա տատանվում եր, դիրեկտորը թագնվեց արհեստանոցի խորքում, և նույն բոպեցն նա հորից ստացավ մի ուրիշ ապտակ:

— Ինչու յես խփում, — միջամտեց Ժուրբան:

— Տեղն ե:

— Ինչու յե տեղը: Ե՞ս... նա հո քեզ չի խանգարում, վոր

Մի առ ժամանակ լոեցին:

— Սատանան գիտի, — բացականչեց հանկարծ Ժուրբան, — թե ինչու ձեզանից վոչ-վոք լրագիր չի դուրս գրում: Են, ասենք թե՝ յես անզրագետ եմ, դուք հո՝ կարդալ իմանում եք:

— Ի՞նչ կարդանք, — քմծիծաղ տվեց կոստիչել:

— Քիչ բան կա: Յես Ռոստովում վոր աշխատում եիի, ենտեղ ամեն որ կարդում ելին — սպանություն, գողություն, հրդեն... ել վժնց թե ինչ: Բա աշխարհը մենակ ես ե:

— Եղ քու ասած բաների մասին կնանիք ել կարող են

պատմել:

— Պարապ տասը մանեթ չկա, և կատեց Մաքսիմը:  
— Եղ փողով ավելի կխմես:

Սուրկովը պապիրոս ծխեց ու ծիծաղեց:  
Ժուրբան հեղնական հայացքով նայեց նրան և վեր կացավ գնաց: Իսկ մի քանի բոպե հետո արհեստանոցը նորից դղրդաց, մարդկանց ձախերը խլացնելով:

Իգնատը նորից կանգնեց դազգյանի մոտ և ոկուց պտուտակավոր մեխեր շինել:

— Քանի սն ես շինել, — հարցրեց հարկանը:

— Քսան հատ:

— Իսկ յես — յերեսունհինդ: Յեթե արագացնելի, ավելի շատ կշինելի:

— Քու անունը Պավել չի, — հարցրեց Իգնատը հարկանին:

— Ճիշտ ե: Իսկ հերս գարբնոցում ե աշխատում:

— Ըստ՝ դու մեր կողքի փողոցումն ես ապրում, չի:

— Ե՞ս, կարծեմ, մենք իարար հետ բոունցքով կովել ենք մի անգամ:

Յերկումն ել ուրախացան:

Պավելը յերկար պտուտակավոր մեխեր եր շինում, և բանի մեքենան բանում եր, Իգնատին պատմում եր իր կյանքի մագեռ մեքենան բանում եր, Իսկ հետին պատմում եր իր բանում եր սովորելովկայի միակ գլորցում: Ուսուցիչը, վոր առաջ դաստիարակ Նովոսելովկայի միակ գլորցում: Ուսուցիչը, վոր առաջ դաստիարակ Եր յեղել ինչ-վոր աղն լակ սնի ընտանիքում, աշակերաներին ծեծում եր յեղել ինչ-վոր աղն լակ սնի ընտանիքում, աշակերաներին ծեծում եր մտրակով: Յերկու տարի գլորցում մնալուց հետո՝ Պավելը փառ մտրակով:

Իգնատը հարկանին վատ եր լուս և բոլոր ժամանակ աշխատում եր:

— Ե, հերիք ե, — ասաց Պավելը: — Զեներ լվանալու ժամանակ ե: Դու առաջ յուղ քսի, հետո ձիլոպով կորբես:

Արհեստանոցի դղրդոցը նկատելի կերպով նվազեց, վորոշակի լովում ելին մարդկանց ձախերը և պողպատե կարիչների ձախնը, զործիքները հավաքում ելին:

Զանգը տվին, մեքենան կանգ առավ, և բանվորները շարժվեցին, աղմկեցին ու սկսեցին դուրս գալ շենքից:

Ճաշից հետո Պավելն Իգնատին ցուց տվեց, թե ինչպես պետք ե աշխատել, ինչպես պետք ե կտրիչը որել այն միջոցին, յերբ դազգյանը բան ընկած աշխատում ե:

Յես, ախպեր ջան, յերկաթի վրա փորագրում ել եմ, — պարձեցավ Պավելը:

Մոտեցավ Զերնիցինը, վերցրեց շինած պառատակների մի մասը և նրանց տեղը դրեց չշինվածներ։ Իգնատը չընդդիմացավ, Զուզեց ասել և հորը։ Բայց հայրն ինքը մոտեցավ և, աշխատանքիննայելով, նկատեց.

— Շինածդ շատ եր կարծես։

— Հա, բայց են քեռին վերցրեց, — պատասխանեց Պավելն Իգնատի փոխարեն։

Մաքսիմն սպառնալից մոտեցավ Զերնիցինին։

— Ինչու յես վերցրել, շան վորդի։

— Քու բանը չի, — կոպտությամբ պատասխանեց Զերնիցինը։

— Ի՞նչ, իմ բանը չի։ Գող, որիկա։

— Գովել դու յես, — առանց քաշվելու պատասխանեց Զերնիցինը։

Մի ըոսե Մաքսիմը շփոթվեց։ Իգնատը համոզված եր, վոր հայրը հիմի կապտակի վիրավորողին։ Բայց Զերնիցինը մուրճը բըռնել եր ձեռին, և Մաքսիմն անզոր զայրութի մեջ բռուցք եր ցուց տալիս և անկապ հայնոյանքներ շպրտում։ Յեվայն ժամանակ միայն, յերբ սպառնաց վարպետին հայտնել, Զերնիցինը հավաքեց Իգնատից վերցրածը և շպրտեց նրա կողմը։

Զերնիցինը հաղթվեց։ Բայց հաղթվեց վոչ թե Մաքսիմի յերկյուղից, այլ ուրիշ մի բանից. այդ Իգնատը լավ եր տեսնում։ Ուխորին հիասթափություն զգաց. նշանակում ե՝ հայրը միայն տանն ե ահարկու, իսկ այստեղ, այս յերկաթե դղրդոցի մեջ, նա յելնուին պիսի խեղճ ու անձար ե, ինչպես և բոլորը։

Յերբ Մաքսիմը գնաց իր դազգահի մոտ, Իգնատը նայեց նրան և վշտացած ու հեղանքով շրթները ծոմոեց։

Ու դրա հետ միասին զգաց իր մենակությունն ու անձարությունը։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՃՐԱԾՆՈՒԹՅ

(Հատված վեպից)

Մի անգամ դազգահների արանքով, դուրը ձեռին անցնում եր մի ջահել թուխ դեմքով փականագործ։ Նրա բարեկազմ ու պինդ կազմվածքը, բելգիական գլխարկի տակից դուրս թափված սկզբանում երը նրան աչքի ընկնող, գնում եր առանց շտապելու, ճկուն ու վատահ քայլերով. յերբեմն խոշոր թուխ աչքերով, վորոնց մեջ

ինչ-վոր տիրություն կար, նայում եր շուրջը։ Յերբ նա Իգնատի կողքից անցավ-գնաց, Զերնիցինը հանկարծ կանչեց նրան։

— Ե՞ս ցիգան։

Փականագործը շարունակեց ճանապարհը։

Այդ ժամանակ Զերնիցինը կանչեց ավելի բարձր։

— Լսիր, պանդուպունզլո։

Փականագործը յետ դարձավ և հարցական նայեց ձայնի կողմը։ Մտածեց։ Ապա նույն ձկուն ու վճռական քայլվածքով մոտեցավ ծիծաղող բանվորների խմբին և դիմեց ուղղակի Զերնիցինին։

— Հը, ինչ ելիր ասում։

Զերնիցինը նայեց նրա թուխ աչքերին, վորից գլուխ չափեց նրան և իսկույն զսպվեց։

— Քեզ թվացել ե, ով գիտի...

— Դու ելիր ձայն տալիս — Փականագործի ուղիղ քթի նուրբ ուսունգները լախացան։

Զերնիցինը գունատվեց և, արդեն շփոթվելով, մրժմրթաց։

— Ե, քեզ ելի ձայն տալիս վոր։

Փականագործն արհամարհական ժպիտով նայեց նրան և, առանց շտապելու, գնաց իր ճանապարհը։

Սկզբում Իգնատն ուշ չդարձրեց այդ բանին։ Թվաց թե՝ փականագործի թե ձայնը և թե կերպարանքը ծանոթ են իրեն։ Յեվ հանկարծ հիշեց. Արտեմը։ Ծխական դպրոցի նախկին ընկերը — «Բղեղը»։ Դազգահնը կանգնեցրեց ու վագեց յետեկից։

— Արտեմ, Արտեմ։

Հասավ գոների մոտ, ուրախացած։

— Ախալեր, քեզ ճանաչել ել չի լինում. Փոխվել ես ես յերեք տարվա՝ մեջ։

— Այ իսկի չելի սպասում. Իգնատ։ Վորանեղ ես։

— Եստեղ, դազգահի վրա աշխատում եմ. իսկ դու։

— Փականագործ եմ։

— Այ քեզ բան։ Զարմանալի յե։ Ե՛, ինչպես ես ապրում. Դու ախտեմ ելիր ուեալական դպրոցը մտնել։

— Մտա։

— Բա վոնց ե, վոր եստեղ ես։

Արտեմը տիրեց և, բոպեական լուսությունից հետո, պատասխանեց։

— Հերս մեքենայի տակն ընկավ... գործարանում... Ե՛, յես ել դպրոցից դուրս յեկա։

— Բոլորովին սպանեց, — հարցրեց Իգնատը չհավատալով։

— Զեմ, — ակամա պատասխանեց Արտեմը. — Մի քիչ ապրեց...

Դպրոցում յեղած ժամանակ Իգնատը մի քանի անգամ գնացել եր Արտեմի մոտ, նրա հորը ճանաչում եր: Նա Արտեմի պես պնդակազմ, սև մազերով փականագործ եր, դեմքով մի քիչ մոռաց, բայց իսկապես բարեսիրտ և նույնիսկ ուրախ մարդ եր:

Իգնատին զուր եր գալիս, վոր Արտեմն իրեն «դու» յե ասում, իսկ ինքը նրան վերաբերվում եր իբրև մեծի:

Յերևաց վարպետը, ե՛լ կանգնել անհարմար եր:

— Գնանք ակումք, — առաջարկեց Իգնատը:

Կարմիր տնակում, ուր տասնյակ նստարան եր դրված, վոչ վոք չկար դրեթե...

— Գիտե՞ս ինչ, — ասաց Իգնատը, — արի խառատանոցը, դադուահի վրա աշխատելու:

— Ինչու, — հարցրեց Արտեմը:

— Ավելի լավ ե, աշխատավարձն ել շատ ե... եհ, աշխատանքն ել հետաքրքրական ե:

— Իսկ ինձ դուր չի դալիս: Զանձրալի յե: Ու հետո՝ ինչ աշխատանք ե վոր: Ամեն ինչ դադլան ե անում: Այ, դուրով կտրում ես կամ սղոցում, իսկուն զգում ես, վոր բան ես անում:

Լոեցին:

Արտեմը մի քիչ կենդանացավ և հարցրեց.

— Դու գրքեր կարդաւմ ես:

— Կարդում եմ:

— Ի՞նչ տեսակ գրքեր:

Ինգատը քիչ մնաց խոստովանի, վոր սրբերի մասին ե կարդում, և փոքր ինչ շփոթված պատասխանեց.

— Ենպե՞ս... զանազան...

— Եհ, ենպես հետաքրքիր գրքեր կան... Յես գրադարանից եմ վերցնում: Մեկ-մեկ ենպես գիրք եպատահում: Այ, յերեկ վերցրի «Սպարտակ» ե կոչվում... ինչ հետաքրքիր ե: Ենտեղ, հասկանում ես, նկարագրվում ե, թե ինչպես ստրուկներն ապստամբում են... ե, եղանակը... Դիտես ինչ: Լավ կլինի միասին կարդանք: Մենակ մի քիչ ձանձրալի յե. մարդու գլուխ շատ մտքեր են դալիս, բայց մեկը չկա, վոր հետը խոսես:

— Լավ, — համաձայնեց Իգնատը: — Բայց զիտես ինչ, յես յերկու ընկեր ել ունեմ, լավ կլիներ նրանք ել դալին:

— Ինչ կա վոր, եդ ավելի լավ կլինի: Յեկեք ինձ մոտ:

Առաջին կիրակին Իգնատը, Պավելն ու Ստեփանը՝ կոստիչեր վորդին, վոր մի յերկար ու չորչորուկ տղա յեր, նույնպես դազգյանի մոտ աշխատող, յեկան Արտեմի մոտ:

Այստեղ ամեն ինչ այնպես եր, ինչպես Իգնատը հիշում եր. — ցած-

րիկ կամարակապ առաստաղ, ներկը աված թախտ, գույնզգույն վարագույր, վոր ծածկում եր փեշը, վորի առաջ Արտեմի բարի դեմքով պառավ մայրն ինչ-վոր բան եր անում: Պատերին կային բանվորների մեծադիր լուսանկարներ և, չգիտես ինչու, Ալեքսանդր Յերկորդի սպանության նկարը. լուսամուտներում դրված ելին ծաղկամաններով ծաղիկներ, վորոնց արանքով յերկում ելին փողոցով անցնողների վոտքերը: Առաջվա պես թեթև խոնավություն կար: Չելին յերեսում արագաշարժ քույրն ու յեղբայրը: Արտեմը հեծանիվի ինչ-վոր մասը նորոգում եր: Հյուրերին տեսնելով՝ գործը թողեց, ուրախացավ:

— Այ, լավ արիք, վոր յեկաք: Թե չե ուզում ելի ինքս մենակ կարդամ, համբերությունս չեր տալիս: Այ, ախպեր ջան, գիրքը: Շատ լավն ե: Ուղղակի ուրիշ կյանք ե, — ասաց նա հուզված, մազերը խառնելով: — Բոլորովին ուրիշ աշխարհ ե: Գլադիատորները, Սպարտակը... Ներոն կայսրը... դա, ասենք, ենքան չե... Կովում են և այն... Իսկ են տեղը, ուր ստրուկներն ապստամբում են, այլ լավ ե հա: Մի մտածեցեք հլաւ՝ ստրուկները տասն անգամ ավելի շատ են, նրանց ծաղրի-ծանակի յեն յենթարկում, և նրանք հնազանդ տանում են: Ուղղակի անասուններ են յեղել: Յեվ հանկարծ, ախպեր ջան, եդ անասունները վեր են կենում ու գնում իրենց դահճների վրա: Սպարտակն ել նրանց հետ: Եհ, — ընդհատեց նա ինքնիրեն, — բոլորը դժվար ե պատմել: Եկեք, հենց սկզբից կարդանք:

Նստեց տանը սարքած դազգյանի վրա. և սկսեց կարդալ: Գլադիատորների կովի պատկերավոր նկարագրությունն իսկույն գրավեց ունկնդիրներին: Մինչև անգամ Ստեփանն ել հափշտակվեց և ադանք աչքերով նայում եր Արտեմի ձեռքին ցնցվող գրքին:

Հսկայական կրկես, ուժեղ և ճարպիկ ըմբիշներ, կայսր, հազարվոր մարդիկ՝ արյան հոտից հարթած...

Իգնատի յերեսակալայության մեջ աճում եր մի այլ կյանքի և այլ աշխարհի կախարդական պատկեր, գույներով, փալով ու աղմուկով լիքը... Յեվ այդ հզոր պատկերի առաջ նովոսելովկա գյուղն իր տուփանման տնակներով, և նույնիսկ քաղաքը հանկարծ թըփացին այնքան վողորմելի, վոր Իգնատն իրեն չկարողացավ պահել և հարցրեց:

— Միթե եդ բոլորը յեղել ե:

— Վոր գրում են, ուրեմն, յեղել ե, — բարկացած պատասխանեց Ստեփանը:

Իսկ Պավելը բղավեց յերկուսի վրա յել.

— Լոեցեք:

Արտեմի մայրը, գործը վերջացնելով, կանգնել եր ձեռն այսին դեմ տված, և սիրալիր նայում եր պատանիներին. Յերբեմն միայն հառաշում եր:

— Գիտեք ի՞նչ, — բացականչեց հանկարծ Արտեմը, — մենք եր ստրուկներ ենք:

Հնկերներն իրար լերեսի նայեցին, և Ստեփանն ասաց վիրավորված.

— Մենք ի՞նչ ստրուկներ ենք: Մեզ վոչ-վոք չել խփում:

Արտեմը չարախնդացությամբ քմծիծաղ տվեց:

— Բա, դու ուրեմն ազատ ես: Իսկի կարող ես վեր կենալ, յերբ ուզում ես: Կարող ես առանց շշակի ձայնի ճաշել:

— Ինչու վոր, — ասաց Ստեփանը: — Յես միշտ ել շշակի ճայ-նով եմ ճաշում: Իսկ յեթե ուզեմ, նախաճաշից ել կարող եմ գործի կանգնել:

— Նախաճաշից, — հարցրեց Արտեմը և ծիծաղեց: — Ե՞ն, նորաշենցիներ...

Նորից տեղը նստեց ու շարունակեց ընթերցումը:  
Կրկին նրանք չոռմումն ելին: Սպարտակը հանդիպում է կեսարին: Ստրուկները հուզվում են: Շուտով ահա կոփի ել լինելու, կուրծք-կրծքի յեն տալու:

Ստեփանն ու Պավելն ի՞նչ-վոր նշաններով բան հասկացրին իրար, հետո յերկուսն ել վեր կացան ու գնացին, կարծես մի լուրջ գործի:

— Աղջկերանց մոտ են գնում, գրողի տարածները, — մրթմըրթաց հգնատը:

— Զեմ սիրում եղախիներին, — ասաց Արտեմը սենյակում քայլով:

Նրա մայրը կանթեղը վառեց, միքանի բան հավաքեց, տեղավորեց և, ի՞նչ-վոր տեղ գնալու պատրաստություն տեսնելով, հարցրեց.

— Բան չի հարկավոր, Արտեմ ջան:

— Զե, — բարկացած պատասխանեց Արտեմը: Իսկ յերբ մայրը գնաց, գլուխը շարժեց նրա յետերց և ժպտաց.

— Շարունակ բան ու գործ ունի: Մի տեղ բժշկում ե, մի ուրիշ տեղ յերեխեք ել լողացնում:

Նկատելով, վոր հգնատը կանթեղին ենայում, բացատրեց.

— Թող ի՞նչ ուզում ե անի... Պառավ կնիկ ե: Նա վզիս իսաւ ել կախել, ի՞նչ արած: Իսկ հայրս... Գիտես, յերբ մեռնում եր, մեռավ:

— Իսկ դու, — ագահ հետաքրքրությամբ հարցրեց իգնատը:

— Յես հորս նման եմ, — կարճ պատասխանեց Արտեմը:  
Իգնատը մի գիրք խնդրեց և պատրաստվեց տուն գնալու: Դուրս յեկան փողոց: Մթնում եր, ճրագները վառում ելին: Փողոցը կարճ եր և նեղ, կարծես քարե փոս լիներ: Կառքեր անցան, և տաք փոշի բարձրացավ:

— Իսկ արել վոր կողմից ե դուրս գալիս եստեղ, — հարցրեց իգնատը դես ու դեն նայելով:

Արտեմը գլխով ցուց տվեց փողոցի այն կողմը:

— Կարծեմ, եստեղից: Գիտեմ, վոր մայր ե մտնում ես տների յետեւ: Իգնատը ժպտաց:

— Աստղերն ել են մի տեսակ... մաշված են... Զեմ սիրում ձեր ճրագները: Արի մի անգամ նովուելովկա: Կամ դաշտ գնտնիք: Այ, ենտեղ աստղեր կտեսնես... Թոշուններ են յերգում... Արտուռներ...

— Կերթանք մի անգամ: Բայց բանն, ախպեր ջան, թոշունները չեն, այլ մարդիկ: Գիտես, հայրս լավ մարդ եր: Յերբեմն խմում եր, դա վոչինչ: Բայց յերբ սկսել-լսելիր մենակ: Մինչև անգամ արգելված գրքեր եր կարդում:

— Արգելված, — զարմացավ իգնատը:

— Այս, վորովհետեւ նրանց մեջ գրում են իսկական ձշմարտությունը:

— Իսկ ով ե արգելում, վոր ձշմարտությունը գրեն:

Արտեմը նայեց նրան և շվացրեց:

— Ուրու, բա միթե չգիտես: Կան արգելողներ, ախպեր ջան... Բայց ինձ չեր տալիս կարդամ. — վաղ ե, մթամ. Իսկ ենակես շատ բան եր պատմում: «Մի հավատա, ասում եր, կուշտ սրիկաներին, վոր մեր վախեցնում են յերկնքով. բոլոր գործերը յերկրի վրա յեն կատարվում»...

Տան յերկրորդ հարկից դաշնամուրի ձայն լսվեց: Արտեմը բըռնեց իգնատի ձեռը և ցուց տվեց պայծառ լուսով լուսավորված լուսամուտները:

— Տես, պարահանդես ե: Հենց ես տան մեջ ել, նկուղում, աղքատ մարդիկ են ապրում - մերկ, սոված, հիվանդ: Իսկ վերևում պարահանդես ե: Կլյակսին հիշում ես: Են, վոր մեր լուծած թվա-բանական խնդիրներն արտադրում եր, ինքն ել հաստ եր՝ խոզի նման:

— Նա ի՞նչ ե վոր...

— Ստացել ե միլիոնից ավելի ժառանգություն և մեր գործարանի ակցիաների կեսը:

— Են հիմարը։ Ի՞նչ պիտի անի։

— Ի՞նչ պիտի անի։ Արտեմը ծիծաղեց խալթող ծիծաղով։ Զգիտեմ... իսկ թե ինչ պիտի անենք մենք—արժե եղ մասին մտածել։

Մի անգամ Արտեմը մի բոպելով վազեց խառաւանոցը՝ իգնատի մոտ և ուրախ-ուրախ հայտնեց։

— Մի բան կա։ Կզաս ինձ մոտ, մի տեղ կերթանք։ Իգնատը հազիվ սպասեց մինչև յերեկո։

Մի մեծ տան հենց տանիքի տակի մի նեղիկ սենյակում մարդեկ էին հավաքված։ ողը ծանը եր, հատակին թափված եին պապիրոսի մացորդներ, թափթփված գրքերի ու տետրակների արանքում դրված եր մի կտոր հին յերշիկ ու հաց։ Պատին կպցրած ելին միքանի բացիկներ։ Մոտ յերեսուն տարեկան, ակնոցով, յերկար մազերով մի մարդ կարդում եր, Յերկու ջահել բանվոր նստել ելին ծոված մահճակալի վրա, իսկ յերրորդը, միրուքավոր մի շեկ մորդ, վոր կապույտ աչքեր ուներ, տեղավորվել եր ճամպորդական պայուսակի վրա։ Մյուս սեղանի մոտ, վորի մի վոտն ընկած եր, նստել եր պապիրոս շինող մի աղջիկ և աշխատում եր ուշադիր։ լինել։

Բանվորները մահճակալի վրա իրար սեղմվեցին, վոր իգնատին տեղ անեն, իսկ Արտեմը նստեց անկյունում, ուղղակի հատակի վրա, վոտները գրկեց ձեռներով, աշխատելով վոչ մի բառ բաց չթողնել։

Ակնոցավորը կարդում եր բանվորների շահագործման մասին և ժամանակ առ ժամանակ, կանգ առնելով, նայում եր ակնոցի վերկեց և հարցնում։

— Եսպես ուրեմն... հասկացաք, ընկերներ։

Մահճակալի վրա նստող յերկու բանվորը միաձայն պատասխանեցին՝ «այո»։

Ըսթերցումը տեսց յերկու ժամ։ Վերջում աղջիկն սկսեց սատովի հորանջել, միրուքավորի աչքերը կուլ ելին գնում, իսկ ջահել-ներից մեկն սկսեց ուղղակի ննջել։

Մեկն զգուշությամբ դուռը ծեծեց։ Կարդացողը, վորին Անդրեյ իվանիչ ելին ասում, դուրս յեկավ և մի բոպելից վերադարձավ փոքրիկ գրքույկների ու թոռոցիկների կապոցով։

— Են, ընկերներ, այսոր այսքանը հերիք ե։

Գրքույկներն ու թղթերը բաժանեց և, միքանի մանը բաների մասին խոսելով, խումբն արձակեց։

Յերբ մենակ մնացին, Արտեմն ուրախացած զարկեց իգնատի ուսին և բացականչեց։

— Տեսար։ Ասում ելի քեզ, ամեն մի քար ասում եր ինձ, վոր չես բանվոր եմ, իսկ նրանք ձրիակերներ։ Այ հիմի եղ բանը հաստատում ե գիտությունն ել, ե, զրողը տանի։ Յեթե մարդ սկսի գործել, եղ պարոնների տրամադրությունը պիտի փչանա։ Ի՞նչ ես կարծում, բարեկամ։

— Յես... յես կարծում եմ, վոր դա...՝ դեռ բոլորը չի, Գլխավորը չի։

— Աւսինքն... ինչպես թե գլխավորը չի, զարմացավ Արտեմը։ Իգնատն անմիջապես չպատասխանեց, մտածում եր։

— Գլխավորը մարդու վերաբերմունքն ե գեպի բնությունը։

— Այս, դեպի աստված՝ ուզում ես ասել, հեգնանքով հարցրեց Արտեմը։

Իգնատը լոեց։

Տուն գնալիս Արտեմը հարցրեց։

— Ուրեմն դու ել չես գալու։

— Ուշադիր իգնատը հասկացավ նրա հեգնանքը։ Նա բնավ չեր ել մտածում հրաժարվել, հենց թեկուզ ընկերության խաթեր, և, յեթե Արտեմը չխոսեր, նա կերթար. բայց այժմ, ինքն ել չիմանալով ինչու, պատասխանեց։

— Չեմ դա։

Կանգնեցին մի բոպել յել ու բաժանվեցին, մոռանալով «բարի պիշեր» ասել։

Մի առավոտ բակում ու գործարանի բոլոր բաժանմունքներում ցրել ելին սոցիալիստական կուսակցության թոռուցիկներ։ Իսկ ակումբում՝ մինչև անդամ փակցրել ելին պատին։ Վոմանք թոռուցիկներ գտան և գագոյահների վրա։ Այդպիսի բան գործարանը հիմնվելու որից չեր յեղել, ուստի և անհանգստացրեց բոլորին և շատ խոսք ու զրիցի առիթ տվեց։ Ամենից ավելի զբաղեցնում եր այն հարցը, թե ով կարող եր այդ բանն արած լինել։ Շատերը պնդում ելին թե դա ուսանողների գործն ե։

— Բայց նրանք վհնց են մտել եստեղ, — առարկում եր իր շրջանում Ժուրբան։

— Ոհա, — համոզված ապացուցում եր Սուլրկովը. — ուսանողներն, ախպեր ջան, ամեն բան կարող են։ Նրանք կարող են մարդուն մաս մաս անել, աղիքներում, ինչպես մակարոնի մեջ, բան փնտուել։

Պերեգուգովը, վոր սիրում եր հոգեորը գրքեր կարդալ, կարծում եր, վոր դա աղանդավորների գործն ե։ Միայն կոստիչեն եր, վոր առաջին իսկ հայացից յեղբակացրեց, վոր դա «սոցիալների» գործն ե, նրանց, վոր մի ժամանակ թագավորին սպանեցին։ Նույնը կարծում եր և իգնատի հայրը՝ Պատերնյակը, բայց լուսմ եր։

Նրանք յերկուսն ել նայեցին լրագիր կարդացող նիկոնովին, բայց նա նկատելի կերպով ջղանացած եր և մինչև անգամ ժուրբալին հայնոյեց:

Դարբինները, փականազործները և մյուս արհեստավորները գալիս ելին խառատանոց՝ բան իմանալու, Խառատանոցում աշխատողները համարվում ելին ավելի լուսավորված. դրա համար գալիս ելին այդ չտեսնված դեպքի բացատրությունը լսելու, Յեվառհասարակ հետաքրքրական եր լսել, թե ինչ են ասում. Ավաղ. այս անգամ խառատներն ել չկարողացան մի բան ասել...

Տանը, ձաշի ժամանակ, Մաքսիմը խոսք բացեց այն ավելորդ բաների մասին, վորով ժողովրդի միտքը պղտորում են:

— Հասարակ ժողովրդի համար շատ վասա են այդ բաները, — ասում եր նա, կարծես իգնատի համար չի ասում. — Մի գեղում, հիշում եմ, ենպես բաներ խոսեցին հողի ու ազատության մասին, գեղացիներն սկսեցին գրգովել. Են, հետո, զինվորներ յեկան ու տուր թե կտաս ժողովրդին, հիմի, մինչև եսոր ել հիշում են եղ հողն ու ազատությունը. իսկ նրանք, վոր գրգում ելին, վոնց չբացանկորան:

— Նրանք բարիք են ուզում անել, — յերկշոտ խոսեց իգնատը. Մաքսիմն ականջները խլեց:

— Իսկ դու ի՞նչ գիտես:

Իգնատը կաս-կարմիր կարեց ու լոեց. Գործարանում, թուուցիկների առաջ բերած իրարանցումը տեսնելով, նա, հայտնի չեինչու, իրեն ուրախ եր զգում. մի բան կարծես դրգում եր նրան դուրս գալ՝ կանգնել արհեստանոցի մեջտեղը և բարձր հեղնական ձայնով բղավել.

— Եսպես բան յեղել ե: Ե՛, դուք... Դեռ ինչեր պիտի լինեն:

Ուզում եր այդ բանն ասել և հիմա, բայց վախենում եր կովից:

— Տես, իգնատ, — ասաց Մաքսիմը, դեռ նրա պատասխանը շմած, — Մի հավատա մարդկանց. Վաչ մեկին. Ամեն մի մարդ իր համար մի հարմար ընկեր ե գտնում: Եղ արգեն յես լավ գիտեմ:

Հետո չհամբերեց և խոսեց այնպես, կարծես իգնատը քսան տարին անցրել եր:

— Սարսադ մարդիկ են, աստված վկա, թեկուզ ուսանող են ու շատ ել բան են սովորում: Ո՞վ ե տեսել բզի գլխին բոռնցքով տան: Ե՛Ե... Հրեն նիկոնովն ել լրագրում կարդում ե, թե ենպես ները կան, վոր աշխատում են ժողովրդի համար: Ասենք՝ լավ: Բա ինչու յեն ուզում, որինակի համար, վոր ութը ժամ աշխատեն:

— Գուցե ավելի լավ լիներ, — նկատեց կինը՝ Նատալիան: — Թե

չե եղ ի՞նչ ե. հալից ընկել ես: Քառասուն տարեկան չկամ, բայց սպիտակել ես արգեն:

Մաքսիմը ժպտաց միայն:

— Քիչ աշխատես—քիչ կվաստակես: Ինքդ կվասվես: Իհարկե, որավարձով աշխատողի համար ձեռնտու լե, բայց մեզ—սկի.

— Պետք ե կարդար... մտածել, — ավելացրեց իգնատը:

— Մտածել: Ինչի մասին:

— Ենպես... քիչ բան կա...

Մաքսիմը գլուխն որորեց:

— Թող, ասում եմ քեզ, եղ մտքերը: Դա մեր բանը չի...

Նկատելով, վոր կատան, բերանը բաց, իրեն ե նայում, նա փայտե գդալով խփեց նրա ճակատին:

— Ճաշիր, լերը ճաշն առաջիդի ե: Անպետքի մեկը:

Իգնատը հասկացավ, թե վորքան դժվար ե հոր համար լավ բաներից խոսել իրենց հետ, ու լոեց:

Ստեփանն ու Պավելն ել սկսեցին բանվորների գաղտնի ժողովները զնալ, բայց իգնատը համառեց: Ճիշտ ե, լեթենրան առաջարկելին գնալ, նա հիմա յել կերթար (մանավանդ թռուցիկի ներգործությունը տեսնելուց հետո): Բայց նրան չելին առաջարկում: Յերևում եր, վոր առանց նրան ել լոլա յեն գնում:

Մի անգամ ժուրբան հետաքրքրվեց.

— Դու ինչու յես ընկերներից յետ մնացել:

Վիրավորանքից իգնատը քիչ մնաց լաց լինի:

Հետո, ընկերներին չարացնելու համար, հազավ դեղին կոշիկները և նոր ձեռի վերնաշապիկը, վոր վաղուց արդեն գնել եր մայրը: Դրա համար Պավելը նրան «բուրժու» ասավ և դադարեցրեց բարել:

Սակայն, վորքան ել իգնատն ուզում եր իրեն քաջ ցուց տալ, այնուամենախիվ ուրախ չեր, — այնքան ուրախ չեր, վոր սկսեց մտածել մի վորեւ ուրիշ քաղաք տեղափոխվելու մասին, ավելի լավ ե, իհարկե, ծովի մոտ գտնվող քաղաք, կամ ուր մեծ, անանցանելի անտառներ ու գետեր կան:

Բայց ահա մի անգամ Արտեմը յեկավ և նկատելի խորամանկությամբ մի գիրք տվեց նրան, վորի մեջ ցուց տվեց մի հոդված:

— Կարդա, — ասաց նա, — հետո կխոսենք:

Ու գնաց:

Իգնատը դադարանք թողեց պարապ բանի և ինքը նստեց արկղի վրա:

Գիրքը Պիսարևի հատորներից մեկն եր: Արտեմն ընդդել եր «Կենդանական և բուսական աշխարհի զարգացումը» հոդվածը:

Իգնատն սկսեց և ել չկարողացավ կտրվել։ Մեքենայի յուղը վաղուց այրվել եր և նա ճռնչում եր։ Զերնիցինը ճշաց։

— Ե՞ս, փիլիսոփիա, գիրքը խելքդ կտանի։

Իգնատն ուշ չգարձրեց դրան։ բայց յերբ Զոլոտկոն մոտեցավ, լնթերցումը թողեց և սկսեց աշխատել։

— Կարդում եք, յերիտասարդ, — հարցրեց նա նենդորեն, միւրուքը շինուի։ — Վոչինչ, լավ բան եւ։

— Տուգանելու յեւ, — մտածեց Իգնատը, յերբ Զոլոտկոն գնաց գրասենյակը. բայց այդ այնքան ել չդիմավ նրան. գլխում այնքան մտքեր կային և այնպես հուզված եր դրանցով։

Տուն գալով նա մինչեւ անդամ չլվացվեց և անմիջապես նստեց կարդալու։

Նրա բախտից հայրը յերեկոյան աշխատում եր։

Կարդում եր տեսդորեն, անհամբերությամբ յերեսները թերթելով։ Նատալիան մերթ խոսում-մրմնջում եր, մերթ հարցնում եր Մաքսիմի մասին... Իգնատն ականջները փակում եր ու չեր պատասխանում։ Նատալիան թքեց, վերջապես, նրան «կալմիկ» անվանեց ու գնաց հարեանունու մոտ, վորի մարդը նույնպես՝ աշխատում եր յերեկոյան։

Վերջապես, հոդվածը կարդաց-վերջացրեց։ Գիրքը ծածկելով Իգնատը գեռ յերկար նստել եր գրքի առաջ և անշարժ հայացքով հայում եր իր առջեւ։

Զկար այլես առաջվախավարը. բռնված թռչնի նման նրա կրծքի տակ թթուում եր մի ճշմարտություն, մի պատասխան։

— Եսպես, եսպես չի յեղել, և եսպես ել չի մնալու։

Առաջվա անհանգստությունը չկար։ Նա հավատացած եր, վոր այդ ահագին միտքը, մնացել ե յեթե վոչ իր գլխում, համենայն գեպս մի տեղ՝ սրտի խորքում։

Յեվ, սենյակում քայելով, նա ժպտում եր ինչ-վոր բանի և տախտակների վրա վոտները փոխում եր այնպես, կարծես թանգարին հեղուկով լիքն աման եր տանում և վախենում եր թափել։

Բանալով Պիսարեի պատկերը գրքի մեջ, յերկար նայեց նրա դեմքին, կամենալով կարծես համոզվել, թե կարելի յեւ արդոք նրան հավատալ։ Յեվ հանկարծ թափով անսահման յերախտաղիտությամբ համբուրեց նրան։ Ու բարեհոգի հեղնանքով նայեց անկյունի սրբապատկերին...։

Մայրը վերադարձավ։ Նա խմած եր յերեսում։

— Հայրդ չի յեկել գեռ։

Իգնատը կարծես շատ հեռվից նայեց նրա փոքրիկ, տանձանը-ման քթով ու նեղ ճակատով թառամած դեմքին և բարձր ծիծաղեց։

— Գիտես մարդն ի՞նչից ե առաջ յեկել, — հարցրեց նա բարձրաձայն։ — Կապիկից։

Նատալիան աշքերը թարթեց, մի բոպե նրա լեզուն չեր հնագանդվում իրեն։ Նա ձեռները տարածեց և ծոր տալով ասաց

— Այ, եդ լաւավ ե... զորանաս...։

Իգնատը ծիծաղեց։

Այդ ժամանակ Մաքսիմը յեկավ՝ մռայլ ու չարացած։ Գլխարկը նետեց սեղանի վրա և կանգնեց մի բոպե վոչ-վոքի չնայելով։

Նատալիան անմիջապես իրեն հավաքեց և անձայն քայլերով ման գալով, սկսեց սեղանը սարքել։

Մաքսիմը դարձավ զեպի Իգնատը։

— Ե, աղաս, շնորհավորում եմ...։

— Ի՞նչի համար, — զարմացավ Իգնատը։ Իսկ դեմքը գեռ ծիծաղում եր։

Մաքսիմը պայթեց։

— Բա մի՞թե չգիտես, վոր քեզ տուգանել են։

Իգնատը մի բոպե դարձավ մտահոգ։ Բայց ծիծաղը, անգուսով, անհասկանալի, հիվանդագին ծիծաղը նոր ուժով ցայտեց նրա աչքերից, խաղաց կարմիր շրթներին։

Նատալիան հանկարծ ափսեն զրնգացրեց և լացակնած բացականչեց։

— Յես մի՞թե կապիկ եմ քեզ համար։

— Ի՞նչ, — զոչեց զարմացած Մաքսիմը, նախազգալով, վոր վորդին վատ բան ե ասել մորը։ Իգնատը բըքջաց նրա յերեսին և, նախաքան Մաքսիմը կմոտենար իրեն, գլխարկը վերցրեց ու սենյակից դուրս յեկավ։

Փողոցում միայն կտրեց ծիծաղը և մտածեց, վոր տանը հիմի կուիկ ու վեճ ե լինելու։ Զեռը թափ տվեց և առուցի քայլերով գնաց դեպի Արտեմը։

— Այս յերկու հատվածի հիման վրա փորձեցեք նկարագրել նախահեղափոխական գործարանի ներքին կյանքը հետեվյալ ծրագրով ա) գործարանի թողած առաջին տապավորությունը յեվ դրա պատճառը. բ) գործարանի վարչության վերաբերմունքը դեպի բանվորները. գ) բանվորների վերաբերմունքը դեպի վարչությունը. դ) բանվորների վերաբերմունքը դեպի աշխատանքը. յե) բանվորների վերաբերմունքը իրար հանդեպ. զ) բանվորական տիպեր՝ Մաքսիմը, ժուրբան, Զերնիցեվը յեվ այլն. ե) Արտեմը իրեն զիտակից բանվոր-պրոպագանդիստ. ը) զանազան բանվորների վերաբերմունքը դեպի Արտեմը յեվ նրա գործունեյությունը. թ) ընդհատակյա գործունեյության պայմանները. ժ) Իգնատը, վորպես հետզինետե դասակարգային զիտակցության յեկող բանվորի տիպ. ժա) Արտեմի գործունեյության հետեվանքները. ժբ) յեզրակացություններ։

## ԸՆԿԵՐ ԱԳՐԻԱՆԼ

1.

Ղժժում են շոգեկաթսաները, վառարանները ծուլորեն բաց են անում իրենց քառակուսի բերանները և չըխկացնում են դռնակները՝ կուլ տալով ածխի փոշին:

Անիվները շարժվում են այնպիսի արագությամբ, վոր անհնարին և հաշվել պտույտների քանակը:

Իսկ հեռուն, ամբողջ գործարանում, կորպուսներում և քարե սարաններում մի անտես ուժ շարժում ե փոկերը: Յեվ նրանցից շարժվում են, զժժում, ծիծաղում, իսկ յերեմն ել սուր ճիշ հանուն ամենաբարդ տեսք ունեցող հազարավոր մեխանիզմներ: Կանգնած են նրանք կողք-կողքի, ինչպես զինվորները զինավարժության հրապարակում: Յեվ զինվորների նման ճշգրիտ ձեռվ նրանք կատարում են այն ամենը, ինչ վոր պահանջվում ե նրանցից:

Լուրջ ու հանդիսավոր, վորպես պատասխանատու իր գործողությունների համար, խփում ե պատկառելի սալին շոգեմուրձը:

Չուլարանալին բաժնում, ծխոտած պատուհանի մոտ, կանգնած ե բանվորների մի խումբ: Մինչև գոտիները մերկ, նույնպես ծխոտած ու քրտինքոտ, ելեքարալամպերի լույսի ներքո և պատուհանից այն կողմը թագավորող գարնանալին գիշերվա ֆոնի վրա—նրանք թվում են ստորերկրյա վոգիներ: Դեմքերին ուշադրություն: Մի թխագեմ բանվոր անվարժ մատներով բռնել ե մի տպագրված թուղթ: Կտրդում ե դանդաղ, յերեմն աշ ձեռքով սրբելով ճակատից հոսող քրտինքը:

— «1889 թվի հուլիսի 14-ին ֆրանսական բուրժուազիան տոնում եր իր հեղափոխության հարյուրամյա հոբելյանը համաշխարհալին ցուցահանդեսով: Վորպես հակակիւ բուրժուական տոնակատարությանը՝ յեվրոպական և ամերիկական պրոլետարիատը վորոշեց հրավիրել հենց այստեղ, Փարիզում, միջազգային սոցիալիստական համագումար, ուր հիմնադրվեց Յերկրորդ Խնտերնացիոնալը...»

Աբրոսիմով մի փոքր դանդաղ... չի լսվում, — բացականչեց մեկը յետեի շարքերից:

— Մի խանգարի, ինչ ես խանգարում, — բարկացան մի անդամից միքանի մարդ:

— Ախր անհասկանալի յե, — արդեն վարանոտ լսվեց հեռվից:

— Մեկ ասում ե չի լսվում, մեկ ել թե՝ անհասկանալի յե... Շարունակիր, Աբրոսիմով:

— «Ճերկրորդ Խնտերնացիոնալը բանվոր-սոցիալիստների միջազգային միությունն ե: Փարիզի համագումարը վորոշեց յուրաքանչյուր տարի մայիսի մեկին կատարել բանվորական տոն, վորի մասին չի գրված վոչ մի բուրժուական որացուցում»:

Հեռավոր անկյունից լսվեց սուր սուլոցը մի բանվորի, վոր գըրված եր այստեղ «հսկելու»: Աբրոսիմովը ճմլեց թուղթը, դրեց գըրպանը և գնաց իր տեղը: Պատուհանից հեռացան և մյուս բանվորները, և յերբ ավագ վարպետ իվան Ֆլոդորովիչը մտավ ձուլարանային բաժանմունքը—այստեղ աշխատանքն ընթանում ել սովորական կարգով:

2.

Ագրիանը քսան և հինգ տարեկան եր: Նա գործարան յեկավ մի ամիս առաջ, և աշխատանքի մեջ լինելով ժիր ու տոկուն, իսկ վիճաբանությունների ժամանակ՝ համառ ու հատու, նա դուր եր գալիս բանվորներին: Բանվորները գիտելին, վոր Աղրիանը կուսակցական ե, վոր նրա մոտ միշտ ել կարելի յե գտնել թուղթիկներ ու կոչեր: Նրանք զգում ելին, վոր նրա յետել կանգնած ե ինչ-վոր անծանոթ մի բան, վորը սակայն արդեն սպառնում եր հեռվից իր միությամբ և պարզաբի յելնելու պատրաստակամությամբ:

Վարչությունը գնահատում եր Աղրիանին, բայց մի քիչ վախենում եր նրանից: Հոտառությամբ զգում եր, վոր նա իրեն հետ չի: Սակայն փաստեր չկային և դժվար եր նրա յախիցը բռն ել:

Յերկրորդ հերթը դուրս յեկավ գործարանից լուսագեմին: Մարդիկ հրմակվում ելին գործարանի բակի նեղ դռան մոտ, ծաղրում ելին խուզարկու<sup>\*)</sup> պահապանին:

— Ինչ ես մեջքս քորում, ավելի լավ ե բերանս նայի՝ ենտեղ յես յերեք փութ պողպատ եմ թագցրել...

— Իսկ յես խարտոցը կոշիկիս մեջ եմ խոթել, վոտս ցավեցնում ե...

<sup>\*)</sup> Հեղափոխությունից առաջ գործարաններում կար որենք, վորի համաձայն բանվորներին առն գնալիս խուզարկում ելին, վորպեսզի հետները բան չտանեն:

— Ելու, դռւ, փարավոն-հիմարաբան...

— Դե, լավ, լավ, ձեռ մի առեք, — պատասխանեց պահապանը. — Իմ կամքով չեմ անում, ինձ ել ես գործն ե տված...

Դունից դուրս ելին գալիս տասնյակներով, իսկ վողոցում գնում ելին հարյուրներով: Գնում ելին վորը վազելով, վորը քայլով: Խմբերով և մեկ-մեկ: Գիշերը գունատվում եր, և յերկնքից փախչում ելին ամպերի վերջին ծվատված կտորները: Քաղաքածարի տները գեռ լուսում ելին, բայց պատուհաններում թռչկոտում ելին վառվող լամպերի կրակները: Աշխատանքային որն սկսվում եր:

Աղրիանը քայլում եր մի տասնյակ բանվորների մեջտեղում: Նա ասում եր:

— Յերկու որ հետո — Մայիսի մեկն եւ: Դա — մեր բանվորական, պրոլետարական տոնն եւ: Դա բողոքի ցուց ե ընդդեմ կապիտալիստական կարգերի, ընդդեմ շահագործման ու ճնշման: Բոլորդ դուրս յեկեք փողոց: Առանց աղմուկի, առանց սկանդալի: Կազմակերպված շարքերով անցեք փողոցներով: Յուց տվեք մեր դասակարգային թշնամուն, վոր դուք ել ձուլված եք ի մի, վոր դուք — ուժ եք, վորին նրանք պարտավոր են հաշվի առնել:

Տանիքների վրա յերկինքը վարդագուն եր դառնում: Փայտացանկապատերի այն կողմը, խորքում, կանչում ելին աքաղաղները, բառաչում ելին կովերը: Բանվորները մոտենում ելին մեծ փողոցներին և քարաշեն տներին: Յեկ իրար ելին սեղմվում քարաշեն տներն ու պալատները, վորոնք լցված ելին ձրիակերներով ու պորտաբույծներով: Նրանք վախենում ելին ներբեկի խավերից առաջացող ուժից:

3.

Պրիստավ Սերյուգինն իրեն անհանդիստ եր զգում: Ապրիլի վերջին որերն ելին, և պրիստավը չեր ուզում, վորպեսզի սկսվի հետևիալ ամիսը: Անիծյալ մայիսի մեկը կարող եր վոչ միայն փչացնել Սերյուգինի կարյերան... Յեթե բանվորները փողոց դուրս գան, կարիք կինված ուժ դուրս բերել: Լավ ե, յեթե յոլա գնան միմիայն ցուցով, իսկ յեթե հանկարծ...

Պոստիկանական ծառայությունը հարուստ ե հուկաներով: Առաջ, գնդում, ուր Սերյուգինն արդեն յենթագնդապետ եր, ապրուստն այնքան ել վատ չեր, բայց սպայական ակումբում թղթախաղի ժամանակ թերի մեջ պահած մի ավելորդ խաղաթուղթը փչացը ուժը գործը: Իսկ այժմ նոր կյանք ե սկսվում: Խոստացան մոռանալ անցյալը: Յեթե ամեն ինչ լավ ընթանա, մի տարի հետո խսլրավիկ կրառնա, իսկ հետո, մեկ ել տեսար — պոստիկանապետ:

80

Յերբեմն Սերյուգինը տեսնում է զարմանալի յերազներ: Նա տեսնում է իրեն քաղաքապետ դարձած, զարդարված շքանշաններով և ժապավեններով, բազմած յերկծի կառքում, վորի ձիապանը թիանման մորուք ունի: Արթնանում է Սերյուգինը՝ խանդադատնքի ժամանակաշրջանում և աչքերը Ռուզանի հրաշականության մեջ մարդկան մեջ: Սեղմում է աչքերը: Ուզում է վերականգնի հրաշականության մեջ:

Նստած ե պրիստավի իր առանձնասենյակում և մեղկ նայում է փողոցին: Գարունն ուրախանում է մայթերի վրա, ծիծաղում է բաց պատուհաններից: Բայց պրիստավի հոգում աշուն եւ: Յեթե չիներ այդ մայիսի մեկը — հիմա նա սուրճ կիսմեր սերով ու թխածներով, իսկ այժմ կոկորդը չի գնում: Նա զանգահարեց: Ասաց մտնող վոստիկանին:

— Բարսոնկ, կանչիր Աֆանասի Պետրովիչին:

Վոստիկանը սուրը թխկացը և կորավ դռան յետեռում: Իսկ հինգ րոպե հետո մտավ ավագ վոստիկանը, չեչոտ, քթի վրա ճկուղավորված կապուցտ յերակներով:

Ավագ վոստիկանը հարգանքով սառեց պրիստավի առջի:

— Հը, ինչպես ե մայիսի մեկը, — հարցը պրիստավը:

— Կինեն ցուցեր:

— Հը... .

Յերկծի կառքը և շքանշանները ծաղը թվացին: Սահեցին ճակատի վրա և ծալքեր կազմելով ծանրացան մուալ մտքերը:

— Ճիշտ այդպիս ե: Ունեմ ամենաճիշտ, ստուգված տեղեկություններ: Կինեն ցուցեր, վորոնց կմասնակցեն ավելի քան յերեք հազար մարդ:

— Հմա... հա... իսկ են... կայազորի պետին հայտնված ե:

— Ճիշտ այդպիս ե: Կուղարկի մի հարյուրլակ կազակներ:

Ավագ վոստիկանը լոեց: Նայում եր մտահոգված պրիստավին: Ժպտաց:

— Համարձակվում եմ զեկուցել, ձերդ...

Պրիստավն ուշի յեկավ նայեց Աֆանասի Պետրովիչին զարմացած աչքերով: Կարծես առաջին անգամն ե նրան տեսնում: Իսքն ել ժպտաց:

— Խոսեցեք:

— Այստեղ մի գ ընարանում կա մի բանվոր: Կարծեմ կուսակցական ե...

— Սոցիալիստ-հեղափոխականն ...

— Ամենեին վոչ, բոլշևիկ. . ն ան հենց այդպիս ել անվանում են՝ «ընկեր Աղրիան»...

— Ե՛, հետո ի՞նչ:

— Այ, հենց նա յե սարքում եղբոլոր ցուցերը: Դա ինձ ստուգի հայտնի է: Չեր խանգարի ձերբակալել նրան...

— Հմ, դուք կարծում եք: Իսկ ապացուցներ կան, վոր նա կուսական ե:

— Ամենեին վոչ: Պաշտոնապես հայտնի չե: Բայց ամեն ինչից յերեսում ե, վոր նա կուսակցական ե: Հավատացեք իմ փորձառությանը:

Սերյուգինը կը կին մտածմունքի մեջ ընկավ: Այնքան յերկար եր մտածում, վոր սպասողական գրության մեջ քարացած Աֆանասի Պետրովիչին թվում եր, թե վոտքերն արվում են:

Հանկարծ պրիստավը խոսեց: Թե դեմքը բացվեց, թե ծալքերը փախան ճակատի վրայից: Մորուքն ել կարծես ավելի փարթամ դարձավ:

— Վոչ, առանց հիմքեր ունենալու մի անգամից ձերբակալել չի կարելի: Զինված ուժել հրամայված ե գործադրել ամենածայրահեղ դեպքում: Իսկ մենք այլ կերպ կանենք: Յես կխոսեմ կազակների հարյուրյակի պետի հետ: Իսկ դուք... ստուգի իմացեք նրա, վո՞նց ե անունը...

— Ադրիան:

— Այո, Ադրիանի արտաքին նշանները... Այս-ու... Մենք դա այլ կերպ կանենք: Կհարկագրենք նրան դիմադրել և կուի ժամանակ... հասկանում եք... Գնացեք:

Փողոցը, վորին նայեց պրիստավը, այժմ արդեն գարնանալին թվաց: Սերյուգինը մտավ սեղանատուն, ուր սեղանի վրա դրված նրան ելին սպասում սուրճը և թխածոները:

#### 4.

Յերկինքը զարմանալի կապույտ եր: Վառ լուսավորում եր դարձնանալին արկը:

Փողոցով գնում ելին մարդիկ: Փայլում ելին ամեն գույնի շապիկներ. ծփծփում ելին կարմիր դրոշակները:

Բանվորները քայլում ելին կարգով, կուռ շարքերով, ինչպես լավ վարժված զինվորներ: Շնչում ելին ամբողջ կրծքով:

Յեվ հանկարծ յերկինքը դողաց ու լսողություն կտրեցին քարերը: Հազարավոր կրծքերից դուրս թռավ նույն ձիչը, նվաճեց ողբ և դարձավ հզոր յերգ:

— Վոչ-վո՞ք չի տա մեր փրկությունը,

Վո՞չ խենթ հերոսը, վո՞չ արքան.

Մենք պետք ե մեր ազատությունը

Կուենք ձեռքով մեր սեփական...

Ադրիանը քայլում եր առաջին շարքերում: Նրա յետելից ընթանում եր մարդկանց գետը:

Մարդ զվարթանում եր մտածելով, վոր այսոր ամեն տեղ, ուր միայն ծխում են ֆաբրիկաներ ու գործարաններ, այ, հենց այսպես, ընթանում են բանվորները: Յեվ վո՞չ թե միայն Ռուսաստանում, այս արտասահմանում, ամբողջ աշխարհում: Ցանկություն եր առաջանում ավելի բարձր բարձրացնել դրոշը և նրանով սպառնալ բարձեն աներին ու պալատներին:

Իսկ յերբ կպալթի մեծ փոթորիկը

Յեվ կուշտ չները չքանան—

Նորից յերկիրը և յերկինքը

Մերն են ու մերը կմնան...

Յեվ հանկարծ այստեղ, ուր խաչակինքվում են փողոցները, ամբոխը կանգ առավ: Մի յերկու տասնյակ վոստիկաններ, պրիստավի գլխավորությամբ, կենդանի ցանկապատ ելին կազմել և չելին թողնում առաջ:

Սերյուգինը համոզում եր.

— Խնդրում եմ ցրվել: Առանց իշխանության թուլտվության ցուցերն արգելված են որենքով: Խնդրում եմ ցրվել: Լսում եք, պարոններ:

— Ինչու ցրվել, գոռաց ամբոխը, ինչու մեզ չեք թողնում:

Սա ինչ բռնություն ե: Մենք խաղաղ ցուց ենք անում:

— Խնդրում եմ, պարոններ, ցրվել, հատու պահանջեց Սերյուգինը:

— Մենք ինչ պարոններ ենք քեզ համար...

— Դե, ինչ եք դրան լսում... Քշեք, տղերք...

Կենդանի պատը շարժվեց: Շարքերն իրար յեկան, խտացան, և գլուխների հորձանքում սուզվեց պրիստավն իր վոստիկաններով:

Իսկ յերգը հնչում եր.

Սա յե մեր

Վերջին կոփվը

Յեվ պականը մեր մեծ,—

Ինտերնացիոնալը

Աշխարհը կփրկե...

Բայց ահա պատահեց մի բան, վոր միանգամից հուզեց ամբոխին, Մայթերը դղրդացին մի հարյուրյակ ձիերի ամուր սմբակների դոփունից: Հողմի պես վրա թռավ գազանալին մրրիկը սուլոցով ու հայուանքներով, ոդում յերևացին խարազաններ...

Կազակների սպան տեսավ Աղբիանին։ Նա ամուր պահել եր իր հիշողության մեջ «խռովարարի» արտաքին նշանները։ Բայց այդ բանը նկատեցին բանվորները և ամուր ողակով շրջապատեցին։ Աղբիանին։ Տամնակ կոշտացած ձեռքեր կախվեցին ձիու սանձից և ձին յետեռով նստեց մայթի վրա։ Կազակը գնդակի նման թռավ թամբից, իսկ շուրջը դժմում եր բանվորների ծիծաղը, ցնցելով ոգը։ Աղբիանը նստած եր ընկերների ուսերին և գոռում եր սեղմվող ամբոխին։

— Ցըվեցեք կողքի փողոցներով, տարեք դրոշակները և հաստատ շարքերով, վոչ-վո՞ի ձեռք չտալով, վերադարձեք ձեր դործարանները։

Ամբողջ որը քաղաքում դես ու դեն ելին ընկնում կազակները, մեկ այստեղ, մեկ այնտեղ ցըելով ցուցարարներին։ Իսկ ամբոխը հորդում եր փողոցներն ու նրբափողոցները, գարնանային ողը լի-զում եր կարմիր դրոշակները, և թնդում եր հզոր յերգը, ձգտելով դեպի հեռուն, դեպի արևը։

— Իսկ մենք, ճորտեր ու բանվորներս

Ունենք անխախտ մի իրավունք...

Վատ քնեց այդ գիշեր պրիստավ Սերյուդինը։

— Ի՞նչպիսի բանվոր եր Աղբիանը յել նա ի՞նչո՞ւ յեր կարողանում գրավել բանվորների համակրանքը։

— Ի՞նչ միջոցներով եր նա տարածում կուսակցական գաղափարները։

— Բնորոշեք պրիստավ Սեվյուգինին. վորո՞նք եյին նրա բնավորության գլխավոր գծերը։

— Ի՞նչ միջոցներով եր նա ձգտում չեղոքացնել Աղբիանին։

— Ի՞նչո՞ւ այդ նրան չհաջողվեց։

— Համեմատեցեք ձեր տեսած մասյիսմեկյան տոնակատարություններն այստեղ նկարագրվածի հետ-վո՞րն ե ամենահիմնական տարբերությունը։

Վ. ԲՐՈՒՍՅԱՆԻՆ

## ՀՈՒՆՎԱՐԻ 9-ը

Նոր տարուց մի որ առաջ Պետերբուրգ յեկավ Ֆիլիպ Զախարիչ սլավին։ Մի ամբողջ որ նա վոտով գալիս եր մինչև մոտակա կայսրանը, վագոնում ևս մի ամբողջ որ ձանձրանում եր և միշտ միտք եր անում իր վորդու՝ Պյոտրի մասին և թոռների, վորոնք ապրում ելին Պիտերում։ Պյոտրի հոգալ շատ ե՝ ընտանիքում հաց ուտողները շատ են, իսկ աշխատավորներ միայն յերկուսն են՝ Պյոտրն ու Ֆիլիպ Զախարիչը, բայց, գե, ծերուկն ի՞նչ ոգնություն կարող ե հասցնել ընտանիքին։

Իսկ թոռները։ Մի տարի առաջնրանք գյուղ յեկան, ուրախացրին իրենց հորն ու պապին, իսկ հիմա նրանցից վոչ մի լուր չկա... Տոնի առթիվ փող չեն ուղարկել և կարգին չեն ել գրում, թե վհնց են ապրում։ Այ, հենց այս պատճառով ել Ֆիլիպ Զախարիչին, իբրև նա պարկը ուսին դուրս յեկավ կայսրանից և կամացուկ ընթացավ նկակի պողոտայով։

Բավականին ժամանակ թափառեց Ֆիլիպ Զախարիչը Պետերբուրգի նեղ ու լայն փողոցներով ու նրբափողոցներով, մինչև հասավ այն փողոցին, ուր ապրում ելին թոռները։ Նա գտավ և տունը, վորի պատերի ծեփը թափթված եր և բակի դոների վրա կար տրակտիրի ցուցանակ։

Տանտիրուհին, վորի մոտ ապրում ելին Նիկալայն ու Իվանը, սիրալիր գիմավորեց ծերուկին։ Նա ինքը միենույն նահանգից ե և հարեան գավառակից։ Այդ յերիտասարդ, ժիր կնոջ ամուսինը Նիկալայի և Իվանի հետ աշխատում է գործարանում և քրեհով ե տալիս իր նեղիկ սենյակը յերկու յեղբայրներին և ելի յերկու ընկերների, նույնպես բանվորների։

— Հոգնել ես... Դե գնա ընի Իվանի ու Նիկալայի թաղտի վրա, — ասաց տանտիրուհին և ավելացրեց. — Նրանք մի անկողնում ելին քնում, այս...

Պառկեց Ֆիլիպ Զախարիչ պապին թոռան անկողնում, և քնեց ծերուկը նոր, անորոշ մտքերով:

Սենյակի կիսախափարում մեկը բայլում եր:

— Պապի... Ֆիլիպ Զախարիչ... եղ դժւ յես...

Ծերուկի առջև կանգնած եր բարձրահասակ, բարեկազմ մի պատանի՝ բանվորական բլուզով: Պատանու դեմքը թուխ ե, չհս հասկանում՝ արեառությունից, թե գործարանի հիսից, ճակատից յետ են սանրված դանդուր մաղերը:

Ճանաչեց պապն իր թոռ Իվանին և շտապեց իջնել անկողնից: Նրանք սրտաբաց վողջագուրվեցին:

— Այ, յեկել եմ,—սկսեց ծերունին,—ձեզ տեսնելու... քեզ ու Նիկալային... Պյոտրը բարեւում եր, ձեր մայրը, բոլոր ազգականները... Պյոտրը նեղանում եր, վոր տոնի առթիվ փող չեք ուղարկում...

Շուռ տվեց պատանին իր դեմքը ծերուկից, բայց վոչինչ չասց: Իսկ հետո նստեց թախտի վրա, նրա կողքին, և նայեց նրա գորշ աչքերին: Յեվ հանկարծ ենակես տաքացավ ու լավ զգաց իրեն Իվանի հոգին:

— Իսկ Նիկալայը, ի՞նչ ե, քեզ հետ ե ապրում... Տես, ուշացավ զավոդումը: Արի տես, վոր ձեր աշխատանքը դժվար ե...

Ծերուկը սրտառ նայում եր և հա ուզում եր ինչ-վոր բան հարցնի. նա ուզում եր իմանալ, թե ինչու թոռները փող չեն ուղարկել տոնի առթիվ:

— Փողի մասին, պապի, ասեմ, վոր... Եստեղ, գիտես, Նիկալայի գործը մի քիչ թարսվեց... նստացրել են նրան:

— Նստացրել են... Բանտ...

Ծերուկը կարծես անակնալ կերպով բաց թողեց այդ բառերը: Նրա աչքերին փայլեցին արցունքներ: Լոռությունն ոգնեց Իվանին ուշքի գալու շփոթմունքից: Նա ավելի մոտ նստեց ծերուկին և շարունակեց.

— Դու գուցե մտածում ես, վոր Նիկալայը թալանել ե մեկին, կամ բան գողացել... Մեր զավոդի գործերի համար են նրան նստացրել: Մեր զավոդում գործադուլ յեղավ, և մենակ Նիկալայը չի նստած: Շատ մարդ ե նստած...

Ծերուկն ուշադրությամբ լսում եր թոռան պատմությունն այն մասին, թե ի՞նչպես ելին ապրում բանվորները վերջին ժամանակ՝ ներս, ի՞նչ ելին ուզում ձեռք բերել ձեռնարկության տերերից, ի՞նչպես ելին ձգտում դրան և այժմ ել ի՞նչ են անում: Յեվ ծերուկին թվում եր, վոր Իվանը խոսում ե ինչ-վոր նոր բառերով և նոր

բանի շուրջը, վորի մասին ինքը յերբեք չի լսել: Իսկ յերբ նրա թոռը լսեց, ծերուկն ասաց.

— Ասում ես զավոդի գործերի համար... Դե, եղ ուրիշ բան ե: Ծերուկի խոսքերը տաքացրին Իվանին, և նա կրկին սկսեց խոսել բանվորների և նրանց պալքարի մասին:

— Սպասիր, այ, շուտով ինքդ ել կտեսնես... ամեն բան կտեսնես...—խորհրդավոր կերպով ավելացրեց բանվորը.—Պիտերում բոլոր բանվորները գործադուլ են անում, ինչպես մի մարդ:

Իվանի գուշակությունը կատարվեց: Զանցավ և մի շաբաթ, յերբ Պետերբուրգի բոլոր բանվորները գործադուլ արեցին: Առավտից մինչև յերեկո բանվորական թաղերի փողոցներն ու նրբափողցները լիքն ելին ժողովրդով: Բանվորները խոնվում ելին Փարիկաների ու գործարանների մոտ, իսկ գործարանային բակերը դատարկ ելին. դադարեցին ծխալուց գործարանային ծխնելուզները և իրիկունները գործարանային հսկա շենքերը չելին լուսավորվում կրակով: Լուցին մեքենաները, սառեցին հսկալական կաթսաների վառարանները, և միմիայն բանվորների սրտերն ելին, վոր բոցավառվում ելին նոր ցանկություններով:

— Այ, պապի, չես ուզում գնալ ժողով ու լսել, թե ի՞նչ ե ասում հայր Գապոնը:

Համարյա ամեն յերեկո բանվորները ծերուկին ժողովի ելին կամնչում, բայց նա միշտ մերժում եր այն մարդկանց առաջարկը, վորոնք ինչ-վոր նոր բանի ելին հավատում:

Յեվ վերջապես Ֆիլիպ Զախարիչը համաձայնվեց գնալու ժողովի:

Յերկար նրանք գնում ելին կիսամութ փողոցներով դեպի այն տունը, վորի մեջ գանվում եր «Պետերբուրգի բանվորների ժողովների» բաժանմունքը:

Մոտենալով տանը, ծերուկը, մյուս ուղեկիցների հետ միասին, ընկալ մարդկանց իմաստ մեջ, վորոնք բոլորն ել ձգտում ելին միևնույն տեղը, միևնույն նպատակին: Ամբոխում Ֆիլիպ Զախարիչը տեսնում եր ծերունիների, մուրուքափոր բանվորների, բանվորունիների, իր թոռան նման յերիտասարդ տղաների, քաղաքի զգեստ հագած ինչ-վոր պարունների:

Կենդանի մարդկանց ալիքը վողողում եր տունը և, սեղմվելով, լցվում նեղիկ շինության մեջ: Բարձրության վրա կանգնած եր Գապոնը: Զախ ձեռքով նա սեղմում եր կրծքին խաչը, իսկ աջ ձեռքը պարզված եր գեպի հավաքվածները:

— Բնկեր բանվորներ,—ասում եր Գապոնը, — Ես նորից յեկել եմ ձեզ մոտ, վորպեսզի հիշեցնեմ կանքի այն անարդարության

մասին, վորք ճեղում ե աշխատավոր մարդկանց և նրանց հեռացնում ե ցանկալի յերջանկությունից...

Սկսելով իր ճառը ցածր ձախով, բայց հաստատամտությամբ, քահանան իր ճառի յուրաքանչյուր նոր նշանակալից խոսքի հետ մեկտեղ բարձրացնում եր իր ճանրը և նրա շարժումները դառնում ելին ավելի ու ավելի կրքոտ ու համարձակ, բայց նրա ճանրը մեզմ շեշտեր եր ընդունում, յերբ նանպատակ եր դնում ցնցել լսողներին:

Բանվորների մասին ծերուկը առք խոսք լսեց և լսած խոսքն անվանեց «Ճշմարիտ»: Գյուղի մասին ևս խոսեց Գաղոնը, և նորից ծերուկը նրա խոսքերում ճշմարտություն եր գտնում: Կարծես վերածնված, կամ տասնյակ առարով յերիտասարդացած՝ Ֆիլիպ Զախարիչը գնում եր տուն:

Ծերուկն իմացավ այն ամենի մասին, վոր մտածել եր անել ժողովուրդը եղուց. կիրակի, հունվարի 9 ին, ժողովուրդը վորոշել եր գնալ ցուի մոտ և ասել իր ամրողջ կանքի մասին: Յեվ Ֆիլիպ Զախարիչին արնքան հասարակ և սովորական եր թվում այդ միտքը՝ գնալ ցարի մոտ և ասել նրան կանքի ամրողջ անարդարության ու դժվարության մասին: Յեվ ծերուկին պատկերանում եր, վոր ինքն ել կզնա ժողովրդի հետ և կասի ամբողջը, թե ինչպես կարգածաւերը նրանց տանջում ե և ավելացրել ե կապալավարձը, թե ինչպես դժվար ե ապրուսաը գյուղում:

Ժողովուրդը տանջվել ե, հոգնել ե կանքից: Մեկը պետք ե լինի, վոր ասի ցարին, թե ինչպես ե ապրում ժողովուրդը...

Կիրակի, հունվարի 9-ին, Ֆլորոր Վասիլիկիչի բնակարանի բուրը բնակիչներն արթնացան շատ կանուխ, յերբ դեռ նոր եր սկսել բացվել հունվարիան առավոտը:

Յեվ Ֆլորոր Վասիլիկիչը, և իվանը, և նրա ընկերները յեռանդուն կերպով լվացվեցին, սանրվեցին, սնկուկներից և պայտուսակներից հանեցին նոր շապիկները, մաքուր պիջակները և անդրավարտիկները: Յերիտասարդությունը յերկար զբաղված եր կոշիկները վաքսով մաքրելով, մաքրում եր նաև պիջակները, վերարկուները, գլխարկները: Ֆիլիպ Զախարիչ պապին ևս փոխեց իր շապիկը և վոտի փաթաթանները:

Մի առանձնակի գործնական շտապողականությամբ իվանը և իր ընկերները վերջացրին թելը և գնացին: Վեր կացան նաև Ֆիլիպ Զախարիչն ու Ֆլորոր Վասիլիկիչը:

Դուրս գալով փողոց, Ֆիլիպ պապին ու նրա ուղեկիցներն առագ սուզվեցին մարդկային կենդանի հոսանքում: Մի կողմ ելին գնում գյուղացիք, կանալք, ծերունիները և պառավելում:

յերեսում ելին կանալք՝ ծծկեր յերեխաներով: Մի մարդ գնում եր հենակներով, ճանապարհ տալով առողջներին, շուրջը նայելով և ինչ-վոր բանի համար հառաջելով: Իր վոտքի համար եր արդյոք հառաջում, թե այլ բանի – անհայտ եր:

Փողոցով գնում ելին մարդիկ տոնական զգեստներ հապած և ավելի շատ լոռում ելին, իսկ թե խոսում ել ելին, նրանց խոսակցությունը հանդարա եր և անքան լուրջ, վոր վհչ-վոքի գեմքին ժայռ չելիք տեսնի: Մարդկային ամբոխը թափվում եր ավելի լայն փողոցները, հավաքվում եր անկյուններում ու փողոցների խաչաձևման տեղերում, և, կարծես հրամանով, գեմքերը մի կողմ ելին դարձնում և ընթանում խիտ շարքերով, անկարգ, բայց խիտ շարքերով: Յեվ վորքան հեռու ելին գնում, անքան ավելի ու ավելի ելին հոսում կողքի փողոցներից մարդկային նոր ամբոխներ, բռնում ելին լայն պողոտան, լցնելով մայթերը և փողոցի մեջտեղը: Յեվ գնում ելին մի կողմ, ինչպես գարնանալին վտակները ծուլվելով թափվում են մի գետի մեջ:

Հեռվում, պողոտայի մեջտեղը, Ֆիլիպ Զախարիչ պապին տեսավ խաչվառները, վոր ծփծփում ելին ողում, և շատպեց առաջ: Յեվ բղավում եր պապին, հրմատկվելով ամբոխում, ալեհեր գլուխը բաց:

Ահա նա անցավ բազմահազար ամբոխի առաջին շարքերը և բռնեց մեծ սրբապատկերի յեզրից:

Բոլորը գնում ելին ինչ-վոր հանդիսավոր լոռությամբ: Յեվ միայն ծծկեր յերեխաները տեղ-տեղ խանդարում ելին մեծ, անընդհատ ամբոխի լոռությունը, կարծես մանկական անմեղ ձախներով ավետելով կանքի լուսավոր ճշմարտությունը, ժողովրդական հոգու վառ ուրախությունը:

Հանկարծ վողջ ամբոխն ինչ-վոր տարորինակ ձեռվ ծփաց և իրար խառնվեց առաջին շարքերում: Յեվ կրկին շարժվեցին մարդիկ, չտեսնելով, թե այստեղ, առաջին շարքերում ինչը խանդարեց մարդկային գլուխների, վոտքերի ու ձեռների հոսանքին:

Յեվ կրկին ցնցվեց ամբոխը: Ու կրկին կարծես մեկը խանդարեց առաջին շարքերին: Ֆիլիպ Զախարիչ պապին առաջ անցավ կարմիր թաշկինակներով գլուխները կապած կանանցից, մի ինչ-վոր տղայի մի կողմ հրեց և ուզեց տեսնել, թե եդ ինչը կանգնեցրեց մարդկային մարմինների կենդանի հոսանքը:

— Գնացեք, բարի մարդիկ, առաջ գնացեք, — դողում եր ծերուկի աղոթանման-հանդարա ձախնը, վոր կարծես գուրզուրում եր բոլոր նրանց, ովքեր մոտ ելին կանգնած Ֆիլիպ Զախարիչ պապին:

Ամբոխը շարժվեց։ Յեվ նորից լոռություն։ Յեվ նորից լսվում են մանկական լացը։ Նորից ամբոխը դողաց ու որորվեց։ Ոգում սուրացին ինչ-վոր տարորինակ-անհասկանալի, չարագուշակ հնչյուններ։

Յեվ նորից ամբոխի վրայով սուրացին տարորինակ-յերկարաձգվող հնչյունները, չարագուշակ, սարսափեցնող հնչյունները... Ինչ-վոր մի բան անսպասելի կերպով թնդաց այնտեղ, առջեռման ամբոխը յետ ցնցվեց։ Ինչ-վոր մեկը ճշաց... Ելի մեկը ճշաց... Մեկը հառաչեց... ու նորից հառաչեց։

Առջևի շարքերը նոսրացան։ Ֆիլիպ Զախարիչը բարձրացրեց գլուխը և չուգունե կամուրջի լայն կոկորդում տեսավ զինվորների շարքերը՝ դեպի հողը թեքած հրացանների փողերով։ Ահա նա վագեց բոլորից առաջ և բացականչեց։

— ՏԵՇՐԸ ՃԵԿ ՀԵՏ... ՈՒՐ ԵՔ ԿՐԱԿՈՒՄ...

Նորից ինչ-վոր բան դղրդաց ողում։ Ծխի ամպը ծածկեց կրակողներին։ Ֆիլիպ Զախարիչ պապին մի անդամ ևս ճշաց ինչ-վոր բան, ձեռքերը յերկինք բարձրացրեց, և գլխարկն ընկավ նրա ձեռքերից ու գլուխն իջավ կրծքին, սպիտակ, ալեհեր գլուխը... Ծունկի իջավ ֆիլիպ Զախարիչ պապին և չբարձրացավ... Նրա կողքին ընկավ ինչ-վոր մի կին... Մի քիչ հեռու ջղաձգորեն թափալվում եր մի տղա, այնքան յերիտասարդ, առանց աղվանազի, — թափալվում եր և ձեռքերը պարզում եր ինչ-վոր բանի, անհասկանալի յեր՝ դեպի յերկինք և ուզում պարզել ձեռքերը, թե ուզում ե վողջ հողը գրկել մահամերձ տառապանքով...»

- Ո՞վ եր Ֆիլիպ Զախարիչը։
- Ինչո՞ւ յեր նա բաղաք յեկել։
- Ովքե՞ր ելին նրա թոռները։
- Ինչո՞ւ ելին բանտարկել նիկալային յեվ ընկերներին։
- Ի՞նչ գիտեք Գապոնի մասին։
- Ի՞նչ եր մտածում Ֆիլիպ Զախարիչը մինչեվ ցարի մոտ գնալը։
- Ի՞նչ եր մտածում անգիտակից մասսան։
- Ինչո՞ւ նրանց սպասելիքները չիրականացան։

- Ո՞ւմ կողմն ե հեղինակի համակրանքը. ինչի՞ց ե դա յերեվում։

Ա. ՊՈԽԵԿԻՆ

### ԱՔՍՈՐՅԱԼ ԴԵԿԱԲՐԻՍՆԵՐԻՆ

Հպարտ ապրեցեք, ով աքսորչալներ,  
խավար հանքերում հեռու Սիրիրի.  
Հի կորչի իզուր աշխատանքը ձեր  
ու ձգութմները ձեր վեհ մտքերի։  
Հույսը — վշտերի քուլը հավատարիմ  
մութ անկյուններում գետնախորշերի՝  
ձեղ կպահպանի առույգ ու արի,  
և անշուշտ կգա որը բաղձալի։  
Մեր անկեղծ սերը կգա դեպի ձեղ,  
կհասնի մուալ փականքի միջով՝  
ինչպես աքսորի ձեր խշտիներին  
հասնում ե ձախս յերգիս ղողանջով։  
Յեվ կընկնեն մի որ շղթաները ձեր,  
բանտը կդառնա խղճուկ ավերակ,  
աղատությունը դեմ կվազի ձեղ,  
ու ընկերներից սրեր կստանաք։

Ա. Ի. ՈԴՈՅԵՎԾԿԻ

### ԹԱՏԱՍԽԱԱՆ ՊՈԽԵԿԻՆԻՆ

Գուշակող լարերի հնչյուններն հրավառ  
հասան մեր ականջին զողանջով քաղցրաբառ,  
գեղի սուր շարժվեցին մեր ձեռքերն շտապով,  
բայց նրանք քերծվեցին շղթալի յերկաթով։  
Սակայն մի հուզվիր զու, ով գուսան վոգելից,  
շղթայով — մեր բախտով — հպարտ ենք ալստեղ մենք.  
խավարչտին մեր բանտի փականքի յետելից  
մեր հոգում ծաղրում ենք ցարերին չարանենք։  
Զի կորչի ապարդյուն մեր ջանքը տանջալից,  
կալծերից հրդեհներ կժամթքեն լուսարձակ,  
ու համայն ժողովուրդ լուսավոր, գիտակից  
մի մեծ որ կխմբվի արնավառ դրոշի տակ։

Մեր ամուս շղթալից մենք սրեր կծուլենք  
և կրկին կվառենք ջահը մեր փրկության,  
նա ահեղ կթնդա ցարերի գլխներին,  
ու ազատ կհնչէ ժողովուրդը համայն։

### ԴԵՄԵԱՆ ԲԵԳՆԻ

«Լ Ե Ն Ա»

1912 թ. ապրիլի 4

(Բանվորների գնդականարումը Լենինում)

Փարզած իր փոքրիկ յերեխաներին՝  
մարդուն եւ ահա կինը սպասում։  
—Ո, մի սպասիր, նա յետ չի գալու,  
թշնամու գնդակն հատու յեր ու սուր։  
Նա լնկավ դաշտում, և վոչ թե մենակ.  
քո ավագ վորդին, մեռած աչքերով,  
դաժան թշնամու հարվածների տակ  
իր բանվոր հոր հետ պառկել եւ խռով։  
Յել շուրջը նրանց—ընկեր, բարեկամ  
ընկել են՝ կազմած ալ հողարլուր։  
և տաք վերքերից բանվորի արյան  
հեղեղն և հոսում կարմիր ու հուրչուր։  
Փալում եւ գարնան արել պայծառ։  
չի պատժի աստված չարագործներին...  
— Յեղբայրներ, ո, թաղ անիծվի նա հար,  
ով վոր մոռանա այս որը խալար,  
ով այս արյունը թշնամուն ների։

— Տալիս եւ արդյոք այս բանաստեղծությունը Լենայի գնդակահարության պատկերը։

— Ինչո՞ւ յե հեղինակն ասում, վոր «աստված չի՝ պատժի հանցագործներին»։

— Բացատրեցեք ծեր խոսքերով բանաստեղծության վերջին յերեք տողը։

### Գ. ԳԱԼԻՒԱՑԻՑ

ԱՆՏՍՈՒԾ ԿՏՐՈՒՄ Են...

Կտրում են անտառի դալարուն ծառերը,  
խոկ պառավ սոճիները, խոճերով լեցուն,  
անբառառ որորում են զառամլալ գլուխները  
և նայում են սառը յերկնքի հեռուն։  
Անտառը կտրում են... Գուցե այն պատճառվ, վոր

զարթոնքի կանչեց նա վաղ արշալուսին,  
վոր մատաղ սաղարթով իր համարձակ յերգում եր  
ազատության ու արեկ մասին։  
Անտառը կտրում են... Բայց հողը պահում ե սերմերը,  
կանցնեն տարիներ, և—կյանքի նոր ուժով հրահրան  
կրկին պարիսպի պես բարձրացած ծառերը  
կլշան յեղբայրական շիրիմի վրա...»

— Ի՞նչ ե հասկանում հեղինակը «անտառ» ասելով։  
— Վերլուծելով ամբողջ բանաստեղծությունն ըստ բովանդակության  
վորոշեցեք, թե վորքան հաջող ե զարգացնում հեղինակն իր այդ հիմնական  
պատկերը։  
— Վորպիսի տրամադրություն են արթնացնում բանաստեղծության  
վերջին տողերն ընթերցողի մեջ։

### ՆԻԿՈԼԱՅ ԿԼՅՈՒԹԵՎԻ

\* \*

«Վորպիս ճորտ անլեզու  
յես շիրիմ կմտնեմ,  
փայտե ցուրտ խաչի տակ  
իմ բախտը կգտնեմ»։

Այս յերգն եր միշտ յերգում  
հայրս սև կյանքի դեմ,  
մեռնելիս պատվիրեց,  
վոր յես այն ավարտեմ».

Սահայն յերգս հայրերի  
հառաջով չե՛ հնչի,  
այլ հողմի շաշունով  
աշխարհից կթռչի».

Վո՛չ վորպիս ճորտ ճորտ,  
այլ պատ արծվի պես  
կյանքի յերգը նզոր  
կավարտեմ հիմա յես».

— Վո՞րն ե հոր և վորդու յերգերի տարբերությունը։  
— Ի՞նչն ե հնարավորություն տախս վորդուն լավատես լինելու։  
— Համեմատեցեք հոր և վորդու յերգերի պատկերները, թե  
համապատասխանում են արդյոք դրանք նրանց տրամադրություններին։

ՀԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Վանիս.—Ո՞վ և շինել այս ճանապարհը:  
Հայրը.—Կոմս կլեյնմիթելը, սիրելիս:

Ո, բարի հայրիկ, ինչու յեք խարռում  
ձեր վորդուն խոսքով այդ նսեմ,—  
թուլ տփեք լուսինի ցոլքերի ներքո  
յես նրան ճիշտը ասեմ:

Եշխատանքն այդ, Վանյա, սոսկալի դժվար եր,—  
չեր կարող շինել դա մի մարդ:  
Եշխարհում մի արքա կա, այդ արքան անողնք ե—  
Սովոր և անունը նրա:

Նա բանակներ ե վարում, ծովերում նա  
շարժում ե նավերը, դաշտում  
քշում ե գութանը և անդուլ հսկում ե,  
ուր աշխատանքն ե իշխում:

Հենց նա յել քշել ե այստեղ մասսաները,  
շատերը զաժան պայքարում,  
կյանքի կոչելով անպտուղ այս չոլերը—  
մեռել են այս գորշ քարերում:

Ճանապարհն ուղիղ ե. նեղիկ բլուրներ են,  
կամուրջներ, ուելսեր ու սյուներ,—  
իսկ յերկու կողմերիցը, նայի՞ր՝ վոսկորներ են...  
Հասկանում ես, Վանյա,—ինչքան են ընկել...

Լսում ես, լսում ես ահավոր կանչերը.  
Գոփում են, ատամ կրծքում,—  
տեսնում ես՝ ամբոխ ե, անթիվ մեռելներ են...  
ինչքան են, ինչքան են—իմանում ես դու...

Նրանք մերթ կտրում են յերկաթ ճանապարհը,  
վազում են, ուզում են հասնել.  
Մոմ ես՝ յերգում են.—«Լուսյակ գիշերնի այս  
սիրում ենք գործը տեսնել:

«Մենք այստեղ տառապել ենք ցրտի ու հովի դեմ,  
հավիտան կորպած մեջքերով,  
ապրել ենք խուզերում ցուրտ, պայքարելի սովոր դեմ,  
մըսել ու թրջվել որերով:

«Մեզ թալանել են տասնապետ—գիտունները,  
ծեծել են տերերը, կարիքը ճնշել  
ամեն ինչ մենք տարել ենք, բայց հայետ մենք յեղել ենք  
խաղաղ վաստակի զավակներ:

«Յեղալիրներ, վայելում եք դուք հիմա մեր պտուղը,  
իսկ մենք մոխանում ենք հողում,—  
դուք արդյոք մեզ հիշում եք, մեզ արդյոք դեռ հիշում եք,  
թե մուացել եք վաղուց...»:

Զարսափես դու ամենի յերգից այդ—  
մեր յերկրի բոլոր ծալրերից  
հավաքված այդ խմբերը քո հալալ յեղալիրներն են՝  
անտուն ու զրկված գյուղացիք:

Ամսթ ե. ինչու յես հեռացնում հայացքդ.  
դու արդեն մեծացել ես, վհաքը հո չես.  
տեսնում ես՝ կանգնած ե հաղթանգամ գյուղացին մի—  
նա տեսնդից հյուծվել ե այնպես:

Շրթունքներն անարյուն են, կոպերը ընկել են,  
ձեռքերին վերքեր չորացած.  
վոտքերը ուռել են՝ նա ալգուս աշխատել ե—  
հավիտան ջրում կոացած:

Նրա կուրծքը փոս ե, այդ կրծքով նա բահը  
շարունակ սեղմել ե, հավիտան հրել.—  
դու նայիր նրան, Վանյա, ուշադիր նայիր դու՝  
դժվար ե այդ մարդը իր հացը ճարել:

Դու նայիր՝ այդ մեջքը, վոր հիմա կոացած ե,  
չի շտկել նա դեռ իր որում.  
լուռ կանգնած աշխատում ե, ժանդուած բահով իր  
նա հողն ե փորում ու փորում:

Նրանից այդ սերը դեպի աշխատանքը  
մեզ ել ե հարկավոր սովորել.  
դե որհնիր դու, Վանյա, այդ ազնիվ աշխատանքը,  
սովորիր մուժիկին սիրել:

Յեզ մի վհատիր մուժիկի համար դու.  
ինչքան չարչարանք ե արդեն նա կրել,—  
կրել ե նաև այս յերկաթ ճանապարհը  
և ինչքան ե, ինչքան ե կրելու նա դեռ:

Կրը նա ամբողջը—և կրծքով իր համար նա  
հարթի ճանապարհ լուսագես,—  
բայց ափսոս վոր, Վանյա, գեղեցիկ կանքին այդ  
չենք հասնի վոչ դու և վոչ յես:

Թարգմ. Ցե. 2.

## ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԼԱՑԸ

Անտարբերությամբ յերբ լսում եք դուք  
նզովքը կյանքում պարտված խեղճերի,  
դրա յետևից չեք լսում արգուք  
գանգատն ու լացը յերեխաների:

«Մանուկ հասակում ամեն արարած  
ապրում ե առանց ծանր զրկանքի,  
չի տեսնում յերբեք աշխատանք ու լաց  
ու խինդ ե քաղում իր մանուկ կյանքից:  
Միայն մեզ կյանքում, ախ, չվիճակվեց  
շրջել վոսկեծուփ, դալար դաշտերում.  
մենք անիմսեր ենք դարձնում անվերջ,  
ամբողջ որերով գործարաններում:

«Չուգունի անիմսը դառնում ե արագ,  
դզրդում, քամի փշում դհմքերիս,  
պտույտ ե գալիս մեր գլուխը տաք,  
պտույտ ե գալիս շուրջը ամեն ինչ՝  
քիթը անողոք, գաժան պառավի,  
վոր մեզ ե նայում ակնոցի տակից,  
դուռ ու պատուհան, ճանձերը պատի,  
և տախտակները խոնավ հատակի,  
պտույտ ե գալիս ամեն ինչ, — և մենք  
արձակում ենք խոր, հուսահատ մի ձիչ, —  
— Ո, կմնդ առ, պտույտ անողոք ու նենդ,  
թուլ տուր հավաքենք մեր ուշքը մի քիչ:

Այս գերության մեջ հոգնած, չարչարված՝  
ել սիրտ կմնա ցատկել-խնդալու, —  
թե մեզ թողնելին հիմա դաշտը բաց —  
կընկնելինք իսկուն խոտում — քնելու:  
Մենք ուզում ենք շուտ տուն վերադառնալ, —  
թեկուզ իզուր ենք տներս գնում.  
այնտեղ չենք կարող վիշտը մոռանալ —  
կարիքն ե այնտեղ մեզ դիմավորում:  
Այնտեղ հոգնատանջ գլուխները մեր  
գնելով մեր մոր չոր կրծքի վրա,  
դառը կոկիծով հեկիկում ենք մենք  
ու պատառութեամ խեղճ սիրտը նրա...»:

Թարգմ. Յ. Ա. Զ.



## ՔԱՂԱՔԻՆ

Իշխելով հովտում հաղթ ու կարող,  
յերկինք մեխելով հուրեր բորբոք:  
գործարանների ցեց փողերով  
շրջապատված ես դու անողոք:

Վողջ աղլուս, պողպատ և ապակի,  
փաթաթված ցանցով յերկաթալար,  
դու հիմա անխոնջ, կախարդ վոգի,  
դու չթուլացող մազնիս հու վառ:

Վորպես վիշտափիչ վիշտապ անթե  
նստած՝ տարիներն ես դու հսկում.  
իսկ յերակներում քո յերկաթե  
ցալտում ե զաղը, ջուրը հսսում:

Յեզ քո վորկորը միշտ անկշտում,  
դարերի տուրքով չի հագենում.  
չարիքն ե այնտեղ հար տրտնջում,  
աղքատությունն ե անեղ անքում:

Դու հնարագետ, դու կամակո՛ր,  
կանգնել ես վոսկա ապարանքներ,  
տաճարներ և պերճ, և փառավոր,  
դիզել նկարներ, կանալը, գրքեր...

Դու անհնազանդ, ինքդ ես կոչում  
գեղ ապարանքդ ամբոխն անքուն,  
ու սե միտինգին իշխան կարգում  
կարիք, խենթություն, ըմբոսառություն...

Կորացնում ես քո գերիներին,  
վոր մեքենաներն այն դարձգարձիկ  
թափով մոլեզին, զարկով դյուրին  
կոհն սալրեր սուր և ցոլացիկ...

Կախարդ հայացքով, նենգամիտ ոձ,  
կույր մոլեզնության անեղ պահուն  
դանակդ թունոտ և մահախոց  
քո վրա ի՞նքդ ես, ի՞նքդ ես քաշում...

ՑԱՆԿ

1. Մ. Կոլոսով	Տառներիք տարեկանը	3
2. Ա. Զեխով	Չորակում	20
3. Մ. Գորկի	Մանկություն	36
4. "	Ծառայության մեջ	40
5. Ա. Սերաֆիմովիչ	Հանքահորում	54
6. Ա. Բիբիկ	Առաջին որը գործարանում	60
7. "	Բանվորների շրջանում	66
8. Ա. Գարին	Բնկեր Աղբիանը	78
9. Վ. Բրույանին	Հունվարի 9-ը	85
10. Ա. Պուշկին	Աքսորյալ գեղաբրիստներին	91
11. Ա. Ի. Ռոյեվսկի	Պատասխան Պաշտինին	91
12. Գեմյան Բեդնի	Լենտ	92
13. Գ. Գալինա	Անտառը կտրում են	93
14. Ն. Կլույեվ	*	94
15. Շահումյան	Յերկաթուղին	96
16. Վալերի Բրյուսով	Քաղաքին	97
17. Նեկրասով	Յերեխաների լացը	



№  
ОБРАЗЦЫ  
ИЗ РУССКОЙ ЛИТЕРАТУРЫ  
Сост. Е. Чаренц



ԳԻՒԾ 55 Կ.

Հր. № 878, Գրառեալվար № 1783 (ր), Տիրաժ 8000  
Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում: Պատվիր № 60,

ՀՀ Ազգային գրադարան



NL0327150

15.365